

ՄԱՍ II

**ՀՀ ԳԱՍ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
2020 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ՝
ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**Ա. ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

2020 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թեյյան Լ.Գ. (համահեղինակ), Արդի հայերենի բառապաշարը, Ե., 2020, 174 էջ:

ԲԱՌԱՐԱՆ

Նոր բառեր, պրակ Ե (կազմողներ՝ Գալստյան Ա.Ս., Գալստյան Ս.Ա., Հակոբյան Ֆ.Ա., Հովսեփյան Գ.Կ., Սահակյան Ա.Գ., Մուշեղյան Ա.Հ.), Ե., «Գիտություն» հրատ., 2020, 175 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Առաքելյան Կ.Լ., Անվանի պատմաբանի բանասիրական պրպրտումներն իր վերջին մենագրության մեջ, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 2020, 1, էջ 265-273:
2. Առաքելյան Կ.Լ., Հականիշների ռճական կիրառությունը Նշան Պեշկեթաշյանի պատմվածքներում, Բանբեր հայագիտության, Ե., 2020, 2, էջ 209-221:

3. Ասոյան Թ.Ա., Ղևոնդ Ալիշանի երկերի լեզվական առանձնահատկությունները, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 9, Ե., 2020, էջ 30-36:
4. Ասոյան Թ.Ա..Գրական ստեղծագործությունների ուսուցման մի քանի առանձնահատկությունների մասին (ըստ Գր. Զոհրապի «Երջանիկ մահը» նորավեպի), ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 9, 2020, էջ 337-345:
5. Բարսեղյան Ա. Գ., Տեքստի կապակցման միջոցները Վ. Իսահակյանի «Հայրս» հուշագրական վեպում, «Լեզու և լեզվաբանություն», 2020, 1, էջ 55-61:
6. Բարսեղյան Ա.Գ., Ներտեքստային կապը զուգորդման կանխենթադրույթի միջոցով, ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, 8, Երևան, 2020, էջ 272-279:
7. Թեյլան Լ.Գ., Բառապատճենումները արդի հայերենի բառապաշարում, «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ». Հանրապետական գիտաժողովի և յուրեր, ԵՊՀ, Հայոց լեզվի ամբիոն, Ե, 2020, էջ 65-85:
8. Թեյլան Լ.Գ., Շարահյուսագիտական մի քանի դիտարկում, «Լեզու և լեզվաբանություն», 1 (22), «Լուսակն» հրատ., Ե., 2020, էջ 38-47:
9. Թոխմախյան Ռ.Կ., Տիոյան Ս.Կ., Հայերենի ձայնավորահանգ բառերի ձևային նկարագրություն, «Ջահուկյանական ընթերցումներ» հայերենագիտական միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., «Գիտություն» հրատ., 2020, էջ 173-181:
10. Ղամոյան Լ.Ա., Պատմական համանունությունը «հագուստ» իմաստային դաշտում, Բանբեր Երևանի համալսարանի, 3(33), ԵՊՀ, 2020, էջ 90-97:
11. Ղամոյան Լ.Ա., «Հագուստ» իմաստային դաշտը նորակազմ բաղադրություններում, «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ» գիտաժողովի նյութեր, ԵՊՀ, էջ 105-120:

12. Ղամոյան Լ.Ա., Բառայի տարբերակներ «հագուստ» իմաստա-
յին դաշտում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 9, 2020,
էջ 279-285:
13. Ղամոյան Լ.Ա., «Հագուստ» հասկացություն նշող փոխառու-
թյունները միջին հայերենում, Պատմաբանասիրական հանդես,
2, 2020, էջ 158-168:
14. Ներսիսյան Վ.Ա., Բառակազմության հարցերի քննությունը Ար-
սեն Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար
կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ, ԳՊՀ գիտական
հոդվածների ժողովածու, 9, 2020, էջ 218-229:
15. Ներսիսյան Վ.Ա., Լեզվի պատկերավորման միջոցները Գևորգ
Բաղդիշյանի «Մուսալեռցի պապս» խոհագրության մեջ, ԳՊՀ
գիտական հոդվածների ժողովածու, 8, 2020, էջ 265-272:
16. Պապիկյան Ս., Տերմինաբանության հարցեր, ԳՊՀ Գիտական
հոդվածների ժողովածու, 8, 2020, էջ 285-293:
17. Սաֆարյան Տ.Վ., Ներկայիս սոցցանցերում լատինատառ հայե-
րեն գրության սխալ ձևերի մասին, «Լեզու և լեզվաբանություն»,
2 (23), Ե., «Լուսակն» հրատ., 2020, էջ 43- 50:
18. Ֆիշենկճեան Ա.Ա., Արեւմտահայերէնի խօսքի մասերու քերա-
կանական կարգերու քննութիւն (անորոշ ածական թէ՛ անորոշ
դերանուն), «Ձահուկյանական ընթերցումներ» հայերենագիտա-
կան միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., «Գիտություն»
հրատ., 2020, էջ 145-157:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

**Առաքելյան Կ., Անվանի պատմաբանի բանասիրական
պրպտումներն իր վերջին մենագրության մեջ (հոդված)**

Իր երկրային կյանքի մայրամուտին՝ 2016 թ., ականավոր
պատմաբան ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանն ընթերցո-

դի սեղանին դրեց վերջին մենագրությունը՝ «Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմության X-XIV դդ.», աշխատությունը, որը նվիրված է նշված ժամանակաշրջանի հայ մշակույթի պատմությանը: Պատմաբանի մոտեցմամբ դիտարկվում է տնտեսական-քաղաքական կյանքը, ներկայացվում են կրթության, գիտության, բանասիրության, բնական գիտությունների, արվեստի տարբեր ճյուղերի՝ երաժշտության, կերպարվեստի, ճարտարապետության, կիրառական արվեստի և այլն, զարգացման ընթացքը և փոխկապակցվածությունը՝ հանգեցնելով ուշագրավ եզրակացությունների:

Հոդվածում հատկապես քննվում է գրքի բանասիրական ժառանգությանը նվիրված հատվածը, որը լավագույնս է արտահայտում ժամանակաշրջանի ոգին, երբ գրական ստեղծագործությունների հիմնական թեմաներ դարձան սերը, գեղեցկությունը, հայ ժողովրդի հոգևոր կյանքը, ազատությունը, արդարությունը, արժանապատվությունը, աշխատանքի գովերգումը, մարդասիրությունը և այլն: Երկրի հոգևոր, քաղաքական ու տնտեսական իրավիճակը նպաստավոր հիմք էր ստեղծում արվեստի և գրականության զարգացման համար: Բնավ պատահական չէ, որ հենց այս ժամանակաշրջանում է ամբողջացել հայ ժողովրդի հերոսական էպոսը՝ «Մասնա ծոերը», իսկ Նարեկա վանքի հռչակավոր վանականը երկնել իր անկրկնելի Մատյանը:

Հոդվածում նշվում է, որ Վ. Բարխուդարյանն անդրադարձել է այդ ժամանակաշրջանում կատարված քերականական մեկնություններին, մասնավորապես Հովհաննես Երզնկացու աշխատություններում առկա մեկնություններին, որոնք ստեղծվել են նախորդ հեղինակների աշխատությունների հիման վրա:

Գրքի կարևորությունն ընդգծվում է նաև նրանով, որ այն ընդգրկում է քննության առնված նյութի շատ լայն շրջանակ և կարող է օգտակար լինել ոչ միայն պատմաբաններին, այլև բանասերներին, մանկավարժներին, տնտեսագետներին, բնագետներին, արվեստաբաններին և այլ մասնագիտությունների տեր ան-

ձանց՝ հիմք դառնալով նոր ուսումնասիրությունների ու հետազոտությունների:

Առաքելյան Կ., Հականիշների ոճական կիրառությունը Նշան Պեշկեթաշյանի պատմվածքներում (հոդված)

Հոդվածը նվիրված է սփյուռքահայ անվանի երգիծաբան Նշան Պեշկեթաշյանի պատմվածքներում առկա հականիշների ոճական -երգիծական կիրառություններին: Նշվում է, որ երգիծաբանությունը հայ գրականության պատմության մեջ զարգացման գագաթնակետին է հասել XIX-XX դդ. հատկապես արևմտահայ երգիծաբանության կարկառուն ներկայացուցիչների՝ Հ. Պարոնյանի, Եր. Օսյանի շնորհիվ: Արևմտահայ գրականության ավանդները շարունակեցին սփյուռքահայ գրողները, իսկ այս ասպարեզում իր մեծ նախորդների գործի փայլուն շարունակողը եղավ Ն. Պեշկեթաշյանը: Նրա ստեղծագործություններում երգիծանքը դրսևորվել է արձակի ամենատարբեր ժանրերում՝ ակնարկ, պատմվածք, վեպ, թատերախաղ և այլն: Պեշկեթաշյանը դիմել է երգիծանքի բոլոր տեսակներին, որոնք արտահայտելու համար ընտրել է զանազան միջոցներ:

Հակառակ սփյուռքահայ գրականության ամենապայծառ ներկայացուցիչներից մեկը լինելու հանգամանքին՝ Ն. Պեշկեթաշյանը ցարդ հատկապես հայրենիքում մնում է քիչ ծանոթ և ուսումնասիրված, իսկ նրա լեզվական արվեստի մասին, կարելի է ասել՝ ոչինչ գրված չէ: Հոդվածն այդ բաց լրացնելու մի համեստ փորձ է: Նշան Պեշկեթաշյանի պատմվածքներում երգիծանքի լեզվական միջոցները բազմազան են ու բազմաբնույթ: Նրա գեղարվեստական արձակի լեզուն մասնավորապես հազեցած է համագործածական բառաշերտին պատկանող բառերի ոճական կիրառություններով, որոնց մեջ իրենց առանձնակի տեղն ու դերն ունեն հականիշները: Պեշկեթաշյանը հաճախ է դիմել լեզվական և խոսքային զանազան հականիշների գործածությանը, կիրառել է ոչ

միայն միևնույն խոսքի մասին պատկանող, այլև տարբեր խոսքի մասերով արտահայտվող հասկացական հականիշներ, օքսիմորոններ, դիմել է հականիշների կրկնության: Այս ամենը չափազանց նպաստել է ասելիքի ամբողջացմանը, խոսքի հարստացմանը տարաբնույթ նրբերանգներով հագեցվածությամբ: Հականիշները կարևորագույն դեր ունեն հակադրություններ կազմելիս, որը ոճական գորեղ արտահայտչամիջոց է և երգիծական խոսքի էական բաղադրիչ: Նաև հականիշների կիրառության շնորհիվ է երգիծանքը դարձել ավելի հատուկ անխնա ձաղկելով ամեն կարգի արատավոր երևույթներ, ձևի և բովանդակության աղաղակող հաստություններ:

Ասոյան Թ., Ղևոնդ Ալիշանի երկերի լեզվական առանձնահատկությունները (հոդված)

Հոդվածում ներկայացվում են Ղ. Ալիշանի երկերի լեզվական առանձնահատկությունները XIX դ. արևմտահայերենի զարգացման համատեքստում: Նշված ժամանակաշրջանի լեզվական իրավիճակը մտավորականությանը երկընտրանքի առջև էր կանգնեցնում: Մի կողմից իր դիրքերը չէր զիջում գրաբարը, որով ստեղծվում էր հսկայածավալ գրականություն, մյուս կողմից էլ արևմտահայ աշխարհաբարն էր իր իրավունքները հաստատում գրականության մեջ: Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ մտավորականությունը պիտի ընտրություն կատարեր լեզվի կիրառության հարցում:

Հոդվածի սկզբում XVIII-XIX դդ. բնութագրվում են որպես հայ հասարակական կյանքում մշակութային նշանակալի տեղաշարժերի ժամանակաշրջան: Պետականագուրկ հայ ժողովրդի համար կենսական միակ հենարանը, գոյության խորհուրդն ու իմաստը մշակույթն էր: Ներկայացվում են հայ մշակույթի զարգացման հիմնական նախադրյալները, որոնցից մեկն էլ մշակութային կազմակերպությունների, մասնավորապես Մխիթարյան միաբանության ստեղծումն էր:

Հոդվածում խոսվում է Ղ. Ալիշանի աշխարհաբար երկերի լեզվի մասին, որի ուսումնասիրությամբ կարելի է կարծիք կազմել ոչ միայն հեղինակի լեզվական նախասիրությունների, լեզվի կիրառման յուրահատկությունների, նրա նկատմամբ դրսևորած վերաբերմունքի, այլև պատկերացում կազմել արևմտահայերենի զարգացման, կանոնավորման ընթացքի, գրաբար-աշխարհաբար փոխհարաբերությունների մասին, քանի որ նշված ժամանակաշրջանում լեզվական իրավիճակն այնպիսին էր, որ մտավորականներին պարտադրում էր որոշակի մոտեցում դրսևորել լեզվի ընտրության հարցում: Ներկայացվում է Ալիշանի երկակի վերաբերմունքը լեզվական իրավիճակի նկատմամբ. գիտական արտադրանքը ներկայացվում էր գրաբար, որը հասու կարող էր լինել մտավորականության մի որոշակի շրջանակի և, ըստ երևույթին, կարիք էլ չէր զգացվում այն դարձնել հասարակական բոլոր խավերի սեփականությունը, իսկ աշխարհաբարն օգտագործվում էր բոլոր այն դեպքերում, երբ հատկապես անհրաժեշտ էր առնչվել հասարակական բոլոր շերտերին: Կարևորվում է այն, որ Ալիշանը իր հայրենասիրական բանաստեղծությունները և պատմագեղարվեստական երկերը ներկայացնում էր արևմտահայերեն՝ հիմնականում ժողովրդին հասկանալի լեզվով հայության մեջ հայրենասիրական զգացումներ արթնացնելու համար:

Հոդվածում ուշադրություն է դարձվում Ալիշանի գործածած աշխարհաբարի որակին: Եթե գիտական ուսումնասիրություններում կանոնարկված, մաքուր աշխարհաբարն է, ապա բանաստեղծական երկերում այդպիսի մաքրություն չկա. աշխարհաբարին զուգահեռ օգտագործվում են և՛ գրաբարյան, և՛ բարբառային կամ, այսպես կոչված, «ռամկական» լեզվամիջոցներ: Ղ. Ալիշանը հասկացավ մեր լեզվի զարգացման ընթացքի տրամաբանությունը և ինչքան էլ վերապահումով էր վերաբերվում աշխարհաբարին՝ բարձր գնահատելով գրաբարի արժանիքները, այնուամենայնիվ դիմեց նրան՝ հասկանալով, որ այդպես կարող է ժողովրդին հասկանալի լինել, և վերջին հաշվով նրա նպատակն էլ հենց այդ ժողո-

վրդդի հասկանալի լեզվով հայրենասիրության ոգի ներարկելն էր ազգային- ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևավորման հիմնական միջոցն ու բաղադրիչը:

Նշվում է, որ Ղ. Ալիշանը՝ իբրև մտավորական, պատկանում է այն Մխիթարյանների թվին, որոնք հավասարակշռված մոտեցում են ցուցաբերում ստեղծված լեզվական իրավիճակին:

**Ասոյան Թ., Գրական ստեղծագործությունների ուսուցման մի քանի առանձնահատկությունների մասին
(ըստ Գր. Ջոհրապի «Երջանիկ մահը» նորավեպի) (հոդված)**

Գրական ստեղծագործությունների ուսուցումը դպրոցում մի գործընթաց է, որի ընթացքում ներկայացվում և վերլուծվում են ստեղծագործության պլոտեն, բովանդակությունը, կերպարները, լեզվառճական դիտարկումներ արվում, սակայն այդ ամենը ամրակայելու, յուրացնելու, գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել թե՛ ավանդական, թե՛ նորագույն մանկավարժական մեթոդներ:

Հոդվածում Գրիգոր Ջոհրապի նովելի օրինակով փորձ է արվում ներկայացնելու այն սկզբունքներն ու մեթոդները, որոնց օգնությամբ հնարավոր է համեմատաբար համակարգված ու լիարժեքորեն ուսումնասիրել գրական նմանատիպ ստեղծագործությունները: Միաժամանակ նշվում է, որ պետք է նկատի ունենալ, որ ամեն մի ստեղծագործություն ունի առանձնահատկություններ, ուստի հոդվածում ներկայացված սխեման միայն ընդհանուր բնույթի է:

Հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ որևէ գրական արձակ ստեղծագործություն ուսուցանելու համար անհրաժեշտ է մանրամասնորեն ուսումնասիրել տեքստը, մշակել և ձևակերպել ուսումնասիրման սկզբունքները: Մասնավորապես նպատակահարմար է տեքստի ուսումնասիրությունը իրականացնել այնպիսի սկզբունքներով, որոնք թույլ կտան բացահայտելու ստեղծագործության գաղափարական-բովանդակային միտվածությունը,

հեղինակի նպատակադրումը, լեզվառճական և դրանով պայմանավորված գեղարվեստական առանձնահատկությունները. կօգնի ընթերցողներին անհատական մոտեցում ու վերաբերմունք ցուցաբերելու և՛ ժամանակաշրջանին, և՛ հասարակական միջավայրին ու ընկալումներին, և՛ կերպարներին՝ միաժամանակ երևույթները գնահատելով արդիականության տեսանկյունից: Ներկայացվում են գրական երկերի ուսումնասիրության հետևյալ սկզբունքները. լեզվառճական, բովանդակային վերլուծությունների, տեքստի անհատական ընկալումը խթանող սկզբունքները բաղադրիչներով: Հոդվածում նշված սկզբունքները կիրառվում են Գր. Զոհրապի «Երջանիկ մահը» նորավեպի վերլուծության ընթացքում: Հանգամանորեն ներկայացված են նորավեպի լեզվառճական առանձնահատկությունները, որոնց օգնությամբ բացահայտվում են ստեղծագործության բովանդակային և կառուցվածքային հատկանիշները, կերպարաստեղծման յուրահատկությունները: Վերլուծության ժամանակ առաջարկվում են ուսուցման մեթոդներ, որոնց կիրառությունը հնարավորություն է ընձեռում լիարժեք պարզաբանելու առաջադրվող հարցերը:

Բարսեղյան Ա., Տեքստի կապակցման միջոցները Վ. Իսահակյանի «Հայրս» հուշագրական վեպում (հոդված)

Վ. Իսահակյանի «Հայրս» վեպի տեքստը կապակցված ամբողջություն է, որը իրականանում է որոշակի միջոցներով ու եղանակներով՝ պայմանավորված նյութի և մտահղացման ամբողջությամբ: Տեքստի հատվածները տրոհված են բացառա՝ աստղանիշ (***) կապերով: Պարբերության նախադասությունների իմաստային փոխհարաբերությունը մոտավորապես այնպիսին է, ինչպիսին բարդ նախադասության մեջ մտնող պարզ նախադասություններին: Ինչպես նախադասությունների, այնպես էլ առանձին պարբերությունների միջև կապեր ստեղծում են բառերը, բառակապակցությունները, նախադասությունները, այնպես էլ ցուցաբառերը՝

որպես ներհամահենքային (ներկոնտեքստային) նշանակման գործառությամբ և կրկնությունը, որի ժամանակ փոխարինում չի կատարվում: Տեքստում պարբերությունները նույնպես կապվում են հատուկ միջոցներով՝ նախաբերիչներով *վերոհիշյալ, վերևում նշվածը* և այլն, հետաբերիչներով *հետևյալը, ստորև բերվող* և այլն: Վերջիններս ներտեքստային կապակցության եղանակներ են: Բուն տեքստային շաղկապներ են՝ *այնուհետև, այնուամենայնիվ, ընդհակառակը* և այլն: Կապակցական գործառույթ ունեն նաև ավանդական քերականական կապի միջոցները, որոնք առանձին նախադասությունների կապի միջոցներ են: Տեքստում կապակցական դեր կատարում են գոյականը, ածականը, թվականը, մակբայը, բայը: Նկատելի է, որ պարբերությունը կազմող նախադասությունների կապերը ավելի սերտ են, քան առանձին պարբերությունների, սրանց կապերն էլ ավելի սերտ են, քան առանձին հատվածների կապերը: Դա պայմանավորված է նախադասությունների առավել ինքնուրույնությամբ:

Բարսեղյան Ա., Ներտեքստային կապը գուգորդման կանխենթադրույթի միջոցով (հոդված)

Հոդվածում ներկայացվում են ներտեքստային կապը գուգորդման կանխենթադրույթի միջոցով ապահովելու տեսական և գործնական որոշ հարցեր: *Չուգորդում* տերմինը հաճախ օգտագործվում է գիտության մեջ (քիմիա, աստղագիտություն, կենսաբանություն, հոգեբանություն, լեզվաբանություն): Նշվում է, որ գուգորդման տեսության հիմնադիր է համարվում Արիստոտելը (նա մշակել է գուգորդության հիմնատեսակները՝ ըստ նմանության, ըստ հակադրության, ըստ տարածության և ժամանակի մեջ կցության): Զուգորդությունն ըստ նմանության և կցորդության է ընդունում նաև Մ. Աբեղյանը:

Արձանագրվում է, որ լեզուն ինքնին բազմազան պատկերացումների գուգորդությունների մի պատկեր է, որում ամեն մի բառ կամ շարահյուսական կապակցություն գուգորդումներով

որն է խմբի մեջ է: Այստեղից էլ նրա զուգորդական կապակցական դերը տեքստում՝ հիմնված պատկերացումների նմանության, կցորդության, հակադրության վրա: Նշվում է, որ ներկայումս ներտեքստային կապերը ուսումնասիրվում են խոսույթային գիտելիքի՝ կանխենթադրույթի միջոցով: Զուգորդային խոսույթային կանխենթադրույթը ներակա կապ է ստեղծում միկրոտեքստի և խոսույթի համապատասխան հատվածների միջև՝ կապակցելով տեքստը՝ ըստ նմանության, կցորդության և հակադրության: Ներտեքստային զուգորդական կապերի հաճախ ենք հանդիպում գեղարվեստական գրականության մեջ, որտեղ խոսքի արտահայտչականությունն ընդգծելու նպատակով ստեղծվում են բնության երևույթների և մարդկային հարաբերությունների նմանություն կամ հակադրություն:

Ներտեքստային զուգորդական կապեր հաճախ հանդիպում են գեղարվեստական գրականության մեջ. խոսքի արտահայտչականությունն ընդգծելու նպատակով ստեղծվում են բնության երևույթների և մարդկային հարաբերությունների նմանություն կամ հակադրություն:

Թելյան Լ., Բառապատճենումներն արդի հայերենի բառապաշարում (հոդված)

Օտարալեզու տերմինների ու բառերի հայերեն համարժեքներն ստեղծելու գործընթացում հայոց լեզուն մշտապես օգտագործել է բառակազմական իր հարուստ զինանոցի բոլոր գործիքները, որոնց մեջ թերևս ամենից արտադրողականը բառապատճենումն է: Այս եղանակով է, որ հունաբան դպրոցի երախտավորներն ստեղծեցին հայերեն նախածանցների մի ողջ համակարգ՝ դյուրացնելու համար հունարեն բառերի համարժեք հայերեն թարգմանությունները (ենթ-, փոխ-, ստոր-, ընդ-, ներ- և այլն): Խորհրդային շրջանում ռուսերենից պատճենված շատ ու շատ բառեր այսօրվա մեր բառապաշարի յուրացրած սովորական կազմու-

թյուններ են (ինքնաթիռ, շոգեքարշ, հակազագ, տուն-թանգարան և այլն): Հայերենի բառակազմական ճկունության մի լրացուցիչ վկայություն է այն, որ միննույն օտար բաղադրիչը կարող է հայերեն տարբեր համարժեքներով թարգմանվել:

Արդի հայերենի նորաբանությունների բառարաններում ներկայացված նյութի քննությամբ հոդվածում ցույց է տրվում, որ պատճենումն ու կիսապատճենումը այսօր էլ մնում են մեր բառապաշարի հարստացման ամենակարևոր միջոցներից: Ներկայացվում են վիճակագրական տվյալներ մասնավորապես Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանի» և ԳԱԱ լեզվի ինստիտուտի «Նոր բառեր» բառարանի 4 պրակների համապատասխան նյութի վերաբերյալ: Կիսապատճենումների մի մասն էլ հոդվածում դիտարկվում է որպես միջակա օղակ ամբողջությամբ հայակազմ բառերի ու տերմինների ստեղծման ճանապարհին:

Թեյյան Լ., Արդի հայերենի լեզվական նորմը և կապերի գործածությունը («Արդի հայերենի բառապաշարը» գրքում)

Աշխատանքում նշվում է, որ շարահյուսական մակարդակում լեզվական նորմի քննությունը ներառում է կապակցության եղանակների՝ համաձայնության, խնդրառության, առդրության ու կախման, դրանց իրացման միջոցների՝ կապերի, շաղկապների, շարադասության, հնչերանգի, դրանց կիրարկման ընդունված կանոնների, առկա տարբերակային ձևերի, փոխառյալ և օտարաբան կառույցների ուսումնասիրության ու գնահատման հարցերը:

Աշխատանքում փորձ է արվում արդի հայերենի լեզվական կանոնի դիրքերից անդրադառնալու կենդանի խոսքում կապերի՝ որպես բառային և շարահյուսական միավորների կիրարկության որոշ յուրահատկությունների, ներկայացնելու որոշակի նկատառումներ ու գնահատականներ առկա զուգաձևերի, շեղումների ու սխալների վերաբերյալ: Քննության առիթը նաև մեր զանգվածային լրատվամիջոցների, հատկապես հեռուստատեսության լեզվի մաքրության մասին մտահոգությունն է: Դիտարկվող լեզվական

փաստերի մեծ մասը վերաբերում է մեր լեզվի կիրարկման հենց այդ ոլորտին:

Կոնկրետ վերլուծության են ենթարկվում արդի հայերենի մի շարք կապերի (մոտ, վրա, կից, առնթեր, տակ, հետ, մասին, հանդերձ, հանձին(ս), ի դեմս և այլն) կիրառությանն առնչվող շեղումները, որոնք կարող են պայմանավորված լինել տարբեր գործոններով: Այս վերջիններից հատկապես ուշադրության են առնվում գերադաս բայի խնդրառական առանձնահատկությունը, կապի և կապվող բառի իմաստային և շարահյուսական առնչությունը, կապվող բառի դասանշային պատկանելությունը (անձանշություն, իրանշություն), ինչպես նաև դրա առկայացական հատկությունը (որոշյալ, անորոշ) և այլն:

Կապերի ճշգրիտ գործածությունը պահանջում է որոշակի գիտելիք հայոց լեզվի բառագործածության և շարահյուսական նորմի վերաբերյալ և հսկողություն սեփական խոսքի նկատմամբ:

Թեյյան Լ., Շարահյուսական մի քանի դիտարկում (հոդված)

Հոդվածում ներկայացվող դիտարկումները վերաբերում են շարահյուսագիտական գրականության մեջ մի քանի առանցքային հասկացությունների ոչ միանշանակ ըմբռնումներին ու մեկնաբանություններին, շարահյուսական որոշ տերմինների գործածության, դրանց և համապատասխան քերականական իրողությունների տրամաբանական համարժեքության խնդիրներին: Մասնավորապես դիտարկվում են *ստորոգում* և *նախադասություն* հասկացությունների և համապատասխանաբար տերմինների տարարժեք գործածությունները Մ. Աբեղյանի, Է. Աղայանի, Ռ. Իշխանյանի, Գ. Ջահուկյանի, Ա. Պապոյանի աշխատություններում, ապա նաև *ենթակա*, *ստորոգյալ*, *համադասություն* և *ստորադասություն*, *կախյալ* և *անկախ շարահարություն*, *անշաղկապություն* տերմինների գնահատման և կիրառության տարբերությունները տարբեր հեղինակների (Ս. Աբրահամյան, Ա. Պապոյան, Դ. Գյուլգասոյան և

այլք) աշխատանքներում: Հոդվածում ներկայացվում են նաև հեղինակի նկատառումներն ու առաջարկները շարահյուսագիտական տերմինների միասնական, ըստ հնարավորին ճշգրիտ ու հետևողական կիրառության մասին, և դա դիտվում է որպես շարահյուսության միասնական ու անհակասական տեսության ստեղծման նախապայմաններից մեկը:

**Թոխմախյան Ռ., Տիոյան Ս., Հայերենի ձայնավորահանգ բառերի
ձևային նկարագրություն (հոդված)**

Հոդվածում ներկայացվում են ժամանակակից հայերենի ձայնավորահանգ բառերի ձևաիմաստային խմբերը: Դասակարգվում են *ա, ո/օ, ե/է, ի, ու, ը* ձայնավորներով ավարտվող բառերը: Թեև հայերենի ձայնավորական այս շարքը ներկայացվում է ըստ տարահոգության հնչույթային հատկանիշի, սակայն հոդվածում ձայնավորահանգ բառերը դիտարկվում են ըստ գործառական – հաճախականական հատկանիշի:

Ժամանակակից գրական հայերենում նույն հնչույթը հանդես է գալիս գործուն և քարացած հոլովաձևերում, ընդ որում՝ բառագործածության ընթացքում դրանք հավասարապես կարող են հանդիպել (արևելահայերենում՝ պայմանականորեն քարացած, արևմտահայերենում՝ գործուն)՝ տարբեր ձևաբանական գործառույթներով: Ներկայացվում են վերոնշյալ ձայնավոր հնչույթներով վերջացող բառերի ձևաբանական գործառույթները՝ ըստ նվազող հաճախականության:

Առանձնացվում է ձայնավորահանգ բառերի վեց խումբ՝ ներկայացնելու, որ՝ 1. ձայնավորահանգ բառերի ձևական խմբավորումը կարող է նպաստել լեզուների տիպաբանական դասակարգմանն ուղղված աշխատանքներին, մասնավորապես կցական լեզուների առանձնահատկությունները բացահայտելիս, 2. այն նպաստում է նաև լեզուների ձևային նկարագրությանը՝ մեքենական թարգմանության լեզվական խնդիրները կարգավորելիս, երբ լեզվից լեզու թարգմանության պարագայում պարտադիր պայման

է բառային միավորների ձևաիմաստային միարժեք համապատասխանությունը, 3. կարող է օգտակար լինել լեզվավիճակագրական հաշվարկներ կատարելիս:

**Ղաւմյան Լ., Պատմական համանունությունը «հագուստ»
իմաստային դաշտում (հոդված)**

Հոդվածում քննվում են հայերենի «հագուստ» իմաստային դաշտի բառերի իմաստային առանձնահատկությունները: Նկատվում է, որ կան հագուստի անվանումներ (նաև հագուստի մաս, կտորեղեն), որոնք նույն գրությամբ կամ արտասանությամբ հանդիպում են լեզվի զարգացման տարբեր փուլերում, երբեմն նաև բարբառներում: Անվանումները հավանաբար իրարից անկախ են ծագել և ունեն բոլորովին այլ իմաստներ: Նշվում է, որ դրանք փաստորեն պատմական համանունության դրսևորումներ են. կա՛մ առաջացել են իմաստային մթագնման պատճառով, կա՛մ էլ պատահական նմանության արդյունք են: Նման բառերը կարիք ունեն մանրամասն քննության, հետևաբար հեղինակն անդրադարձել է դրանցից մի քանիսին՝ *բարուր*, *փոխան*, *հագնել*, *մշտակ*, *ասպապ*, *խաբդան*, *նախ*, *կուկուլ*, *հանգիստ*, *մոտ*, *ապլախ*, *կապաւոր*, *փոռիկ*, *ջինս*, *շորտիկ* բառանուններին: Սրանք այն բառերից են, որոնք նույն ձևով, սակայն տարբեր իմաստներով առկա են գրաբարում, միջին հայերենում, բարբառներում և արդի գրական հայերենի երկու տարբերակներում: Պատահում է այնպես, որ իմաստային տարբերությունն ի հայտ է գալիս միայն մեկ լեզվատարբերակում:

Առանձնացված օրինակների մանրամասն քննությունից հետո հեղինակը հանգում է այն եզրակացության, որ վերոնշյալ բոլոր բառերն էլ կա՛մ բացարձակորեն տարբեր իմաստ արտահայտող համանուններ են, որոնք ծագել են լեզվի զարգացման տարբեր փուլերում, կա՛մ որոշ իմաստային նրբերանգներով տարբերվող բառեր ու բառաձևեր, որոնք իրենց իմաստային առանձնա-

հատկությունները դրսևորում են միայն համապատասխան խոսքային միջավայրում և այդ համակարգից դուրս հնարավոր է իմաստային շփոթ առաջացնեն և չընկալվեն ընթերցողի կողմից:

**Ղամոյան Լ., «Հագուստ» իմաստային դաշտը նորակազմ
բաղադրություններում (հոդված)**

Հոդվածում նախ անդրադարձ է կատարվել դեռևս խորհրդային տարիներին արևելահայ և արևմտահայ գրական լեզուներում ի հայտ եկած բնիկ ու փոխառյալ այն բառերին, որոնք չկային գրաբարում, միջին հայերենում ու բարբառներում, ապա քննարկվել են վերջին ժամանակներս երևան եկած նոր բառերն ու հասկացությունները:

Նշվում է, որ ունենալով բառակազմական մեծ ճկունություն և հնարավորություններ՝ հայոց լեզվի բառապաշարը ամենից առաջ հարստացել և հարստանում է ներքին ճանապարհով՝ *բառաբարդմամբ և ածանցմամբ*: «Հագուստ» իմաստային դաշտի բառանունները նույնպես մասնակցում են նոր բառերի կազմմանը (հիմնականում *բառաբարդմամբ*): Ելնելով բերված օրինակներից՝ ենթադրվում է, որ նորակազմ բարդ բառերն ածանցավորների համեմատությամբ բավականին շատ են և առանձնանում են տարբեր կաղապարներով: Ըստ խոսքիմասային արտահայտության՝ հիմնականում գերակշռում են *գոյական* գերադաս անդամով նորակազմ բարդությունները՝ տարբեր կաղապարներով:

Հոդվածում դրական երևույթ է համարվում այն, որ երբեմն *հագուստ* հասկացություն նշող նորակազմ բարդությունները փոխարինում են բառային բազմանդամ ազատ շարահյուսական կապակցություններին, քանի որ բառակապակցություններն ավելի երկար են, քան նրանց հիմքի վրա կազմված բաղադրությունները, ուստի և դրանով իրացվում է լեզվի մեջ գործող խնայողության սկզբունքը:

Դրական երևույթ է համարվում նաև փոխառյալ բառերը հայերեն բառերով փոխարինելը, սակայն մի վերապահությամբ.

որքանով են այս նորաստեղծ բառերն իմաստով ու հնչեղությամբ համարժեք չթարգմանված տարբերակին: Հետևաբար դրանց մի մասը համարվում են դիպվածային բառեր:

Հոդվածում ներկայացվում են նաև հեղինակային այնպիսի նորակազմություններ, որոնք ունեն բաղադրիչների անսովոր համադրություն, յուրահատուկ զուգորդումներ և փոխաբերական երանգներ: Կան նաև հագուստի անվանումներից բաղադրված սովորական շարահյուսական կապակցություններ, որոնք, փոխաբերաբար գործածվելով, աստիճանաբար վերածվել են ինքնուրույն բառակապակցության ու ստացել բառային իմաստ (նորակազմ դարձվածային կայուն բառակապակցություններ) և նորակազմ բաղադրյալ կայուն այնպիսի բառակապակցություններ, որոնց իմաստը, ի տարբերություն դարձվածային միավորների, տվյալ կապակցության անդամների միասնությամբ ստեղծվող ուղղակի իմաստն է: Դրանք անվանական բառակապակցություններ են՝ լրացում լրացյալ հարաբերությամբ, որոնք, որպես բաղադրյալ տերմիններ, ընդհանուր հասկացությունները վերածում են մասնավոր հասկացությունների՝ ստեղծելով տերմինային ստորակարգություն:

Ղամոյան Լ., Բառային տարբերակներ «հագուստ» իմաստային դաշտում (հոդված)

Հոդվածում նշվում է, որ լեզվի զարգացման ամեն մի փուլում գործառում են բառային զույգեր կամ նույնիսկ խմբեր, որոնք տվյալ փուլի բառապաշարի անբաժան մասն են կազմում՝ պատկանելով գործուն կամ չեզոք շերտին: Այդ կարգի բառազույգերը կարող են նույն իմաստն ու գործառությունն ունենալ, բայց տարբերվել հնչյունակազմով (ձևով) և բառակազմական հատկանիշներով: Այդ բառազույգերից սովորաբար մեկն է լինում առավել գործածական ու կանոնական, իսկ մյուսները (տարբերակները) ժամանակի ընթացքում կարող են դուրս գալ գործածությունից:

Հենվելով հիմնականում «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ի տվյալների վրա՝ հեղինակը «հագուստ» իմաստային դաշտում առանձնացրել է իմաստային նույնություն և հնչյունական որոշ զանազանություն դրսևորող այնպիսի բառեր, որոնք լեզվաբանական աշխատություններում դիտվում են իբրև *բառային տարբերակներ* կամ *զուգաբանություններ*: Դրանք առկա են լեզվի զարգացման արդի փուլում՝ անկախ գործածականությունից, կանոնականությունից ու գործառական բնութագրից: Դասակարգելով որոշակի հատկանիշներով՝ հեղինակը նկատել է, որ այդ բառատարբերակների մեծագույն մասը կազմում են բաղադրյալ բառերը (բարդ, ածանցավոր, բարդաձանցավոր):

Անդրադառնալով դրանց առանձին խմբերով՝ առանձնացվել են հոդակապային, հնչյունափոխական, ուղղագրական-ուղղախոսական, փոխատեղական բաղադրյալ տարբերակներ, ինչպես նաև՝ տարբադադրիչ համանիշներ, հարադրությունների վերածում կցական բարդությունների և նորաբանական բազմազանություն:

Անդրադառնելով «հագուստ» իմաստային դաշտի բառատարբերակներին՝ հեղինակը հանգում է հետևյալ ընդհանուր եզրակացության. ներլեզվական տարբերակների գոյությունն անխուսափելի է լեզվի պատմության բոլոր փուլերում շարունակաբար նորանոր բառեր են կազմվում, և անկախ նրանից, թե ինչ հարաբերության մեջ են այդ տարբերակները, բոլորն էլ բնութագրվում են մեկ ընդհանուր հատկանիշով, այն է՝ բոլորն էլ լեզվի մեջ գործող ներքին գործընթացների հետևանք են: Հնարավոր ձևերից մեկը լեզվագործածության մեջ պատմականորեն ամրանում է և բարձրանում նորմայի մակարդակի, իսկ մյուսը կամ մյուսները՝ ժամանակի ընթացքում մերժվում:

Ղամոյան Լ., «Հագուստ» հասկացությունն ընդ փոխառությունները միջին հայերենում (հոդված)

Հոդվածում նշվում է, որ հայոց լեզվի զարգացման ընթացքում կատարված բոլոր ձևափոխությունները տեղի են ունեցել՝ ա) ներքին, այսինքն՝ բնական ճանապարհով՝ իբրև արդյունք բնական զարգացման, բ) արտաքին, այսինքն՝ փոխառություններով՝ իբրև արդյունք օտար ազդեցությունների, գ) անհատական ճանապարհով, այսինքն՝ գրական նորամուծությունների շնորհիվ:

Կիլիկյան հայերենի բառապաշարում մեծ թիվ են կազմում գրավոր և բանավոր ճանապարհով մուտք գործած անմիջական և միջնորդավորված փոխառությունները, որոնք արտացոլում են կյանքի տարբեր կողմեր: Այդ փոխառությունները կարելի է խմբավորել ըստ իմաստային-կիրառական ոլորտների, որոնցից մեկը «հագուստ» իմաստային դաշտն է:

Ներկայացվում են միջին հայերենում փոխառված այն ձևափոխությունները, որոնք անվանում են *հագուստ*, նաև *հագուստի մաս*, ինչպես նաև հանդերձանքին հարակից այլ հասկացություններ, ինչպիսին են, օրինակ, *գործվածք* կամ *հյուսվածք*: Նյութերը հեղինակը դասակարգել է ըստ իմաստային ենթախմբերի (*զլխի ծածկոց, վերնագգեստ, ներքնահագուստ, ոտնաման, հագուստի մաս, կտորեղեն*)՝ հընթացս ներկայացնելով դրանց փոխառության աղբյուրները, փոխատու լեզվում և միջին հայերենում ունեցած իմաստները, հնչյունական առկա տարբերակները և լեզվական այլ առանձնահատկություններ:

Միջին հայերենում փոխառված՝ հագուստի որոշ անվանումներ պահպանվել է աշխարհաբարի գրական երկու տարբերակներում էլ, բարբառները ևս այդ կարգի փոխառություններից ունեն բավական թվով օրինակներ:

Հեղինակի առանձնացրած օրինակները ցույց են տալիս, որ այս շրջանում կատարված փոխառությունների մեծ մասը պարս-

կերենից և թուրքերենից են: Փոքրաթիվ փոխառություններ կան արաբերենից, մեկական օրինակ՝ ասորերենից, հունարենից, ֆրանսերենից և լեհերենից: Դրանք բառակազմական ակտիվություն չունեն:

Ներսիսյան Վ.. Բառակազմության հարցերի քննությունը Արսեն Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ (հոդված)

Հոդվածում քննվել են աշխարհաբարի բառակազմության ուսմունքի ձևավորման հիմքերը. մասնավորապես դիտարկվել է բառակազմության հարցերի արտացոլումը Մխիթարյան միաբանության վիեննական դպրոցի ներկայացուցիչ Արսեն Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ: Համառոտ անդրադարձ է կատարվել նաև Ա. Այտընյանի գիտական գործունեությանը նվիրված առանձին ուսումնասիրությունների:

Հեղինակը նկատում է, որ հայերենի բառապաշարի կառուցվածքային առանձնահատկություններն ուսումնասիրության առարկա են դարձել դեռևս հինգերորդ դարից սկսած՝ Դ. Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատության թարգմանության մեջ և նրա հետագա մեկնություններում: Հետագայում բառակազմության հարցերը քննության առարկա են դարձել բառապաշարի խոսքիմասային դասակարգման տարատեսակ փորձերին զուգահեռ:

Ա. Այտընյանի աշխատության մեջ խորությամբ և համակողմանիորեն քննության են ենթարկվել հայերենի բառակազմությանն առնչվող հարցերը՝ պատմական հայեցակետով: Հանգամանորեն ներկայացվել են աշխարհաբարի բառակազմության օրինաչափություններն ինչպես գրաբարի, միջին հայերենի, այնպես էլ բարբառների համեմատությամբ: Ներկայացվել են հոլովման, խոնարհման վերջավորությունները, ածանցները, տրվել դրանց տարբերությունները: Այտընյանը ցույց է տվել *բառաձևի* և

բառի ձևի (կառուցվածքի) տարբերությունները, սակայն երկու դեպքում էլ գործածել է *բառի ձև* եզրույթը: Խիստ կերպով չի տարանջատում *մասնիկ* և *ածանց*, ինչպես նաև *ածանցում* և *ածանց* եզրույթները, թեև ամեն մեկը հասակորեն մեկնաբանում և սահմանում է: Ըստ հոդվածագրի՝ շատ դեպքերում Այտընյանը լեզվական իրողությունները ներկայացնելիս գործածում է ընդհանուր տերմիններ՝ ցույց տալով դրանց տարբեր դրսևորումները: Բառերն ըստ կազմության բաժանում է պարզ, ածանցավոր, բարդ և կրկնավոր տեսակների՝ չտարբերակելով բարդաձանցավոր տեսակը: Այտընյանն ընդունում է բարդության հետևյալ տեսակները՝ անհոդակապ, *ա* հոդակապով, *ու* շաղկապով: Նաև նշում է, որ վերոհիշյալ 3 ձևերն էլ գրաբարին հատուկ են եղել, և բուն սովորականն ու կանոնավորն է միջին կերպը (*ա* հոդակապով), իսկ «միջին և արդի հայերեն լեզուաց ընդհանրապես կանոնաւորն եղած է՝ առանց այբի»: Հանգամանորեն ներկայացնում է *ա* հոդակապով կամ առանց դրա կապակցվող բաղադրիչների հնչյունափոխության դեպքերը, ինչպես նաև բացառությունները:

Հոդվածում դիտարկվում են նաև առանձին խոսքի մասերի բառակազմական առաձնահատկությունների վերաբերյալ Այտընյանի մոտեցումները: Հեղինակն աշխատության կարևոր արժանիքներից է համարում նաև նախաձանցավոր և վերջաձանցավոր բառերի ընդգրկուն ցանկի առկայությունը, որի մեջ տրված են ածանցների իմաստային դրսևորումները, առանձին խոսքի մասեր կերտելու առանձնահատկությունները:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հոդվածագիրն ընդգրծում է, որ աշխարհաբարի բառակազմության ուսմունքի ձևավորման հիմքերն առաջին հերթին պետք է փնտրել Այտընյանի նշված աշխատության մեջ:

**Ներսիսյան Վ., Լեզվի պատկերավորման միջոցները Գևորգ
Բաղդիշյանի «Մուսալեռցի պապա» խոհագրության մեջ
(հոդված)**

Հոդվածում ներկայացված է պատկերավորման միջոցների գործածությունը լեզվաբան Գևորգ Բաղդիշյանի «Մուսալեռցի պապը» խոհագրության մեջ: 2017 թ. լույս տեսած ինքնակենսագրական պատումը գրված է արևմտահայերեն և, ըստ հոդվածագրի, արտացոլում է հեղինակի լեզվաբանական հետաքրքրություններն ու դրանք կիրառելու հմտությունները:

Բնագրային բազմաթիվ օրինակներով հոդվածի հեղինակը ցույց է տվել համեմատությունների, փոխաբերությունների, ճարտասանական բանադարձումների կիրառությունները: Բազմաթիվ են հակադրության, չափազանցության օրինակները: Հակադրությունը կարող է արտահայտված լինել ամբողջական նախադասություններով, համեմատություններով:

Նկատվում է, որ պատումի հերոսի կերպարների խոսքում յուրահատուկ իմաստային նրբերանգներ են ստանում ինչպես հայտնի, այնպես էլ իրեն բնորոշ թևավոր խոսքերն ու ասացվածքները, որոնք որպես հայրենասիրության, ազգային պահպանման յուրահատուկ կոչ են հնչում և շատ արդիական ու տեղին են նաև մեր օրերում:

Խոհագրությունը հարուստ է պատկերավորման միջոցներով, որոնք հարստացնում են երկի լեզուն և ընթերցողին մղում մեկ շնչով ավարտելու ընթերցումն ու մտորելու առաջ քաշված խնդիրների շուրջ: Հոդվածագրի դիտարկմամբ՝ պատկերավորման միջոցների, դարձվածքների, շրջասույթների, թևավոր խոսքերի առատ գործածությունը, զրույցը որպես սյուժեի հյուսման հիմնական միջոց դարձնելը և հերոսի կյանքի փիլիսոփայությունը ներկայացնելը պարզորոշ գծագրում և ամբողջացնում են նրա դիմանկարը՝ կենսափորձով, խորիմաստ մեկնաբանություններով և աշխարհընկալմամբ:

Երկում յուրահատուկ դրսևորում է գտել նաև ակնարկը, որը կարող է ներառել ինչպես համեմատություն, այնպես էլ հակադրություն, հաճախ՝ և՛ մեկը, և՛ մյուսը:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հողվածագիրը նշում է, որ պատկերավորման միջոցների առատ գործածությամբ կտավային աշխատանքը ներկայացնում է հայ տղամարդու օրինակելի մի կերպար, որն իր յուրահատուկ տեղն ու նշանակությունը կարող է ունենալ ինչպես ընթերցողների շրջանում, այնպես էլ հայ գրականության մեջ:

Նոր բառեր, պրակ Ե (բառարան)

«Նոր բառեր» մատենաշարի հերթական պրակը պարունակում է շուրջ 1520 բառամիավոր: Ներկայացվում են մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող բառեր, որոնք գրանցված չեն հայերենի բացատրական և նորաբանությունների բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, բնագրային օրինակը, աղբյուրը: Տրվում են բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը տրվում է ըստ տեքստում ունեցած նշանակության: Հավելվածում ներկայացված են 100 տառային նորագույն հապավումներ, տրված են դրանց վերծանությունները և գործածության օրինակներ:

Պրակը կարող է օգտակար լինել հայոց լեզվի բառապաշարով հետաքրքրվող մասնագետներին, ուսուցիչներին, օգտագործվել բացատրական բառարաններ կազմելիս:

Պապիկյան Ս., Տերմինաբանության հարցեր (հողված)

Հողվածում անդրադարձ է կատարվում համագործածական բառի տերմինացման երևույթին, որը սովորաբար տեղի է ունենում բառիմաստի փոփոխությամբ (հիմնականում բառիմաստի նեղաց-

մամբ)՝ արտաքին և ներքին որակական հատկանիշների նմանության, զուգորդության, գործառութային փոփոխության և այլ հիմունքներով: Ընդ որում, վերախմաստավորում-տերմինացումը կարող է լինել հասկանալի՝ ակնհայտ արտաքին նմանության հիման վրա (հմմտ. *խոռոչ, աստալ, ոտք*) և ոչ հասկանալի, երբ պարզ չէ վերախմաստավորման հիմքը. այն երևում է ավելի հանգամանալից քննության արդյունքում. կարևորվում են տարբեր հանգամանքներ՝ հավատալիքներ, սովորություններ, պատմական իրադարձություններ և այլն:

Հեղինակը դիտարկում է հասարակական գիտություններին վերաբերող բառակապակցական տերմիններ՝ հատկապես նկատի ունենալով Փիթեր Քոլինի «Իրավաբանության բացատրական բառարանում (անգլերեն-հայերեն-անգլերեն)» (Ե., 2005) արձանագրված միավորներ՝ կազմված գունանուններով, որոնց միջուկը որևէ գոյական է, ծավալիչը՝ գունանուն: Մասնավորապես, հոդվածում ներկայացվում են *կապույտ, կարմիր, սև, կանաչ, սպիտակ* գունանուններով կազմված բառակապակցական տերմինների իմաստային և գործառական մի շարք յուրահատկություններ:

Փաստվում է, որ գունանուններ պարունակող տերմիններին մեծ մասը պատճենված է անգլերենի իրավաբանական տերմինա-համակարգից: Այդ տերմինների մի մասն ունի դարձվածային իմաստ:

Հեղինակը եզրակացնում է, որ տերմինաստեղծման մեջ որոշակի դեր ունեցող համագործածական բառի վերախմաստավորում- փոխաբերացում- տերմինացումով առաջացած տերմինների իմաստը կարող է հասկանալի լինել ակնհայտ արտաքին նմանության հիման վրա, երբեմն էլ պարզ չէ վերախմաստավորման հիմքը. այս դեպքում կարևորվում են տարբեր հանգամանքներ՝ հավատալիքներ, սովորություններ, պատմական իրադարձություններ և այլն:

Մաֆարյան Տ., Ներկայիս սոցցանցերում լատինատառ հայերեն գրության սխալ ձևերի մասին (հոդված)

Հոդվածում բացահայտվում են համացանցային սխալների տարածված օրինակների դիպուկ օրինաչափությունները: Նշվում է, որ դրանք կարող են դեր խաղալ նման սխալները հաղթահարելու խնդրում: Այս առումով հոդվածն ունի շատ ավելի գործնական նշանակություն: Դիտարկումների ընդհանուր սկզբունքն այն է, որ լեզուն՝ որպես կենդանի հաղորդակցման միջոց, կարող է խոսակցականից եկող այլևայլ հիմունքներով ընդունել և կայունացնել տարբեր տիպի սխալներ, որոնք ավելի են ընդգծվում սոցցանցերում՝ օտարագիր ձևերի մեջ, և դրանց ազդեցությամբ՝ նաև հայերեն շարադրանքում: Այդ շեղումների բազմազանության մեջ, այսպես թե այնպես, դեր է խաղում գրագիտության պակասը:

Հոդվածի հեղինակի դիտարկմամբ՝ սոցցանցերում հանդիպող սխալների մեծ մասը լատինատառ շարադրանքի, լատիներենից, նաև ռուսերենից հայերեն ոչ ճիշտ տառադարձման հետևանք են: Մեջբերված օրինակների մեծ մասը ցույց է տալիս, որ կայուն օրինաչափություն է դառնում նույն հնչյունի նշումը տարբեր տառերով:

Դիտարկված մյուս օրինաչափությունը լատինատառ հայերեն շարադրանքում համացանցային խորհրդանշաններ ներմուծելն է:

Տարածված է օժանդակ բայերի, վերաբերականների, շաղկապների՝ հարևան բառերին կից գրությունը, ընդ որում՝ այդ կարգի սխալները շատ են անգամ հայատառ շարադրանքում:

Դիտարկված սոցցանցային տարածված սխալներից են կետադրական շեղումները կամ պարզապես կետադրության բացակայությունը, ընդ որում՝ նաև հայատառ շարադրանքում, որի մեջ հաճախ գործածվում է ոչհայկական կետադրությունը, մանավանդ հարցական նշանը:

Այսպիսով՝ պարզվում է, որ ներկայիս համացանցի լեզվական սխալների ընդհանուր օրինաչափությունները մեծ մասամբ տեղի են ունենում օտար գրերին հայերենի տառադարձությունների ժամանակ ոչ միայն լատինատառ, այլև հայագիր շարադրանքում: Հաճախ են օգտագործվում հայերենին անհարիր տարբեր խորհրդանշաններ, նկատվում են բառերի ոչ ճիշտ կամ միասնական գրություններ, կետադրական նշանների անտեսում և այլն, որոնց հետևանքով խախտվում է արդի հայերենի գրական կանոնականությունը, որը, անկախ որևէ բացատրությունից, մերժելի է և, ինչպես հոդվածի հեղինակն է հիմնավորում, պատշաճ հոգաժության պայմաններում հաղթահարելի:

**Սուրբասյան Հ., Զաքարյան Հ., Օտարալեզու եզրույթների
հայերեն թարգմանության սկզբունքները
(բժշկագիտական եզրույթների օրինակով) (հոդված)**

Հոդվածում կարևորվում է այն իրողությունը, որ օտարալեզու եզրույթների յուրացման գլխավոր սկզբունքը դրանց հնարավորինս հայերենացումն է՝ թարգմանությունը: Դա նախ և առաջ մարդու իրավունքների խնդիր է: Օտար բառերի անհարկի գործածությունը նշանակում է հայախոս լեզվական հանրության անդամների իրավունքների ոտնահարում, քանի որ պարտադրում է յուրացնել այլ լեզվական հանրությանը, նրա լեզվին պատկանող բառեր, որոնք հայերենում անվերլուծելի ու անստուգաբանելի են, զուրկ են հայերեն բառերին բնորոշ թափանցիկությունից, ինքնըստինքյան հասկանալիության բնական հատկությունից:

Մյուս կարևոր սկզբունքը հայերեն գրավոր խոսքը բացառապես մաշտոցյան գրային համակարգով արտահայտելն է՝ անթարգմանելի օտար տարրերը այդ համակարգով տառադարձելու պարտադիր պահանջով:

Օտարալեզու եզրույթները հայերենացնելիս կիրառելի են հայերեն եզրույթաշինության համընդհանուր չափանիշերը, որոնցից կարևորներն են նոր կամ նախընտրելի եզրույթի բառակազ-

մական արտադրողականությունը (սերողունակությունը), հայերեն բառակազմական հարացույցների օրինաչափություններին ենթակա լինելը, ճշգրտությունը, թափանցիկությունը (ինքնաստուգաբանելիությունը), խնայողականությունը (հնարավորինս հակիրճությունը), հնարավորինս մենիմաստությունը, շփոթելի համանուններից ու հարանուններից զերծ լինելը, արտասանական-գրային (այդ թվում՝ տառադարձական) տարբերակներ չունենալը, բարեհունչ և դյուրարտասանելի, ինքնատիպ ու տպավորիչ լինելը, արտահայտչականության ու պայմանականության առումներով ներդաշնակությունը:

Հեղինակները շեշտում են, որ եզրույթաշինությունը (ընդ որում՝ փոխառյալ եզրույթները հայացնել) պետք է կատարվի հնարավորինս աստիճանական ու սահուն ընթացքով՝ առանց լեզվական համակարգում և հասարակության մեջ ցնցումներ առաջացնելու, թույլ տա զուգաձևությունների (հատկապես բառակազմական տարբերակների) չափավոր առկայություն՝ չխոչընդոտելու համար լեզվի բնականոն զարգացմանը, ավելի կատարյալ ձևերի առաջացմանը, ձգտի ավանդույթի և նորացման ներդաշնակության, այսինքն՝ ոչ միայն հաշվի առնի ավանդույթը, այլև լինի առաջահայաց և կողմնորոշվի լեզվի բնականոն զարգացման դրական միտումներով, հաշվի առնի եզրույթաշինության համաշխարհային փորձը՝ հարմարեցնելով դա սեփական խնդիրների լուծմանը: Ընդ որում՝ որևէ երկրորդ լեզու չպետք է միակ չափանիշի, առավել ևս ընդօրինակման միակ աղբյուրի կամ արտոնյալ միջնորդի դեր կատարի հայերենի եզրույթաշինության զարգացման ու կատարելագործման համար:

Հեղինակները նկատում են, որ գիտական եզրույթների թարգմանության խնդիրներ ծագում են հատկապես այն դեպքում, երբ հարկ է լինում լրացնելու եզրույթաբանական բացը, այսինքն՝ տվյալ լեզվով ստեղծելու նոր եզրույթ՝ աչքի առաջ ունենալով մեկ այլ լեզվով համարժեքը:

**Սուրբհասյան Հ., Թոռունյան Ն., Բժշկագիտական
օտար տերմինների հայերեն տառադարձությունը (հոդված)**

Հոդվածում կարևորվում է օտար տերմինների հայերեն տառադարձության սկզբունքների կիրառումը հայալեզու գիտական, մասնավորապես բժշկագիտական գրականության մեջ: Անդրադարձ է կատարվում տերմինաբանական կոմիտեի՝ դեռևս 1939 թ. (1984 թ., 1988 թ.) հստակեցրած գիտական և գիտատեխնիկական տերմինների ուղղագրության, առհասարակ տերմինաշինության կանոններին և խնդիրներին, պարբերաբար ընդունած գործող նոր որոշումներին՝ ելնելով նորմավորման արդիական մոտեցումների հրատապությունից: Ի սկզբանե տերմինաբանական կոմիտեի լեզվաշինության և լեզվի նորմավորման բազմաթիվ հարցերից մեկն էլ տառադարձությունն է: Տառադարձությունը տերմինական գիտաբանապաշարի ամբողջության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում, որի համար անհրաժեշտ են տառադարձության նորմավորված հստակ կանոններ և այդ կանոնները անհրաժեշտաբար կիրառելու համար՝ քաջատեղյակություն:

Հեղինակներն արդիական խնդիրներ են առաջադրում. ի՞նչ է տառադարձությունը և ե՞րբ է տառադարձության անհրաժեշտություն առաջանում, և նշում, որ տառադարձված օտար բառը նույն հնչողությամբ նույն բառն է՝ այլ լեզվի տառերով: Հայտնի է նաև, որ մի լեզվից մի այլ լեզու կատարված տառադարձությունն առաջացնում է մի շարք բարդություններ՝ պայմանավորված երկու լեզուների հնչյունական տարբերություններով: Սակայն տառադարձվող տերմինը երկրորդ լեզվով ոչ միայն արտասանվում է, այլև գրվում: Ուստի առաջանում է նաև տառադարձված տերմինը գրելու խնդիրը: Տառադարձված տերմինը ենթարկվում է տառադարձվող լեզվի ուղղագրական կանոններին:

Հեղինակները, տարիների ընթացքում ուսումնասիրելով բժշկագիտական լեզուն, հոդվածում ամփոփ ներկայացնում են մասնավորապես բժշկական տերմինների տառադարձման օրինաչափությունները: Նրանց կարծիքով ներկայումս ևս անհրաժեշ-

տություն կա բժշկագիտական բնագավառում համակարգելու գործող տառադարձման կանոնները՝ դրանք հասանելի դարձնելով գիտական գործունեություն ծավալող բժիշկներին, բժշկական բուհերի ուսանողներին, թարգմանիչներին և առողջապահության բնագավառի այլ մասնագետներին:

Հոդվածում հեղինակներն անդրադառնում են նաև հունալատինական բառակազմական միավորներին՝ տերմինատարերին, նախաձանցներին և վերջաձանցներին՝ նշելով դրանց տառադարձման սկզբունքները՝ ըստ հայերենի ուղղագրության կանոնների:

Կարևորվում է այն, որ տերմինաբանության՝ որպես գիտաճյուղի նպատակներից մեկը տերմինների մշակումն ու միօրինականացումն է: Տերմինները՝ որպես նեղ մասնագիտական բառեր, գործածվում են գիտության, տեխնիկայի, արվեստի բոլոր բնագավառներում, որոնց զարգացման և ընդլայնման դեպքում առաջանում են նոր տերմիններ: Դա նշանակում է, որ հնարավորինս պետք է հասնել տերմինների միօրինակացման՝ մշտական ուշադրության կենտրոնում պահելով դրանց տառադարձման կանոնները՝ ապահովելով մասնագիտական տերմինական գրավոր խոսքի անադարտությունը:

**Սուրբիասյան Հ., Քոչատաշյան Ս., Հայերենի՝ որպես
օտար լեզվի ուսուցման հիմունքները
բազմալեզու միջավայրում (հոդված)**

Հոդվածում կարևորվում են հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման հիմունքները բազմալեզու միջավայրում: «Հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման հիմունքները բազմալեզու միջավայրում» աշխատանքը կառուցվածքով ու բովանդակությամբ համապատասխանում է բազմալեզու միջավայրում հայերենի ուսուցմանը և կարող է դասագիրք լինել հեռավար ուսուցման նպատակով: Աշխատանքում լեզվական նյութը հանձնարարական բնույթ

ունի և միտված է զարգացնելու չափորոշիչներով սահմանված կարողությունները և հմտությունները: Ըստ ներկայացված աշխատանքի մակարդակների՝ ուսումնառության ավարտից հետո սովորողը կարող է ձեռք բերել ամեն մի մակարդակին համապատասխան գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, կունենա որոշակի բառապաշար՝ ըստ իրադրության համապատասխան ոլորտների: Աշխատանքն ունի գործնական նպատակ, այն է՝ սովորեցնել, հասանելի դարձնել և տարածել հայերենը: Տարբերակված են նաև բանավոր և գրավոր խոսքի առանձնահատկությունները: Արդեն իսկ մյուս մակարդակներում սովորողները կարող են գրավոր և բանավոր խոսք կազմելիս բավականին հմուտ հաղորդակցվել, իսկ մասնագիտական և ուսումնական նպատակներով լեզուն արդյունավետ կարող են գործածել գրավոր խոսքում: Ներկայացված և ներառված են լեզվի բոլոր մակարդակները՝ ըստ բաժինների և ենթաբաժինների:

Հեղինակները հայերենի ուսուցման մեթոդները համապատասխանեցրել են միջազգային չափորոշիչներին՝ բազմալեզու միջավայրում հայերենի ուսուցումը դարձնելով ավելի մատչելի:

**Սուքիասյան Հ., Քոշատաշյան Ս., ՀՀ բուհերում
օտարերկրացի ուսանողների դասավանդումը և
ուսումնառությունը (հոդված)**

Հոդվածում հիմնականում կարևորվում է հայերենի ուսուցման անհրաժեշտությունը բազմալեզու միջավայրում: Հայերենի ուսուցումը բազմալեզու միջավայրում մեծ հետաքրքրություն է առաջացրել, ուստի պետք է կարևորել տարբեր բնագավառներին համապատասխան նոր դասագրքեր կամ ձեռնարկներ ունենալու անհրաժեշտությունը: Դրանք պետք է լինեն մատչելի, գրված լեզվական բարձր մակարդակով՝ ուսումնառության արդյունավետությունն ապահովելու համար: Ուսուցման գործընթացում ամեն մի դրդապատճառ կարող է հիմնավորվել օտարերկրացի ուսանողի համար՝ պարտադիր ուսուցումը, հետաքրքրությունը, լեզուներ

սովորելու ցանկությունը, միջավայրը, հաղորդակցման միջավայրը և, իհարկե, մասնագիտական պահանջը:

Հայերենի հաղորդակցական հմտությունները զարգացնելը խթանող կամ խոչընդոտող գործոններ կան: Ըստ հեղինակների՝ խթանող գործոն են մատուցման եղանակը և ուսանողի տրամադրվածությունը: Խոչընդոտող գործոններից է հասանելիությունը, ձեռնարկների ոչ բավարար մատուցման եղանակը, որոնցում պակասում են ճանաչողական բնագրերը տվյալ երկրի, ինչպես նաև հոգևոր մշակույթի մասին:

Կարևորվում է նաև գիտելիքները, հմտությունները գնահատելու առկա համակարգը՝ բանավոր քննություն, գրավոր և բանավոր հարցում, թեստեր, բալային համակարգ, որը համապատասխանեցված է ուսուցման ժամանակակից մեթոդներին:

Ուսումնական ծրագրերում հայկական մշակույթը բավարար չափով է ներկայացված և ներառված ուսումնական գործընթացում: Տեղեկատվական արդի ժամանակաշրջանում ուսուցմանը զուգահեռ բազմաթիվ են հոգևոր-մշակութային բնագրերը: Ուսումնական գործընթացում բազմաթիվ միջոցներ կան սոցիալ-մշակութային իրազեկվածության և միջմշակութային փոխըմբռնման կարգավորման համար:

Ինչ վերաբերում է օտարերկրացիներին և, ընդհանրապես, հայերենի ուսուցմանը հատկացված ժամաքանակին, ապա այն ակադեմիական ժամաքանակ է, որը նախատեսված է ուսումնական պլանով: Բայց կա մի կարևոր հանգամանք՝ պայմանավորված ուսանողների ընդունակությամբ և ցանկությամբ: Ըստ միջազգային չափորոշիչների՝ կարելի է ուսուցման ժամաքանակն ավելացնել, որը, իհարկե, պայմանավորված է այլ հանգամանքներով՝ հաշվի առնելով և վերլուծելով բուհում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի տեսական ու գործնական բաղադրիչների տարանջատումը և այլ գործոններ: Հոդվածում հիմնականում կարևորվում է հայերենի ուսուցման անհրաժեշտությունը օտարերկրացի ուսանողների համար: Ուսուցման գործըն-

թացում առաջնայինը օտարերկրացի ուսանողի՝ լեզուներ սովորելու ցանկությունն է, որի համար անհրաժեշտ է ձևավորել հաղորդակցման միջավայր:

**Ֆիշենկճեան Ա., Արեւմտահայերէնի խօսքի մասերու
քերականական կարգերու քննութիւն
(անորոշ ածական թէ՛ անորոշ դերանուն) (հոդված)**

Արեւմտահայերէնի քերականութեան յետայտընեանական եւ յատկապէս վաթսունական թուականներէն ետք մինչեւ 1980-ական թթ., Սփիւռքի դասագիրքերու մէջ տեղ գտած են անորոշ ածական եւ անորոշ դերանուն եզրոյթները, որոնք դասագիրքերու հեղինակներու կողմէ հիմնաւորուած են համապատասխան օրինակներով:

Սակայն իրավիճակը կը փոխուի: Ութսունական թուականներէն ետք Կարօ Առաքելեանի եւ Յակոբ Չոլաքեանի դպրոցական դասագիրքերը ուսումնասիրելով չենք հանդիպիր անորոշ ածական եզրոյթին, այլ միայն՝ անորոշ դերանուն եզրոյթին:

Ուստի հարց կը ծագի, թէ որն էր այս փոփոխութեան շարժառիթը, եւ ինչպէս կարելի է հիմնաւորել զայն, նկատի առած որ դասագիրքերու մէջ այդ մասին ոչինչ գրուած էր հեղինակներու կողմէ:

Վաթսունական թուականներու երկրորդ կէսին, երբ Հայաստանէն Սփիւռք սկսան առաքուիլ Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի յանձնարարութեամբ եւ հայրենի լեզուաբան–բանասէրներու կողմէ պատրաստուած «Հայերէն լեզուի դասագիրք»-ը: Աւելին, նոյն ժամանակահատուածին սփիւռքահայ ուսանողներ սկսած էին իրենց ուսումնառութիւնը կատարելագործել հայրենիքէն ներս, ուստի հնարաւոր էր նոր գիտելիքներու ներթափանցումը կատարուէր այդ ճամբով:

«Հայերէն լեզուի դասագիրք»-ի ուսումնասիրութեամբ պարզուեցաւ, որ այդ դասագիրքի մէջ որպէս ածական կը նշուէին միայն որակականն ու յարաբերականը: Հետաքրքիր էր դերանուն

խօսքի մասի բնութագրումը, տեսակներու համակարգումը: Հայրենի հեղինակներու համաձայն դերանուններու տեսակներն են՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական-յարաբերական, որոշեալ, անորոշ: Եւ որովհետեւ յօդուածը անմիջապէս կ'առնչուի աորոշ դերանունին, ուստի ուշադրութիւն գրաւեց «Անորոշ կամ մասնական դերանուն» արտայայտութիւն, «որովհետեւ առարկայի կամ յատկանիշի մասնական իմաստ կ'արտայայտէ անորոշ կերպով»:

Յօդուածը կ'անդրադառնայ արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու ընդմէջէն արեւմտահայերէնի պատմական հարիւրամեայ ուղիին: Մինչ օրս արեւմտահայերէնի քերականութեան պատմութեան ամբողջական ուսումնասիրութիւն չէ կատարուած, ուստի անհրաժեշտ է զայն կատարել եւ ըստ այնմ համատեղել, կանոնակարգել եւ գիտական հարթակի վրայ ներկայացնել արեւմտահայերէնի քերականագիտական առանձնայատկութիւնները՝ շեշտը դնելով առաւելապէս անոր շարահիսսական կառուցուածքի եւ արեւմտահայերէնի լեզուի մշակոյթի զարգացման հիմունքներուն վրայ, քանի որ հրապարակէն կը բացակային նոյնանման ձեռնարկներ, որոնց նպատակը պէտք է ըլլայ լեզուի առաջընթացը եւ ոչ թէ յետընթացը:

Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

2020 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համբարձումյան Վ.Գ., Հայերենը և կելտական լեզուները (համեմատական-տիպաբանական տարբերակայնություն), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, Ե., 272 էջ:

ԲԱՌԱՐԱՆ

Ղուկասյան Ս.Վ., Առօրյա բառարան, «Վան Արյան» հրատարակչատուն-տպագրատուն, Ե., 2020, 397 էջ:

ՀՈՂՎԱԾՆԵՐ, ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Ավետյան Ս.Ռ., Արդի արևելահայերենի շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները (համաժամանակյա և տարածամանակյա քննություն), «Հայագիտության հարցեր», 2020, № 2, Ե., էջ 206-219:
2. Ավետյան Ս.Ռ., Համաբանական փոփոխությունների երկու միտում արդի արևելահայերենի առիստի հարացույցում (համաժամանակյա և տարածամանակյա քննություն), Ե., «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2020, 1, էջ 24-39:
3. Ավետյան Ս.Ռ., Մի շարք բարբառներում ուց վերջավորության տարածումը որոշակի անկանոն բայերի վրա խմբային նմանության սկզբունքով, «Հայագիտության հարցեր», Ե., 2020, 1, էջ 188-200:

4. Ավետյան Ս.Ռ., Որքանով թեքական կամ կցական է հին հայերենի անվանական հոլովումը, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2020, 3, Ե., էջ 40-53:
5. Բաղդասարյան Ս.Ե., Պարզ նախադասության դրսևորումները հայերենի առածներում և ասացվածքներում՝ ըստ հաղորդակցման նպատակի, «Լեզու և խոսք-2» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, 2020, Ե., էջ 3-20:
6. Գրիգորյան Գ.Գ., Ժամանակակից հայերենի հպաշփական հնչյունների փորձառական ուսումնասիրություն, «Լեզու և խոսք-2» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 42-53:
7. Գրիգորյան Գ.Գ., Հայերենի գործածությունը Կալիֆոռնիա նահանգում՝ ըստ խոսողների ծննդավայրի, «Արդի հայերենագիտության խնդիրներ» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 57-66:
8. Հակոբյան Ֆ.Ա., Բառակազմական վերլուծության մեքենայացման խնդիրներ, «Լեզու և խոսք-2» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 73-84:
9. Համբարձումյան Վ.Գ., Գրիգոր Նարեկացու բառապաշարի մի քանի բառի մեկնություն և ստուգաբանություն, «Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Պ.Մ. Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին», Վանաձոր, 2020, էջ 69-78:
10. Համբարձումյան Վ.Գ., Հովհ. Թումանյանի գեղարվեստական երկերում հայերենի տարբերակային ձևերի գործածության մասին, «Հովհ. Թումանյան-150 (Հոբելյանական գիտաժողովի նյութերի ժողովածու)», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, Ե., էջ 432-439:
11. Համբարձումյան Վ.Գ., Անդրադարձ Թեոդորոս Քոթենաւորի երկերի բառապաշարին, «Էջմիածին» (ամսագիր), Ե., 2020, Գ (մարտ), էջ 68-86:
12. Համբարձումյան Վ.Գ., Փափսոս Բուզանդի «Այծից հայոց արքայ» արտահայտությունը. Իմաստաբանություն և տիպա-

- բանություն, «Հանրապետական գիտաժողովի նյութեր՝ նվիրված Ա.Ա. Աբրահամյանի ծնոյան 100-ամյակին», Ե., «Էդիթ պրինտ» հրատ., 2020, էջ 149-157:
13. Համբարձումյան Վ.Գ., Ստուգաբանական դիտարկումներ, «Լեզու և լեզվաբանություն», 2020, 1, Ե., էջ 78-91:
 14. Համբարձումյան Վ.Գ., Հայերենի ուսումնասիրության հարցերը «Բազմավեպ»-ի էջերում (1843-1893 թթ.), «Լեզու և լեզվաբանություն», 2020, 2, Ե., էջ 74-86:
 15. Միքայելյան Ս.Ա., Արաբական փոխառությունները Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում, «Լեզու և լեզվաբանություն», Ե., 2020, 2, էջ 22-28:
 16. Միքայելյան Ս.Ա., «Արագածոտնի մարզի բարբառային միավորների՝ արաբերենից փոխառված բառաշերտը», «Արդի հայերենագիտության հարցեր» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 160-168:
 17. Սարգսյան Մ.Ա., Հայալեզու տեքստերի էլեկտրոնային նոր սրբագրիչի սկզբունքները, «Լեզու և լեզվաբանություն», 2020, 2, Ե., էջ 10-17:
 18. Սարգսյան Մ.Ա., Հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարանի առանձնահատկությունները, «Լեզու և խոսք-2» գիտական հոդվածների ժողովածու, 2020, Ե., էջ 114-125:
 19. Սարգսյան Մ.Ա., Նվիրյալ լեզվաբանը. Գևորգ Ջահուկյան, Պատմա-բանասիրական հանդես, հ.2, 2020, Ե., էջ 261-265:
 20. Սարգսյան Մ.Ա., Հոմանիշ տերմինները Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական աշխատություններում, «Ջահուկյանական ընթերցումներ», 2020, Ե., էջ 32-40:
 21. Միմոնյան Ն.Մ., *Ձուլել/թափել* բայերի իմաստային աղերսները, «Ջահուկյանական ընթերցումներ», 2020, Ե., էջ 118-125:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ավետյան Ս., Համաբանական փոփոխությունների երկու միտում արդի արևելահայերենի աորիստի հարացույցում (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն) (հոդված)

Հոդվածում համաժամանակյա և տարաժամանակյա քննության է ենթարկվում արդի արևելահայերենի ե խոնարհման պարզ բայերի, պատճառական բայերի և մի խումբ անկանոն բայերի աորիստի ձևերի համաբանական փոփոխությունների երկու միտում, որոնցից առաջինը դրսևորվում է նախկին արմատական և ռեական հիմքերի ցոյականացման (տվի/տվեցի, բերի/բերեցի, հեռացրի/հեռացրեցի), իսկ երկրորդը՝ սկզբնական ցոյական հիմքերի ապացոյականացման տեսքով: Նշվում է, որ հայերենում թե՛ պատճառական բայերի և թե՛ մի խումբ անկանոն բայերի աորիստի ցոյական տարբերակները առաջացել են համաբանական-ձևաբանական փոփոխության արդյունքում: Սակայն պատճառական բայերի ցոյական ձևերը գրական լեզվում չեն դարձել կանոնիկ մեկ այլ հակադիր միտումի՝ անբարեհունչ արտասանությունից խուսափելու պատճառով: Մինչդեռ որոշ բարբառներում այդ երկու հակադիր միտումների մրցակցային պայքարի հետևանքով հարաբերականորեն կայուն գուգաձևություն է հաստատվել, իսկ այլ բարբառներում տիրապետող է դարձել այդ միտումներից մեկը կամ մյուսը: Ինչ վերաբերում է ե խոնարհման պարզ բայերի աորիստի նախկին ցոյական ձևերի ապացոյականացման, իսկ անանցողական բայերի դեպքում՝ նաև կրավորաձևացման միտումներին, ապա ըստ հոդվածագրի՝ վերջիններս արդի խոսակցական արևելահայերենին են անցել բարբառներից, որոնցում դրանց առաջացման համար պատմականորեն առկա են եղել մասամբ հին հայերենից ժառանգված, մասամբ էլ հայերենի հետագա զարգացման ընթացքում ի հայտ եկած մի շարք նախադրյալներ ու

գործոններ: Բացի այդ, հոդվածագիրը նորագույն լեզվաբանական նվաճումների լույսի ներքո փորձում է բացատրել մինչև օրս բացատրություն չստացած այն հարցը, թե ինչու՝ ե խոնարհման պարզ բայերի դեպքում կրավորական *վ* ածանցը ավելանում է անմիջապես բայարմատին (հմմտ. սիր-ել, սիր-վ-ել), մինչդեռ մնացած բոլոր (այդ թվում՝ ա խոնարհման պարզ) բայերի դեպքում այն ավելանում է աորիստի ցոյական հիմքին (հմմտ. աղ-ալ, աղաց-վ-ել և այլն):

Ավետյան Ս., Մի շարք բարբառներում ուղվերջավորության տարածումը որոշակի անկանոն բայերի վրա խմբային նմանության սկզբունքով (հոդված)

Հոդվածագիրը փորձում է մի շարք բարբառներում պատճառական բայերի աորիստի եզ. 3-րդ դ.. -ուց վերջավորության՝ առաջին հայացքից տարօրինակ ու անբացատրելի թվացող համաբանական տարածումը որոշակի անկանոն բայերի վրա (հմմտ. Լոռու խոսվածքի դըրուց, տըվուց, բերուց, թողուց աորիստի ձևերը) կարելի է բացատրել խմբային նմանության սկզբունքով: Վերջինս չափազանց կարևոր նշանակություն ունի ճանաչողական գործընթացում առարկաների ու երևույթների, այդ թվում՝ քերականական ձևերի կարգադասման (categorization) մեջ: Ըստ այդմ՝ դնել բայի աորիստի հիմքը, հնչյունաշարակարգային կառուցվածքով նման լինելով պատճառական բայերի աորիստի հիմքի վերջնամասին (հմմտ. դըր-ի, դըր-իր... և հաս-ցըր-ի, հաս-ցըր-իր...), առանցքային դեր է խաղացել անկանոն բայերի այս խմբի ձևավորման հարցում՝ հանդես գալով որպես տվյալ խմբի հիմնանդամ (prototype): Այդ առումով ուշագրավ է Լոռու խոսվածքում *ղընել* բայի նաև եզ. հրամ. *ղըրո՛ւ* գուգաձևը՝ կազմված դարձյալ պատճառական բայերի հետևողությամբ: Ի դեպ, Լոռու խոսվածքում աորիստի հիմքի և՛ միավանկությունը, և՛ CVC հնչյունաշարակարգային կառուցվածքը խոսողներն ըմբռնել են որպես հավասարապես կարևոր ու բնութագրական հատկանիշներ այդ

բայերի խմբային պատկանելիության համար: Այդ իսկ պատճառով *անիլ/անել* և *ասիլ/ասել* բայերը, ունենալով VC հնչյունաշարակարգային կառուցվածք, չեն միացել այս խմբին և չեն ստացել *-ուց* վերջավորություն: Սակայն Շամշադին-Դիլիջանի և Աշտարակի խոսվածքներում այդ բայախումբը հետագա ընդլայնման է ենթարկվել շնորհիվ այն բանի, որ այստեղ VC հնչյունաշարակարգային կառուցվածքը ևս այդ բայախմբի համար դարձել է թույլատրելի (հմմտ. ար-ի, ար-իր, ար-ուց... աորիստի ձևերը):

**Ավետյան Ս., Արդի արևելահայերենի շեշտափոխական
ձայնավորային հերթագայությունները (համաժամանակյա
և տարաժամանակյա քննություն) (հոդված)**

Հոդվածը նվիրված է արդի արևելահայերենի հնչյունական հերթագայությունների համաժամանակյա և տարաժամանակյա քննությանը, որոնք դասագրքերում և քերականական գրքերում անվանվում են շեշտափոխական ձայնավորային հնչյունափոխություններ: Թեև այդ բոլոր հերթագայությունները առաջացել են կանոնավոր հնչյունափոխության՝ շեշտանախորդ վանկում որոշ ձայնավորների և երկբարբառների թուլացման և/կամ աղման հետևանքով, այժմ նրանք այլևս հնչյունական գործուն օրինաչափություններ չեն, այլ արդեն այս կամ այն չափով բառայնացված և քերականացված բնույթ ունեն: Մյուս կողմից՝ այժմ համաբանական համահարթեցման բուռն գործընթաց է տեղի ունենում, որով էլ պայմանավորված է հնչյունափոխված և անհնչյունափոխ գուգաձևերի մեծ քանակը արդի լեզվում: Ընդ որում՝ կիրառահաճախականությունը, ինչպես և սպասելի է, իր պահպանողական հետևանքային ազդեցությամբ առանցքային դեր է խաղում՝ գուգաձևային տարբերակների ընտրության հարցում: Ըստ այդմ՝ սկզբնական հերթագայությունները համեմատաբար լավ պահպանվել են, և հնչյունափոխված տարբերակները դեռ ավելի նախընտրելի են առավել հաճախագործածական բառերի դեպքում: Եվ ընդհա-

կառակը, համեմատաբար քիչ գործածական բառերի պարագայում այդ հերթագայությունները գրեթե վերացել են, և ողջ հարացույցում ընդհանրացել են անհնչյունափոխ տարբերակները: Իսկ այն դեպքերում, երբ զուգաձևության փուլը դեռ շարունակվում է, անհնչյունափոխ տարբերակն արդեն ընկալվում է որպես ավելի նախընտրելի և կանոնիկ գրական լեզվում:

Ավետյան Ս., Որքանո՞վ թեքական կամ կցական է հին հայերենի անվանական հոլովումը (հոդված)

Ընդունված է ասել, որ հին հայերենի անվանական հոլովումը գերազանցապես կուտակական (թեքական) բնույթ ունի, բայց հանդես է բերում նաև առանձնականության (կցականության) որոշ տարրեր: Սակայն հետազոտողների կարծիքները տարամիտվում են այն հարցում, թե հարացույցի կոնկրետ ո՞ր ցուցիչներն են կուտակական, և որո՞նք՝ առանձնական: Հոդվածում փորձ է արվում ցույց տալու, որ գրք. ք ձևությո՜ւնը ակնհայտորեն առանձնական հոգնակերտ է միայն հոգնակի գործիականում, մինչդեռ հոգնակի ուղղականում կուտակական հոլովաթվային ցուցիչ է թե՛ բաղաձայնական և թե՛ ձայնավորական հոլովական տիպերի դեպքում: Թեև եզակի ուղղականի զրոյական վերջավորությունը կցականությանը բնորոշ երևույթ է, այդուհանդերձ եզակիում և հոգնակիում գործող սինկրետիզմի ոչ նույնական (տարատիպ) օրինաչափությունները անխուսափելիորեն կուտակական (հետևաբար նաև թեքական) բնույթ են ապահովում հոգ. ուղղ. ք ձևությո՜ւնի համար: Իսկ բաղաձայնական հիմքով հոլովական տիպերի դեպքում հոգ. ուղղ. ք ձևությո՜ւնի կուտակական բնույթին նպաստում է նաև եզակի ուղղականի և հոգնակի ուղղականի հոլովական հիմքերի տարբերությունը (հիմքային տարբերակայնությունը): Այդպես էլ հոգ. հայց.-ներգ. -ս և հոգ. սեռ.-տր.-բաց. -ց վերջավորությունների կուտակական բնույթի (այսինքն՝ հոլովաթվային կազմիչներ լինելու) մասին են վկայում, մի կողմից, դարձյալ սինկրետիզմի տարբեր դրսևորումները և հաճախ եզակիի ու

հոգնակիի համապատասխան հոլովաձևերում հոլովական հիմքերի ոչ նույնականությունը, մյուս կողմից՝ որոշակի հոլովական տիպերի դեպքում նաև այն հանգամանքը, որ հոգ. սեռ.-տր.-բաց. -ց վերջավորությանը եզակի թվի համապատասխան ձևում հակադրվում է մեկ այլ կուտակական հոլովա-թվային կազմիչ՝ կա՛մ եզ. սեռ.-տր.-բաց. -յ, կա՛մ էլ եզ. բաց. -է վերջավորությունը:

**Բաղրամյան Ս., Պարզ նախադասության դրսևորումները
հայերենի առաձներում և ասացվածքներում՝ ըստ
հաղորդակցման նպատակի (հոդված)**

Հոդվածում անդրադարձ է կատարվում պարզ նախադասության դրսևորումներին հայերենի առաձներում և ասացվածքներում՝ ըստ հաղորդակցման նպատակի: Ըստ հաղորդակցման նպատակի՝ *պարզ նախադասությունները* ժամանակակից հայերենում բաժանվում են չորս խմբի կամ տեսակների: Պատմողականը հայերենի առաձներում և ասացվածքներում ամենատարածված և ամենաշատ գործածական նախադասությունն է: Պատմողական նախադասության ստորոգյալը հայերենի առաձներում և ասացվածքներում կարող է արտահայտվել սահմանական, հարկադրական, ենթադրական, ինչպես նաև ըղձական եղանակի բայաձևերով: Նշվում է, որ այսպիսի առած-ասացվածքներում բայերը հարկադրական եղանակով քիչ են հանդիպում: Պատճառն այն է, որ այս եղանակը ցույց է տալիս հարկադրաբար կատարվելիք գործողություն, մինչդեռ առաձներն ու ասացվածքները ժողովրդական խրատներ են, խորհուրդներ, բայց ոչ պարտադրանքներ:

Հայերենի առաձներում և ասացվածքներում հրամայական նախադասության ենթական մեծ մասամբ գեղջվում է, որովհետև բայի երկրորդ դեմքը ցույց է տալիս, որ ենթական խոսակիցն է: *Դու, դուք* դերանունները հրամայական նախադասության մեջ կիրառվում են այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում զատել կամ շեշտել նրան կամ նրանց, ում ուղղված է հրամանը:

Հարցական նախադասությունների ստորոգյալը քերականական տեսանկյունից որևէ առանձնահատկություն չունի և հայերենի առած-ասացվածքներում արտահայտվում է սահմանական, ըղձական և ենթադրական եղանակներով:

Բացականչական նախադասության ստորոգյալը այս դեպքում արտահայտվում է բայի ըղձական և ենթադրական եղանակներով, բացի դրանից՝ բացականչական նախադասությունների ձևավորման մեջ կարևոր դեր են կատարում նաև ձայնարկությունները և հարցահարաբերական դերանունները: Հայերենի առածներում և ասացվածքներում առավել տարածված են անվանական անդեմ բացականչական նախադասությունները:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ըստ հաղորդակցման նպատակի, կարելի է հանդիպել պարզ նախադասության բազմազան դրսևորումներ՝ համառոտ և ընդարձակ, միակազմ և երկկազմ, հաստատական և ժխտական, ընդ որում, նախադասությունների այդ դրսևորումների շրջանակներում կարելի է ցույց տալ հայերենի լեզվաքերականական հնարավորությունների անսպառ իրացումները և բացահայտել նրանց ոճական արժեքը:

Գրիգորյան Գ., Ժամանակակից հայերենի հպաշփական հնչյունների փորձառական ուսումնասիրություն (հոդված)

Հոդվածում հայերենի հպաշփական բաղաձայնները ուսումնասիրվել են ձայնի վերլուծության փորձառական հնչյունաբանության նորագույն ծրագրերով և մեթոդներով, որոնք մեկ անգամ ևս ապացուցել են, որ սրանք նույնքան «պարզ» հնչյուններ են, որքան ձայնեղները կամ ձայնորդները: Հպաշփական բաղաձայնները ուսումնասիրելիս օգտագործվել են նոր օրինակներ, հնչյունական դիրքեր և հնչյունական համակցումներ՝ համակարգչային նորագույն ծրագրերի կիրառմամբ: Դասակարգվել են ժամանակակից հայերենի հպաշփական հնչյունների վերաբերյալ հայ լեզվաբանների կարծիքները: Հավաքվել են հպաշփական բաղաձայններ պարունակող բառերի շարքերը՝ որոշակի սկզբունքներով: Նշված

բառաշարքերը ձայնագրվել են և ներածվել համակարգիչ, վերափոխվել WAV կամ MP3 տեսակի, մտցվել Պոռաատ ծրագրի մեջ, որից հետո կատարվել են հպաշփականների ֆիզիկական չափեզրերի հաշվարկներ և տվյալների մշակում: Կազմվել են հպաշփական բաղաձայնների շարքեր՝ ըստ տևողության, ուժգնության և ֆորմանտների թվային տվյալների, որոնց համեմատությունից կարելի է եզրակացնել հետևյալը:

Հպաշփական բաղաձայնների տևողությունը տատանվում է 0.03 միլիվայրկյանից 1 միլիվայրկյան հատվածում, և ըստ նվազման՝ ունենք բաղաձայնների հետևյալ շարքը, որի մեջ ամենից տևականն են Յ և Չ բաղաձայնները, ամենից քիչ՝ Ճ-ն:

Հպաշփական բաղաձայնների ուժգնությունը տատանվում է 60.8 դեցիբելից 68.1 դեցիբել սահմաններում, և ըստ նվազման՝ ունենք բաղաձայնների հետևյալ շարքը, որի մեջ ամենից ուժգին են Ճ և Ջ բաղաձայնները, ամենից թույլը՝ Ծ-ն:

Ինչ վերաբերում է ֆորմանտներին, ապա նրանց տատանման սահմաններն են առավելագույնը 3570 հերց և նվազագույնը 2705 հերց: Ըստ նվազման՝ ունենք բաղաձայնների հետևյալ շարքը, որի մեջ ամենից ուժգինն է Ճ բաղաձայնը, ամենից թույլը՝ Ծ-ն:

Հպաշփական բաղաձայնների այս 3 շարքերը համեմատելիս նկատելի է, որ Ճ բաղաձայնը 2 անգամ հայտնվում է շարքի առաջին տեղում, որը խոսում է նրա առավել ուժեղ լինելու մասին, իսկ Ծ բաղաձայնը 2 անգամ հայտնվում է շարքի վերջում, որը խոսում է նրա համեմատական թուլության մասին:

Գրիգորյան Գ., Հայերենի գործածությունը Կալիֆոռնիա նահանգում ըստ խոսողների ծննդավայրի (հոդված)

Հոդվածում ըստ վիճակագրական տվյալների՝ ուսումնասիրվել է հայերենի գործածության հաճախականությունը Կալիֆոռնիա նահանգի մի շարք քաղաքներում: Հաշվի առնելով սփյուռքում հայերենի գործածության դանդաղընթաց կամ արագընթաց

նվազման և վատագույն դեպքում՝ անհետացման իրողությունը՝ հողվածագիրը պարզել է հայերենի գործածության աստիճանը և հաճախականությունը հայկական ամենամեծ գաղթօջախներից մեկում՝ ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգում: Ուսումնասիրության աշխարհագրական սահմանները ներառել են Գլենդել, Բրոքանկ, Մոնտեբելլո, Հոլիվուդ, Հյուսիսային Հոլիվուդ, Լոս Անջելես և մի քանի այլ քաղաքներ: Ուսումնասիրության հիմնական մեթոդը սոցիոլոգիական հարցման եղանակն էր, որի նպատակով կազմվել է հարցաթերթիկ՝ վիճակագրական առավել ճիշտ պատկեր ունենալու ակնկալիքով: Ուսումնասիրության նպատակն էր պարզել, թե որքանով է պահպանվում հայերեն խոսքը ընտանիքներում՝ ելնելով անձի, ինչպես նաև նրա ծնողների և մեծ ծնողների ծննդավայրից: Ըստ դիտարկումների և վիճակագրական տվյալների՝ ընտանիքում հայերեն են խոսում Սիրիայի հայ ներկայացուցիչները (100%): Հաջորդում է Լիբանանը (75%), Հայաստանը (73.6%), Իրանը (73.1%) և այլ երկրներ՝ Վրաստան, Ադրբեջան, Արցախ, Ռուսաստան, Լեհաստան, Ուկրաինա, Քուվեյթ, Իրաք, Թուրքիա:

Հարցվածների ամենամեծ տոկոսը կազմում են ԱՄՆ-ում ծնվածները, որոնք ընտանիքում խոսում են անգլերեն, (9%), միջին դիրք է գրավում Հայաստանը (3.6%) և ամենից փոքր տոկոսն արձանագրվել է Իրան, Լիբանան, Սիրիա երկրներում ծնված անձանց համար: Թե՛ անգլերեն և թե՛ հայերեն խոսող ընտանիքներում արձանագրվել է հետևյալ պատկերը. 26.9% են կազմում Իրանում ծնվածները, ովքեր խոսում են խառը՝ հայերեն և անգլերեն: Նույն դասի ցուցանիշը նվազ տվյալներով ներկայացնում է Լիբանանը (25%), որից հետո նվազման կարգով գալիս է Հայաստանը (20%) և ապա՝ ԱՄՆ-ն (9%): Համապատասխան հաշվալներ են արվել նաև ըստ անձի ծնողների ծննդավայրի, ինչպես նաև ըստ անձի մեծ ծնողների (տատիկ պապիկների) ծննդավայրի:

Լրացված հարցաթերթիկների ընդհանրացված տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ գերակշիռ մեծամասնությամբ ընտանիքում խոսում են հայերեն (ավելի քան 70%): Անգլերենն օգտագործողների քանակը նվազագույնն է (2%-ի սահման-

ներում): Ընտանիքում հայերենին զուգակցվում է նաև անգլերենը (25-26%):

Հակոբյան Ֆ., Բառակազմական վերլուծության մեքենայացման խնդիրներ (հոդված)

Հոդվածը նվիրված է բառերի բառակազմական վերլուծության մեքենայացման հնարավորություններին և խնդիրներին: Հայերենի բառապաշարի, ինչպես նաև քերականական համակարգի կառուցվածքային տարբեր միավորների ամբողջական ձևային նկարագրությունը կնպաստի հայերենի համակարգչային մշակման ծրագրեր ստեղծելուն: Հատկապես տեքստի մեքենական մըշակման առցանց համակարգի միջոցով հնարավոր կլինի կատարել տեքստի տրոհում նախադասությունների, նախադասությունները՝ բառակապակցությունների, բառակապակցությունները՝ բառաձևերի, բառաձևերը՝ բառերի, վերջիններիս կազմում էլ բառի *հիմնական և երկրորդական ձևությունների առանձնացում*: Մեքենական եղանակով տեքստի՝ լեզվական խոշոր միավորի աստիճանական տրոհման միջոցով կհանգենք լեզվի իմաստային նվազագույն միավորին՝ *ձևույթին*: Տեքստի ավտոմատ մշակման այսպիսի համակարգը կարող է հաջողությամբ ծառայել լեզվի մակարդակային բոլոր միավորների քննությանը՝ մեքենայացնելով կիրառական ամենատարբեր բնագավառներում տարվող աշխատանքները:

Նշվում է, որ բառակազմական մեքենական վերլուծության համար նախնառաջ անհրաժեշտ է. ա) սահմանել այն խնդիրները, որոնք պետք է լուծի բառակազմական վերլուծության համակարգը, բ) որոշել համակարգի տեխնոլոգիական հենքը՝ ճիշտ ընտրելով ծրագրավորման այն լեզուները, որոնցով հնարավոր կլինի առավել հաջողությամբ ձևայնացնել հայերենի բառապաշարը, գ) կատարել քերականության ձևային նկարագրություն, քանի որ ձևաբանականորեն փոփոխված բառի բառակազմական վերլու-

ծությունն ամենից առաջ ենթադրում է բառահարաբերական ձե-
վույթների առանձնացում, դ) կազմել երկրորդական բառակազ-
մական ձևույթների՝ նախածանցների, վերջածանցների ամբողջա-
կան ցանկ, ե) ըստ բառարանային նյութի՝ մշակել բառացանկ,
որում արմատի հնչյունակապակցությունը և ածանցը ունեն նույն
հնչյունական կազմը:

Պարզելու համար, թե հայերենի բառակազմության ուսում-
նասիրության ուղղությամբ տարված աշխատանքները ինչ չափով
կարող են նպաստել բառակազմության ձևային նկարագրությանը,
տեքստի մեքենական վերլուծության առցանց համակարգում բա-
ռերի բառակազմական վերլուծության մեքենայացմանը, հեղի-
նակն անդրադառնում է բառակազմությանը նվիրված արժեքավոր
տեսական ուսումնասիրություններին, բառերի բառակազմական
բնութագիրը ներկայացնող բառարաններին:

Ընդհանուր առմամբ՝ ցանկացած ձևային նկարագրության
առաջնային և հիմնական նպատակը համապատասխան ծրագրա-
շար ստեղծելն է, որի օգնությամբ հնարավոր է մեքենայացնել որևէ
լեզվաբանական աշխատանք: Այս դեպքում բառի բառակազմա-
կան վերլուծությունը ներկայացնող տարբեր բառարաններ ստեղ-
ծելը չի կարող համարվել հայերենի բառակազմության ձևային
նկարագրության վերջնարդյունք: Բառակազմության ձևային նկա-
րագրության հիմնական նատակը պետք է համարել բառակազմա-
կան վերլուծության առցանց համակարգ ստեղծելը, որի օգնու-
թյամբ հնարավոր կլինի լեզվական տարբեր կորպուսների տեքս-
տերի բառակազմական վերլուծություն, բառերի կազմում հիմ-
նական և երկրորդական ձևույթների առանձնացում, տվյալ ձևույ-
թով կազմված բառերի ցանկի մեքենական կազմում և այլն:

Հոդվածում նշվում է, որ թեև հնարավոր չէ ամբողջությամբ
մեքենայացնել բառակազմական վերլուծության ողջ գործընթացը,
սակայն բառերի բառակազմական մեքենական վերլուծության հա-
մակարգ ստեղծելը էապես կոյուրացնի ցանկացած ծավալի տեքս-
տային միավորի բառակազմական վերլուծությունը՝ նպաստելով
բառակազմական օրինաչափությունների ուսումնասիրությանը:

Դա ստեղծելու գլխավոր նախապայմաններից են հայերենի բառակազմության ձևային նկարագրությունը և համակարգի տեխնոլոգիական հենքի ճիշտ ընտրությունը:

**Համբարձումյան Վ., Հայերենը և կելտական լեզուները
(Համեմատական-տիպաբանական տարբերակայնություն)
(մենագրություն)**

Աշխատասիրության մեջ նշվում է, որ հայերենի և կելտական լեզուների առնչության հարցը նախկինում եղել է պատմահամեմատական լեզվաբանության, ներկայումս՝ նաև տիպաբանության ընդհանուր ուսումնասիրության առարկա: Սակայն մինչ օրս չկա այդ լեզուների կամ դրանց որևէ ոլորտի (հնչյունաբանություն, բառապաշար և այլն) վերաբերյալ առանձին (մանավանդ՝ զուգաբանական-տարբերակային) որևէ քննություն:

Հայերենը պատմական ժամանակաշրջանում ներկայանում է, անկախ ընդգրկման ծավալից, գրական միակերպ նորմավորվածությամբ, որին հիմք են հանդիսացել առանցքային բարբառները, ինչպես նաև բնութագրվում է որպես բարբառային-ժառանգորդական մեկ ամբողջություն, կելտականը հայտնի է դառնում բարբառային (ենթաբարբառային և այլն) տարբերակվածությամբ՝ ընդհուպ առանձին լեզուների աստիճանի: Երկու դեպքերում իրենց դերն են ունեցել արտալեզվական հանգամանքները. առաջինի դեպքում արտաքին ուժերի հարուցած դժվարությունը՝ իբրև յուրօրինակ գոյության մի ձև, երկրորդի դեպքում՝ հակամարտ ուժերի անզիջում մրցակցություն՝ անջատողական հետևանքներով: Որակի առումով զուգաբանության մի եզրում հին գրական հայերենն է իր՝ այսօր ոչ այնքան բավարար չափով ուսումնասիրված բարբառներով, իսկ մյուս կողմում կելտական լեզուներն են՝ սոցիալական, տարածքային և գործառական տարբերակվածությամբ, ընդ որում՝ նման անհավասար դրվածքի մեջ անգամ այդ լեզուներն ունեն համեմատելի ակնհայտ համընկումներ:

Նկատվում է, որ հայերենի և կելտական լեզուների առնչությունների հարցը առաջին անգամ է դառնում առանձին քննության առարկա. նախկինում եղել են այս կամ այն չափով համեմատության եզրեր երկու տիպի լեզուների միջև: Նման առնչություններին առանձին անդրադառնալը կարևոր է տարբեր մակարդակի զուգաբանությունների միջոցով դրանց ժառանգորդական գծերի պահպանման և նորի ձեքերման տեմպերի տեսանկյունից՝ կապված ոչ միայն ծագումնային, այլև տարածքային խնդիրների հետ:

Մանրամասնորեն քննվում են զուգադրվող լեզուների արմատի կազմում հնչյունների դրսևորումները, և պարզվում է, որ նախկինում սահմանված ընդհանուր օրինաչափությունների կողքին կան անհամեմատ շատ բացառություններ, որոնք շեղումներ են այդ օրինաչափություններից:

Դիտարկվում են հայ-կելտական բառային զուգաբանությունները, որոնք ևս մինչ օրս չեն եղել առանձին ուշադրության առարկա: Բառիմաստային (թեմատիկ) խմբերն առանձնացվում են համեմատական լեզվաբանության մեջ ընդունված բաշխումով:

Հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների միջև պատմականորեն գոյություն ունեցող լեզվական (հնչյունական, բառարմատային, ձևաբանական և այլն), ինչպես նաև արտալեզվական (մշակութային, առասպելական, հոգևոր և այլն) զուգադիպումների մանրամասն քննությունը հումանիտար գիտության արդիական խնդիրներից է: Հայ-կելտական առնչություններին վերաբերող ներկա ուսումնասիրությունը մի առանձին փորձ է այդ համապարփակ բնագավառում, որը ենթադրում է գիտական աշխատանքի ուրույն հետանկարներ:

**Համբարձումյան Վ., Գրիգոր Նարեկացու բառապաշարի
մի քանի բառի մեկնություն և
ստուգաբանություն (հոդված)**

Հոդվածագիրը նշում է, որ Գրիգոր Նարեկացու երկերը նմուշ են հին գրականից միջին գրականի անցման հայերենի՝ իր ժամա-

նակի լեզվի յուրօրինակ արտահայտություն, անկախ ներքին (գրական-ոչ գրական և այլն) տարբերակվածությունից: Իբրև տիպական օրինակ՝ հեղինակն անդրադառնում է «Տաղ Յարութեան» երկի լեզվին:

Հոդվածում անդրադարձ է կատարվում «Տաղ Յարութեան» երկում գործածված գրական (բանավոր-խոսակցական, բարբառային) բառերին, քերականական ձևերին, գրական նորակազմ բառերին, այլն գանձ, գիլ, տաղ բառերի ստուգաբանությանը: Ներկայացվում են գրական նորմայից շեղվող՝ խոսակցական (բարբառային) բառերի և ձևերի (ձայնավոր հրնչյունի սղում, հպական կամ հպաշփական ձայնեղ բաղաձայնի դիմաց խուլի գործածություն, փոքրացուցիչ-փաղաքշական *-իկ*, *-ակ* մասնիկներով կազմություններ, խոսակցական տարբերակին բնորոշ բառեր, հոգնակիի կազմություն, ժխտականի՝ *չ-ով*, ոչ թե ոչ-ով ձև, բառային հոմանշություն՝ պատկերի համընդգրկման նպատակով, որոշյի առաջադաս գործածություն), գրական կամ խոսակցական բաղադրական հիմքերով նոր կազմությունների գործածություններ, գրական նորմայից դուրս (բանավոր-խոսակցական) բառակազմական հիմքով կամ մտածողությամբ կազմություններ:

Փորձ է արվում տալու հայերեն *գանձ*, *գիլ*, *տաղ* բառերի ծագումը (ստուգաբանությունը):

Այսպիսով՝ Նարեկացու երկերից միայն մեկի լեզվի քննությունը ցույց է տալիս, թե ինչպիսի բառային և քերականական իրողություններ են պարփակված հայ միջնադարյան գրական հուշարձաններում: Դրանց նոր, ավելի առարկայական ուսումնասիրությունը երևան է բերում ժամանակի մտածողության հիմքով ձևեր, իմաստային տարբերություններ, շարահյուսական աշխարհիկ (ոչ գրաբարյան) կառույցներ, և ավելին՝ բառերի ծագման մանրամասներ, որոնք էական են հայերենի պատմության համար:

**Համբարձումյան Վ., Հովհ. Թումանյանի
գեղարվեստական երկերում հայերենի տարբերակային
ձևերի գործածության մասին (հոդված)**

Հոդվածագիրը հավաստմամբ՝ Թումանյանի երկերի լեզվի ուսումնասիրությունը նախկինում եղել է ոչ ըստ ամենայնի: Մինչ օրս չկա մեծ բանաստեղծի գրական ժառանգության լեզվի ամբողջական քննություն, չկա այդ ժառանգության (գեղարվեստական երկերից բացի թարգմանությունների, հրապարակախոսական հոդվածների, նամակների, նաև ձեռագրական տարբերակների, «մշակումների» և այլնի) բառային-բացատրական ամբողջական քարտարան-բառարան (համաբարբառ):

Ըստ այդմ՝ նշվում է, որ Թումանյանի լեզուն միատարր չէ. այն նոր հայերենն է իր լայնությամբ և խորությամբ, այսինքն՝ նրանում իրենց արտահայտությունն են գտնում գրականը և խոսակցականը, ավանդականը և նորը, նոր գրականի արևելյան և արևմտյան տարբերակները (վերջինս՝ մասնակիորեն) և այլն: Այդ լեզուն ոճական առումով կենդանի է, ամենևին ոչ հեռու:

Առանձնահատուկ նշվում է այն, որ Թումանյանի երկերում առկա է միասնական լեզվի գործածություն, որը բանաստեղծական խոսքի փիլիսոփայության հնարավորություն է: Նրա երկերի լեզվում կարելի է նկատել առնվազն երեք-չորս շերտ՝ անկախ յուրաքանչյուրի ծավալից կամ տեսակարար կշռից. 1) միայն գրական ձևերի գործածություն, 2) գրականի հետ խոսակցական ձևերի գործածություն, 3) արևելահայ գրականի հետ արևմտահայ գրական տարբերակի գործածություն, 4) գրականի հետ բարբառային ձևերի գործածություն:

**Համբարձումյան Վ., Անդրադարձ Թեոդորոս Քոթենավորի
երկերի բառապաշարին (հոդված)**

Հեղինակն անդրադառնում է հայոց եկեղեցու նվիրյալ գործչի՝ Թեոդորոս Քոթենավորի երեք ճառերի բառապաշարի, ավելի

որոշակի՝ նորակերտ բառերի քննությանը: Նորակերտ են առաջին հերթին այն բառերը, որոնք, օրինակ, չկան Նոր հայկազյան բառարանում, նաև, որոշակի վերապահությամբ, այն բառերը, որոնք բերվում են միայն այս հեղինակից առնված վկայությամբ:

Քոթենավորի բառապաշարը անասելիորեն հարուստ է. հոգևոր և իմացական ոլորտում յուրօրինակ է պատկերացումների վերաբերյալ անսպասելի անվանում-բառերի ստեղծմամբ:

Որոշ բառեր հասկանալի կամ բացատրելի կարող են լինել միայն բարբառային (խոսակցական) հնարավոր տարբերակների օգնությամբ: Այդուհանդերձ, լեզվական իրողությունը, եթե նույնիսկ որակենք իբրև բառի դիպվածային գործածություն, մնում է քննության ոլորտում՝ իբրև լեզվի բառապաշարի պատմության փաստ: Ներկայացվում են՝ ա) բառեր, որոնք չկան Նոր հայկազյան բառարանում (դրանք բերվում են ըստ իրենց այս կամ այն խոսքի մասին պատկանելու հատկանիշի), բ) բառեր, որոնք Նոր հայկազյան բառարանում նշվում են միայն Քոթենավորի անունով (դրանք արտացոլում են ոչ միայն տվյալ ժամանակի, այլև, հեղինակի լեզվական մտածողությունը), գ) բառեր, որոնք Նոր հայկազյան բառարանն ունի այլ հեղինակ(ներ)ի, ոչ այս հեղինակի վկայությամբ և այլն:

Հոդվածագիրը հանգում է այն եզրակացություն, որ Քոթենավորի երկերն առանձնանում են բառապաշարի ինքնօրինակ ճոխությամբ, բառերի ոչ սովորական, այլ դիպվածային կիրառությամբ, տարբեր խոսքի մասերի վերաբերող նորակազմություններով:

**Համբարձումյան Վ., Փավստոս Բուզանդի
«Այծից հայոց արքայ» արտահայտությունը.
Իմաստաբանություն և տիպաբանություն (հոդված)**

Հայտնի է, որ Բուզանդի Պատմությունը գրված է ժողովրդական հայտնի ավանդությունների, զրույցների, բանավոր տեղե-

կոթորոնների բանիմաց և գիտուն վերլուծությամբ ու շարադրանքով: Նրանում մեծապես նկատելի են նման բազմաթիվ իրողություններ, որոնց ոչ միայն լեզվական, այլև առասպելական-միֆական քննությունը լիովին տեղին է հայոց հին մշակույթի բնույթի և լեզվի պատմության հիմնաշերտերի ըստ ամենայնի վերհանման տեսանկյունից:

Հոդվածում հեղինակն անդրադառնում է հարցին այն մտածումով, որ նախ՝ *այծ* բառը, լինելով բնիկ, գուցահեռ է միայն հուն. αἴξ «այծ». ձևին, այնուհետև՝ բառի *քաղ* հոմանիշ-տարբերակը ոչ այլ ինչ է, քան *վիշապաքաղ* բառը բառի երկրորդ բաղադրիչ, երրորդ՝ *այծի* տոտեմ-պաշտամունքային երևույթը հիմնովին տարածված է եղել Հայկական լեռնաշխարհի հանրության առասպելական պատկերացումներում, և ըստ այդմ՝ անցած նաև հարևան ժողովուրդներին, տվյալ դեպքում իրանականին, և այս ամենը՝ հիմք է երևույթը բխեցնելու նախահնդեվրոպական ակունքներից՝ ժառանգորդաբար անցած և պահպանված լեռնաշխարհի հնագույն բնիկների լեզվական և առասպելական ձևակերպումների մեջ:

Սույն հատվածի վիպական-առասպելական կողմի մեկնաբանության հարցում, ի թիվս այլ կարգի աշխատությունների, ուշագրավ է Բ. Առաքելյանի մի ուսումնասիրությունը, որը նվիրված է հայոց Վահագնի առասպելին՝ կապված նրա վիշապաքաղ մականիւր-անվանման հետ (այս բառի երկրորդ բաղադրիչն է *քաղ* «արու այծ»): Նա իրավամբ նշում է, որ «վիշապաքաղը հարաբարդված է *վիշապ* և *քաղ* բառերից: *Քաղ* նշանակում էր «արու այծ, նոխազ կամ քոշ», որպիսով բացառվում է *քաղ* արմատի մեջ «քաղել, պոկել առանձնացնել» իմաստ տեսնելը, որ նկատում են նախորդ ուսումնասիրողները:

Պարսից ախոռապետը դիմել է հայոց արքա Արշակին վաղուց ի վեր գոյություն ունեցող, հնավանդ, ուստի առասպելաբար հայտնի մի երևույթի պարսկերեն ձևակերպված արտահայտությամբ, որ թարգմանաբար բերում է Բուզանդը: Ընդ որում՝ հատ-

վածը բերվում է հայոց Վասակի խիզախությունը քաջությունը ցույց տալու նպատակով:

**Համբարձումյան Վ., Ստուգաբանական դիտարկումներ
(հոդված)**

Հոդվածում հեղինակն անդրադառնում է հայ. *այգի* «(խաղողի) աճի միջավայր. այգի» [$<$ հե. *oi- α i($\bar{a}$)], *հաւ(անի)-մ* «հոժար, համաձայն, հավան լինել» ($<$ * g^[h]ab^[h]-), *-սկել* «հսկել» ($<$ հե. *sek'- / *sk'-) և *ստահակ* «գող. գողանալ. թալանել» [$<$ հե. *(s)t^(h)aHi-] բառերի ծագմանը: Ստուգաբանական վերլուծությամբ պարզվում է դրանց բնիկ՝ հնդեվրոպական ծագման լինելը, համեմատություն է անցկացվում ցեղակից մյուս լեզուների հնագույն տվյալների հետ, ըստ հնարավորին վեր է հանվում արմատների իմաստային զարգացման ընթացքը:

**Համբարձումյան Վ., Հայերենի ուսումնասիրության
հարցերը «Բազմավեպ»-ի էջերում
(1843-1893 թթ.) (հոդված)**

Հոդվածում նշվում է, որ նյութերը քաղված են Մխիթարյան միաբանության «Բազմավեպ» հանդեսի 1843-1893 թթ. էջերից, որոնք պայմանական անվանումով ներկայացվում են հետևյալ խմբերի մեջ. ա) Գրաբարի և աշխարհաբարի առնչություն. գ) Հրնչունաբանություն (ուղղագրություն, տառադարձություն, կետադրություն). դ) Բառարանագրություն. բառարաններ. ե) Հայերենի ձևաբանական միավորներին անդրադարձ. զ) Հայ բնագրագիտություն, բանասիրություն, լեզվի ուսուցում և կրթական-ուսումնական գործունեություն. է) Թարգմանական գրականության բնագրի լեզվի վերաբերյալ դիտարկում. ը) Բառաքնություն և ծագումնաբանություն, փոխառություններ. թ) Այլ լեզուների վերաբերյալ գի-

տելիք (լատիներեն, չինարեն և այլն). ժ) Հայոց լեզվի և լեզվաբանության պատմություն.

Մեկ տասնյակ խմբով (համապատասխան ձևակերպմամբ) առանձնացումը, ցույց է տալիս առհասարակ լեզվի, մասնավորաբար հայերենի վերաբերյալ ժամանակին հուզող հարցերի շրջանակը: Հոդվածների հեղինակները հնարավորության սահմաններում տվել են այդ հարցերին լուծումներ, մասամբ մատնանաշել դրանց վերջնական լուծման ուղիներ: Առանձնացվող խմբերում ընդգրկվող հոդվածները քանակի և ծավալի առումով ևս տարբեր են:

Հանդեսի էջերում համեմատաբար լայն ուշադրության առարկա են եղել հայերենի հնչյունաբանությանը (այն է՝ ուղղագրություն, տառադարձություն, կետադրություն), բառապաշարին և ձևաբանությանը վերաբերող հարցերը, ընդ որում՝ դրանց քննարկումն ավելի շատ ունեցել է գործնական բնույթ, իսկ տեսական, առավել ևս այլ լեզուների, ինչպես նաև դրանց հայերենի հետ ունեցած կամ հանդես բերվող առնչությունների հարցերը բավականին քիչ, կարելի է ասել աննշան տեղ են զբաղեցնում:

Եվ հայերենի ծագման բնույթին անմիջական առնչվող հոդվածները մի քանիսն են. այդ ժամանակաշրջանում (1840-1890թթ.) հայ բանասիրության, հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառներում կատարվում էին շրջադարձային քայլեր, իսկ այդ ամենը գրեթե չենք գտնում ամսագրի լեզվագիտական բաժնի հոդվածներում, և դա այն դեպքում, երբ եվրոպացի հայագետների զգալի մասը նախնական կրթությունը այս կամ այն խորությամբ ձեռք էր բերել Մխիթարյան միաբանության միջավայրում: Այս շրջանում, ինչպես հայտնի է, եվրոպական հայագիտությունը հարաճուն զարգանում էր, արևելյան լեզուների մեջ մասնագիտացող աղբյուրագետ-լեզվաբաններից շատերը լուրջ հետաքրքրություն էին ցուցաբերում հայերենի նկատմամբ համապատասխան գիտելիքներ ձեռք բերելով հայագիտական տարբեր հաստատություններում, ի մասնավորի Մխիթարյան միաբանության միջավայրում:

Այնինչ, սրա մասին հիշյալ տարիներին լույս տեսնող «Բազմավեպ»-ի էջերում չենք գտնում այդ կարևոր փաստին վերաբերող որևէ անդրադարձ: Ուստի կարելի է ասել, որ Մխիթարյանները այս շրջանում ավելի շուտ գործնական, քան տեսական խնդիրների են ձեռնամուխ լինում՝ հայերենի գրական կանոնարկում, լեզվի տարածմանը հետամուտ կոնկրետ միջոցառումներ (լեզվի ուսուցում և այլն), հին մատենագիրների ձեռագրերի տպագրություն, լեզվի բառագանձի բառարանային ամբարում, աշխարհի լուսավորական անցուդարձի տեղեկացում ազգին և այլն, որ ժամանակի քաղաքակրթական առումով հրատապ էր և նպատակային:

Այսպիսով՝ ինչպես հասարակական, տնտեսական, մշակութային, առավել ևս կրոնական-եկեղեցական կյանքի բնագավառներում, այնպես էլ լեզվի առումով Մխիթարյան հայրերի ջանքերով հրապարակ բերված «Բազմավեպ» հանդեսը լիովին իրագործել է իր նպատակը՝ սկզբնավորումից առ այսօր լինելով ժամանակին համընթաց, հայոց կյանքը դարձնելով հասկանալի, սատարելով նրա կենսունակությանը:

Ղուկասյան Ս., Առօրյա բառարան

Բառարանում առկա է ավել քան 5000 բառ: Ընդգրկված են ռուսերեն, թուրքերեն, արաբերեն, պարսկերեն բառեր: Օտար բառերը և օրինակները տրվում են այնպես, ինչպես լսվում են, բացատրությունները՝ գրական հայերեն:

Ռուսերեն բառերը տրվում են ըստ երեք բաժնի՝ մեկ արտասանություն ունեցող, մեկից ավելի արտասանություն ունեցող և հարադիր բառեր: Թուրքերեն, արաբերեն և պարսկերեն բառերը ռուսերենի նման չունեն արտասանության տարբերություններ, ուստի բաղկացած են երկու բաժնից՝ բառեր և հարադիր բայեր:

«Արաբերենից թուրքերենին անցած բառեր» ենթաբաժնում նըշվում են այն բառերը, որոնք հայերենը հավանորեն փոխառել է

կա՛մ արաբերենից, կա՛մ թուրքերենից, կա՛մ երկուսից միաժամանակ: Նույնը վերաբերում է նաև պարսկերենից թուրքերենին անցած բառերին: Բառարանն ունի նաև «Բարբառային բառեր» և «Խոսակցական բառեր» ենթաբաժինները: Բառը հայերենում չլինելու դեպքում ստեղծվել է նոր բառ: «Նորակերտ բառեր» ենթաբաժնում առկա է 440 նորակերտ բառ:

**Միքայելյան Ս., Արաբական փոխառությունները
Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական
բառարան»-ում (հոդված)**

Հոդվածում նշվում է, որ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի և Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ի կազմման սկզբունքները, ելնելով դրանց բնույթից, տարբեր են, սակայն, հայերենի արաբական բառաշերտի համակողմանի ուսումնասիրության առումով այս երկու հսկայածավալ բառարանները բավականաչափ կարևորություն ունեն:

«Հայերեն արմատական բառարան»-ում ընդգրկված արաբերեն փոխառությունները, որոնք քաղված են գլխավորապես հայ միջնադարյան մատենագրությունից, բերվում են իրենց համապատասխան բացատրություններով, գործածության սկզբնաղբյուրներով, ստուգաբանություններով, արաբերեն համարժեք ձևերով, որոշ բառերի դեպքում՝ հայերեն բարբառային տարբերակներով: Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ը ներառում է հայերենի՝ V դ. մինչև XX դ. գրեթե կեսերի բառաշաղկապը: Հոդվածագիրը նկատել է, որ Հ. Աճառյանի վերոնշյալ բառարանի բառամթերքից բացի, այս բառարանն ընդգրկում է այնպիսի բառեր, որոնք, ավելի նոր շրջանի պատկանելով, չկան այլ բառարաններում: Այս բառերն առանձին են դիտարկվում, քանի որ, ինչպես նշվում է, հատկապես դրանց շնորհիվ է, որ հնարավոր է հասկանալ, թե փոխատու և փոխառու լեզուները պատմական զարգացման ընթացքում ինչպիսի առնչություններ են ունեցել և այժմ ունեն:

Նկատվում է, որ բառարանի կազմման սկզբունքին համապատասխան՝ արաբերեն փոխառությունները ևս բաժանվում են գործառական և ժամանակագրական տարբեր բառաշերտերի՝ լեզվում ընդհանուր գործածություն ունեցող բառեր, բարբառային բառեր, հազվադեպ կիրառվող բառեր և մեռած բառեր ու նշանակություններ: Հեղինակը, կարևորելով բազմիմաստ բառերի ուսումնասիրությունը, դրանք դիտարկում է բառի պատմական զարգացման համատեքստում, որը հնարավորություն է ընձեռում վերհանելու բազմիմաստությունն առաջնալու օրինաչափությունները և բառիմաստների ներքին կապը: Նշվում է, սակայն, որ առանձին դեպքերում դա այնքան էլ պարզորոշ չէ:

Հոդվածում քննվում են լեզվում ընդհանուր գործածություն ստացած բառային միավորներ: Ուսումնասիրվում են դրանց ստուգաբանական, բառիմաստային զարգացման, ինչպես նաև՝ բառակազմական յուրահատկությունները:

Դիտարկվում են բարբառային և առօրյա-խոսակցական բառային միավորներ: Հեղինակը նկատում է, որ թեև առանձին դեպքերում հնարավոր չի լինում հստակ նշել բառի՝ հայերենին անցնելու ուղիները և ժամանակաշրջանը (դա հնարավոր կլինի, թերևս, ավելի բազմաբնույթ և խոր ուսումնասիրության արդյունքում), սակայն այդ բառային միավորները կենսունակ են հայերենի բարբառային տարբերակներում և առօրյա-խոսակցական լեզվում:

Մեռած կամ հազվադեպ կիրառվող բառային միավորների ուսումնասիրությունից՝ հեղինակը եզրահանգում է, որ դրանք հիմնականում միջնադարյան բժշկության մեջ կիրառվող բուսատեսակների անվանումներ, հարկատեսակներ և զանազան այլ իմաստային (թեմատիկ) խմբերի առնչվող բառային միավորներ են, որոնք անվանող երևույթներն ու հասկացությունները ժամանակակից կյանքի բաղադրիչներ չեն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բառերի մի մասն այսօր էլ կենսունակ է, մի շարք բառեր գործածվում են հայերեն

համարժեք ձևերին զուգահեռ, իսկ որոշ բառեր դուրս են մղվել հիմնական բառաֆոնդից:

Միքայելյան Ս., Արագածոտնի մարզի բարբառային միավորների՝ արաբերենից փոխառված բառաշերտը (հոդված)

Հոդվածում անդրադարձ է կատարվում Արագածոտնի մարզի Ապարանի շրջանի մի քանի խոսվածքներում կիրառվող արաբերեն մի շարք փոխառությունների: Քանի որ արաբերեն ծագում ունեցող, ուղղակի և միջնորդավորված փոխառությունները խնդրո առարկա տարածաշրջանի բարբառային միավորներում բավականին շատ են, հեղինակը նշում է, որ դիտարկել է այնպիսիք, որոնք ուշագրավ են հնչյունաբանական, բառակազմական իրենց առանձնահատկությունների առումով:

Ապարան խոշարացված համայնքն իր մեջ ներառում է քսան բնակավայր, իսկ համայնքի ներկայիս բնակչությունը 1828-30-ական թթ. Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ, Մուշ, Վան, Խոյ, Էրզրում և այլ բնակավայրերից վերաբնակեցվածների սերունդներն են: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ապարանում բնակեցվել են նաև ցեղասպանությունից փրկված հայերի շատ գերդաստաններ:

Նշվում է, որ Ապարանի համայնքի Ապարան-Արագած բնակավայրում վերաբնակեցված ալաշկերտցի գաղթականները գործածում են Ալաշկերտի խոսվածքը, որը պատկանում է Մշո բարբառի հյուսիսարևելյան խմբին: Ներկայացվում են բուն Մուշի բարբառից տարբերվող հնչյունական առանձնահատկություններ, նկատվում են նաև որոշակի օրինաչափություններ. Ապարանի տարածաշրջանի մի շարք խոսվածքներում բառասկզբին բնորոշ շնչեղ ձայնեղ հպականները փոխառոյալ բառերում չեն արտացոլվել, Ապարանի մի շարք խոսվածքներին բնորոշ, բառամիջի և բառավերջի դիրքերում խուլ հպական բաղաձայնների ձայնեղացումը տարածվել է նաև արաբերեն ծագման մի շարք բառերի վրա (այս հնչյունափոխությունը, սակայն, օրինաչափ չէ, որը, հա-

վանաբար, պայմանավորված է տարբեր ժամանակներում կատարված, ուղղակի կամ միջնորդավորված լինելու հանգամանքներով, քանի որ արաբերեն նույն բաղաձայնի պարագայում բառի միևնույն դիրքերում գործել են հնչյունական տարբեր օրենքներ: Ինչ վերաբերում է փոխատու լեզվի ձայնավորային համակարգին, ապա փաստական նյութի զուգադրական վերլուծությամբ՝ հոդվածագիրը նկատում է, որ այն, ի տարբերություն բաղաձայնականի, ավելի շատ է հնչյունափոխվել:

Բառակազմության առումով հեղինակն առանձնացնում է հատկապես բառաբարդման օրինաչափություններով, անհոդակապ կամ հոդակապով կազմված բարբառային այնպիսի բառեր, որոնց բաղադրիչներից մեկը փոխառյալ է, իսկ մյուսը՝ ոչ: Նշվում է, սակայն, որ այսօրինակ կազմությունները սակավաթիվ են, որը պայմանավորված է բանավոր խոսքի առանձնահատկություններով: Բառակազմական մյուս միջոցի՝ բառածանցման եղանակով ստեղծված նորակազմությունները ևս առկա են, թեև փոխառյալ ածանցների մեջ արաբերեն ծագում ունեցողներ չկան. ածանցավոր բառերը կազմվել են փոխառյալ հիմնական ձևությ + հայերենի (բարբառի) բառակազմական ձևությ կաղապարով:

Ապարանի տարածաշրջանի խոսվածքների արաբերեն ծագման բառաշերտի համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն հիմնական հատկանիշներով ենթարկվում է Ապարանի շրջանի խոսվածքների հնչյունական և բառակազմական օրինաչափություններին: Դիտվող շեղումները հիմնականում պայմանավորված են տարբեր ժամանակներում փոխառված, միջնորդավորված լինելու, միջնորդ լեզվի ազդեցությունները կրելու հանգամանքներով, որոնք ենթակա են առանձին ուսումնասիրության:

Սարգսյան Մ., Հայալեզու տեքստերի էլեկտրոնային նոր սրբագրիչի սկզբունքները (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ վերջին շրջանում մեծ տարածում են գտել էլեկտրոնային սրբագրիչները, և սույն հոդվածում ներկայացվում են հայալեզու տեքստերի էլեկտրոնային նոր սրբագրիչի սկզբունքները և առանձնահատկությունները:

«Հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգ» գիտահետազոտական թեմայի շրջանակում ստեղծվել է սրբագրման այնպիսի համակարգ, որի միջոցով փորձ է արվում ամբողջական և լիարժեքորեն սրբագրել արդի արևելահայերեն ցանկացած տեքստ, ինչպես նաև օգտագործելով վեբ տեխնոլոգիաների բոլոր հնարավորությունները, հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգը հասանելի դարձնել հանրության լայն շրջաններին՝ ապահովելով համակարգից հեշտությամբ օգտվելու հնարավորություն: Կիրառման տեսանկյունից այն պարզ է և արագագործ, քանի որ դրանից օգտվելու համար որևէ ծրագիր ներբեռնելու անհրաժեշտություն չկա: Տվյալների շտեմարանի կառուցվածքը/կադրապարը պատրաստ է, մուտքագրված են տվյալները: Մշակվել է նաև համապատասխան ծրագրաշարը: Համակարգն ունի կառավարման վահանակ, որը ծառայում է համակարգի շտեմարանում նոր բառեր ավելացնելու, ինչպես նաև վրիպակները, հնարավոր սխալները շտկելու համար:

Կառավարման վահանակը բաղկացած է 2 էջից: Առաջին էջը նախատեսված է բառեր մուտքագրելու համար. օգտագործվում է հատուկ տեխնոլոգիա, որը հնարավորություն է տալիս շտեմարանում բառեր մուտքագրել և՛ մեծ խմբաքանակով, և՛ առանձին-առանձին: Երկրորդ էջը նախատեսված է արդեն մուտքագրված բառերն ըստ խոսքի մասերի դասակարգելու համար: Այս էջում առկա է նաև գլխաբառերի հնարավոր թեքված տարբերակները մուտքագրելու, խմբագրելու և հեռացնելու հնարավորություն:

Կայքի օգտատերերը սրբագրման համակարգը կիրառելիս որոնման դաշտում կարող են մուտքագրել ստուգվող տեքստը և ստուգել այդ տեքստի բառերի ուղղագրական և քերականական սխալները: Միայն գտնելու դեպքում համակարգը սխալն ուղղելու մի քանի տարբերակ է առաջարկում՝ նշելով առաջարկված բառերի խոսքիմասային պատկանելությունը, ինչպես նաև դրանց թեքված տարբերակները:

Համակարգն ուղղագրական և քերականական սխալները ստուգում է՝ համեմատելով շտեմարանում առկա բառերը: Եթե ստուգվող բառը չկա շտեմարանում, ապա համակարգը այն համարում է ուղղագրական սխալ ունեցող բառ: Այն գտնելուց հետո համակարգը համեմատում է շտեմարանում առկա բառերի հետ և գտնում ձևային առումով ամենամոտ բառերը՝ ներկայացնելով որպես հնարավոր ճիշտ տարբերակ: Բառերի համեմատությունը կատարվում է տեքստերի նմանության Լևենշտեյնյան հեռավորության չափման միավորի հիման վրա (Levenshtein distance):

Էլեկտրոնային նոր սրբագրիչի շտեմարանը լիարժեքորեն արտացոլում է հայերենի արդի վիճակը, քանի որ ներառում է ոչ միայն հայերենի հիմնական բառաֆոնդը, այլև հատկապես վերջին շրջանում ստեղծված մեծաթիվ նոր բառեր և նորաբանություններ, օտարաբանություններ, հատուկ անուններ (աշխարհագրական անուններ, անձնանուններ, ազգանուններ), հապավումներ, համառոտագրություններ:

Էլեկտրոնային նոր սրբագրիչի ստեղծումը մեծ հեռանկարներ է բացում ոչ միայն տեսական-լեզվաբանական, այլև գործնական-կիրառական խնդիրներ լուծելու համար:

Սարգսյան Մ., Հայերենի բառակազմության Էլեկտրոնային շտեմարանի առանձնահատկությունները (հոդված)

Լեզվի ձևային նկարագրության ուսումնասիրությունները կիրառական լեզվաբանության արդիական խնդիրներից են: Աշ-

խարհի տարբեր լեզուների ձևային նկարագրությունները նպաստում են մեքենական թարգմանության մեջ, համակարգչային տարբեր ծրագրերում տվյալ լեզուն հաջողությամբ գործարկելուն: Հայերենը աստիճանաբար մուտք է գործում թվային նոր տեխնոլոգիաների բնագավառ: Տարեցտարի ավելանում են հայերենի ձևայնացման փորձերը, հայերեն էլեկտրոնային տարատեսակ շտեմարանները: Հայերենի լիակատար ձևային նկարագրություն, այնուամենայնիվ, դեռ չկա: Չնայած անուրանալի է այն փաստը, որ դրական տեղաշարժ կա հայերենը՝ որպես համացանցային լեզու գործառնելու ուսումնասիրությունների բանագավառում:

«Հայերենի բառակազմության ձևային նկարագրություն և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծում» գիտահետազոտական թեմայի շրջանակում 2018 թ. սկսվել են հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարանի կազմության աշխատանքները: Հայերենի բառապաշարի ձևային նկարագրությունը և համապատասխան էլեկտրոնային շտեմարան կազմելն ունեն որոշակի նպատակ, ինչպես՝ բառապաշարի կառուցվածքային համակարգը բացահայտելը, համակարգչային ծրագրերին ծառայելը և այլն: Բառապաշարի ձևային նկարագրությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ինչպես կանոնավոր կազմությունների, այնպես էլ բոլոր տարբերակային ձևերի, շեղումների ու անկանոնությունների ամբողջական պատկերը՝ հաճախականության տվյալներով և դրանց ավտոմատ վերլուծության ու սերման հնարավորություններով: Այսինքն՝ էլեկտրոնային շտեմարանը ներկայացնում է արդի հայերենի բառապաշարի բառամիավորների բառակազմական բնութագիրը:

Օգտագործելով վեբ տեխնոլոգիաների հնարավորությունները՝ ստեղծվել է համացանցային ինքնուրույն կայքում գործող էլեկտրոնային շտեմարան՝ `formlang.am` վեբ հասցեի ներքո, որը, մեծածավալ տվյալների հենքից բացի, ունի որոնելու լայն հնարավորություններ:

Շտեմարանում հնարավոր է իրականացնել երկու տիպի հարցում՝ սովորական և ընդլայնված: Սովորական հարցման որո-

նումը լինում է ըստ բառի: Ընդլայնված հարցումները հնարավորություն են տալիս տեսնելու տարբերակային ձևերի, շեղումների և անկանոնությունների ամբողջական պատկերը:

Այս էլեկտրոնային շտեմարանն իր տեսակով, ըստ էության, եզակի է՝ ծավալով և բառային նյութի ընդգրկումով, կարող է լիովին լուծել բառերի կազմությանն առնչվող խնդիրները:

Սարգսյան Մ., Նվիրյալ լեզվաբանը. Գևորգ Ջահուկյան (հոդված)

Կան գիտնականներ, որոնք իրենց գիտակցական ողջ կյանքը նվիրում են գիտությանը, գիտության զարգացմանը, հետազոտական աշխատանքին: Նրանք գիտության յուրատիպ նվիրյալներ են, հետազոտական և գիտական աշխատանքի առաքյալներ, որոնց կյանքը անեզր է, անվերջ, իսկ գիտական ժառանգությունը դեռ երկար ժամանակ ծառայում է հազարավոր սերունդների: ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Գևորգ Բեգլարի Ջահուկյանն այդ գիտնականներից է՝ լեզվաբանության անխոնջ նվիրյալ:

Ավելի քան վեց տասնամյակ զբաղվել է գիտահետազոտական և գիտամանկավարժական աշխատանքով: Դասախոսական և հետազոտական աշխատանքը հմտորեն համատեղել է նաև վարչական աշխատանքի հետ. երկար տարիներ ղեկավարել է օտար լեզուների, ապա ռոմանագերմանական բանասիրության ամբիոնը: Հայագիտության, հայ լեզվաբանական միտքը զարգացնելու առումով շրջադարձային էր, երբ Գ. Ջահուկյանը նշանակվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն: Նա կարողացավ ահռելի գիտական փորձը ծառայեցնել ի նպաստ ինստիտուտի գիտական աշխատանքների: Նրա ղեկավարելու տարիներին ստեղծվեցին նոր բաժիններ, ուղենշվեցին գիտության նոր բնագավառների ուսումնասիրություններ, հրաշալի գիտական կադրեր պատրաստվեցին:

Ահռելի գիտական աշխատանք է կատարել մեծանուն գիտնականը: Շատ բազմազան է նրա գործունեությունը, նրա ներդրումը բավական մեծ է լեզվաբանության բոլոր հիմնահարցերում, անդրադարձել է գրեթե լեզվաբանական բոլոր խնդիրների ուսումնասիրությանը՝ հայերենի համեմատական քերականություն, հայ քերականական մտքի պատմություն, հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն, ժամանակակից հայոց լեզվի նկարագրություն, հնդեվրոպական և նոստրատիկ լեզվաբանություն, ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանության պատմություն, լեզվաբանության տեսություն... Դժվար չէ նկատել, որ գիտական հետաքրքրությունների շրջանակը բավական մեծ է, իսկ առավել հետաքրքրականն այն է, որ այս բոլոր բնագավառներում նա նորույթ է բերել: Լինելով մեծ նորարար և ցանկացած նորի կողմնակից՝ անվանի գիտնականը մեծ ծառայություն է մատուցել ոչ միայն հայ, այլև համաշխարհային լեզվաբանական մտքի զարգացմանը լեզվաբանական զանազան հարցերի գիտական և ճշգրիտ լուծումներ տալու բնագավառում: Այսօր էլ գիտական վեճերի և տեսակետների բախման առարկա են դառնում լեզվաբանական այնպիսի հարցեր, որոնցից շատերի գիտական և սպառնիչ պատասխանները տվել է Գ. Ջահուկյանը: Նա հրաշալիորեն տիրապետում էր և՛ նախորդների ձեռքբերումներին, և՛ ժամանակակիցների գործունեությանը, և հետաքրքիր ձևով կարողանում էր այդ ամենի մեջ գտնել այն հիմնական կորիզը, որի մշակմամբ կարելի էր օգտակար պտուղներ քաղել: Գ. Ջահուկյանն այն մեծերից էր, որոնք հայ լեզվաբանությունը ճանաչելի դարձրին աշխարհին, իսկ նրա առաջադրած դրույթները արդիական են ցայսօր և լայնորեն կիրառվում են:

Սարգսյան Մ., Հոմանիշ տերմինները Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական աշխատություններում (հոդված)

Հոդվածն անդրադառնում է Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական աշխատություններում առկա նորաստեղծ հոմանիշ տերմիններին:

Տերմինների հոմանիշությունը լեզվաբանական ուսումնասիրությունների եթե ոչ առանցքային, ապա կարևոր խնդիրներից է: Լեզվաբանության պատմության մեջ նոր տերմիններ սովորաբար ի հայտ են գալիս որոշակի բնագավառում ունեցած նոր ձեռքբերումների, ուղղությունների և հայեցակարգերի ձևավորման, ինչպես նաև նախկին տեսությունների և ուղղությունների քննադատության շնորհիվ: Գ. Ջահուկյանի աշխատություններում լեզվաբանական նորաստեղծ տերմինների առկայությունը անշուշտ պայմանավորված է հեղինակի նոր ըմբռնումներով ու հայեցակետով, նոր մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև նոր տեսություն առաջ քաշելու հանգամանքով: Այդ տերմինները կարելի է բնորոշել որպես տվյալ տեսության հասկացությունների համակարգի միավորներ: Այլ ձևակերպմամբ՝ Գ. Ջահուկյանի տերմինաբանությունը ընդհանուր առմամբ կարելի է համարել համընդհանուր լեզվաբանական տեսության տերմինաբանություն: Նորաստեղծ տերմինները և նրանց հոմանիշային գույգերը հիմնականում վերացական և ընդհանուր տեսական բնույթի են:

Հոդվածում քննվում են Գ. Ջահուկյանի նորաստեղծ հոմանիշ տերմինները՝ ըստ հետևյալ սկզբունքների՝ առաջացման պատճառի, բաղադրիչների քանակի, անդամների քանակի, իմաստային-գործառական առնչակցության:

Հոմանիշ տերմինները Գ. Ջահուկյանի աշխատություններում ըստ առաջացման պատճառի քննելիս նկատելի է, որ հոմանիշային գույգի կամ հոմանիշային շարքի առաջացմանը նպաստել է գերազանցապես հեղինակի՝ օտար տերմինները հայերեն համարժեքներով փոխարինելու միտումը:

Ըստ բաղադրիչների քանակի՝ առկա են միաբաղադրիչ, երկբաղադրիչ և եռաբաղադրիչ նորակազմություններ: Հաճախական կիրառություն ունեն միաբաղադրիչ և երկբաղադրիչ հոմանիշ տերմինները:

Ըստ հոմանիշային շարքի անդամների քանակի՝ Գ. Ջահուկյանի նորաստեղծ տերմինները կազմում են երկու և երեք անդամ ունեցող շարքեր:

Ըստ իմաստային-գործառական առնչակցության՝ ուսումնասիրության առարկա հոմանիշ տերմինները գերազանցապես բացարձակ հոմանիշներ են. այն հոմանիշ տերմինների առանձնահատկություններից է:

Ամփոփմամբ նշվում է, որ ժամանակակից ուսմունքների, ուղղությունների, մեթոդների տերմինաբանության մշակման առումով անգնահատելի է Գ. Ջահուկյանի դերը, քանի որ հենց նա է առաջարկել և կիրառել լեզվաբանական զանազան տերմիններ: Իսկ օտար տերմինների նրա կերտած հայերեն համարժեքները՝ որպես հոմանիշ տերմիններ, հարստացնում են լեզվաբանական տերմինահամակարգերը, երբեմն դառնում ավելի կենսունակ և ձեռք բերում լայն կիրառություն:

Սիմոնյան Ն., *ձուլել/թափել* բայերի իմաստային աղերսները (հոդված)

Հոդվածը նվիրված է *ձուլել* և *թափել* բայերի իմաստային և գործառական ընդհանրությունների քննությանը: Ստուգաբանական բառարաններում (Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան) *ձոյլ* արմատի համար նշվում են «թափած, ձուլած, միապաղաղ, միաձույլ» և նման իմաստներ: Ե՛վ Հ. Աճառյանը, և՛ Գ. Ջահուկյանը *ձոյլ* արմատի հ.-ե. նախաձևն են համարում *gʰeu-lo- «լցնել, թափել» արմատը:

Հոդվածում դիտարկվում են *ձուլել/թափել* բայերի ստուգաբանական և բառային նշանակությունները, ներկայացվում են իմաստային և գործառական ընդհանրությունը հավաստող օրի-

նակներ: Բերված ստուգաբանական նյութը հիմք է տալիս ենթադրելու, որ *թափել* բայի գործածությունը «ձուլել» իմաստով հատուկ է հ.-ե. շատ լեզուների, և իմաստային այդ զարգացումը կարելի է համարել տիպաբանական ընդհանրություն հնդեվրոպական լեզուների համար:

Ճշգրտվում է *ձաւն* (ձօն) բառի ստուգաբանությունը: Ավելի հավանական է համարվում *ձաւն* (ձօն) բառի համար կանխադրել հ.-ե. *g'heu- նախաձևի *ող-ով* կամ *դ-ով* աճած տարբերակը, մանավանդ եթե նկատի է առնվում, որ հունարենում նույն նախաձևի *g'héu-ող տարբերակից է հունարեն *χεῖμα*-ն «զոհաբերության անոթ», հնդկ. *hóman* «զոհ, զոհաբերություն» բառեր:

Գ. ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կատվայան Վ.Լ., Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 2. Կոտայքի մարզ, Ե., «Ասողիկ» հրատ., 2020, 500 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Աբրահամյան Ա.Ա., Քասախ գետի ավազանում գտնվող մի քանի հնաբնակ գյուղերի ժողովրդագրական և բարբառային պատկերը, «Արդի հայերենագիտության խնդիրներ» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 3-26:
2. Բառնասյան Ջ.Ա., Թումանյանի «Մուտասանը» հեքիաթը հայերենի տարբեր բարբառներով, Հովհ. Թումանյան-150. Հոբելյանական գիտաժողովի նյութեր, Ե., «Գիտություն» հրատ., 2020, էջ 125-131:
3. Բառնասյան Ջ.Ա., Մշո բարբառում գործառող դերանուններ (իմաստագործառական քննություն), Միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., «Վարմ» հրատ., 2020, էջ 180-186:
4. Բառնասյան Ջ.Ա., Բարբառագետ Ալբերտ Խաչատրյանի ծրագրային մի հոդվածի շուրջ (ծննդյան 70-ամյակի առթիվ), «Արդի հայերենագիտության խնդիրներ» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 35-42:
5. Բառնասյան Ջ.Ա., Երկբարբառացումը որպես քերականական միջոց հայերենի որոշ բարբառներում, «Լեզու և խոսք-2» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 21-28:

6. Գևորգյան Գ.Գ., Արաբկիր քաղաքի լեզվական յուրահատկությունների ընդհանուր բնութագիրը, «Արդի հայերենագիտության խնդիրներ» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 43-56:
7. Խաչատրյան Հ.Ռ., Դիտարկումներ բարբառային հայերենում տան օժանդակ որոշ կառույցների անվանումների շուրջ, Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., «Վարմ» հրատ., 2020, էջ 83-91:
8. Խաչատրյան Հ.Ռ., Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունների բարբառային պատկերը Արագածոտնի տարածաշրջանում, «Արդի հայերենագիտության խնդիրներ» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 96-107:
9. Խաչատրյան Հ.Ռ., Բառիմաստային յուրօրինակ զարգացումները Համշենի բարբառում, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2020, էջ 77-87:
10. Խաչատրյան Հ.Ռ., *Տուն* և *տնտեսություն* իմաստային դաշտն արտացոլող բառանունների բարբառային պատկերը Արագածոտնի տարածաշրջանում, «Լեզու և խոսք-2» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 42-50:
11. Կատվալյան Վ.Լ., Գեղարվեստական խոսքը իբրև բարբառային լեզվի ուսումնասիրության կարևոր աղբյուր, Հովհ. Թումանյան –150. Հոբելյանական գիտաժողովի նյութեր, Ե., 2020, էջ 230-238:
12. Կատվալյան Վ.Լ., Մի քանի դիտարկում բարբառային հայերենի բառապաշարի մասին, Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ, Ե., ԵՊՀ հրատ., 2020, էջ 75-94:
13. Կատվալյան Վ.Լ., Փարպիի խոսվածքը, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 9, Ե., «Արտագերս» հրատ., 2020, էջ 212-217:
14. Կատվալյան Վ.Լ., Կոտայքի մարզի որոշ խոսվածքների առընչությունը Վանի բարբառին, «Արդի հայերենագիտության խըն-

- դիրներ» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 127- 137:
15. Կատվայան Վ.Լ., Խառը տիպի խոսվածքները Կոտայքի մարզում, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2020, էջ 88-99:
 16. Կատվայան Վ.Լ., Հինհայերենյան իրողություններ Սասունի բարբառում, «Լեզու և խոսք-2» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 51-59:
 17. Կատվայան Վ.Լ., Մակուի խոսվածքը Կոտայքի մարզում, Հանրապետական գիտաժողովի նյութեր. Նվիրված Ա.Ա. Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին, Ե., Էդիթ Պրինտ, 2020, էջ 121-127:
 18. Մեսրոպյան Հ.Հ., Dialect Equivalents of the Concept of «*Խունկ*» [xunk] (“Incense”-in Armenian), «Լեզու և լեզվաբանություն», 1 (22), Ե., «Լուսակն» հրատ., 2020, էջ 15-24:
 19. Մեսրոպյան Հ.Հ., Հայերենի բարբառները Ակսել Բակունցի ստեղծագործություններում, «Հայագիտություն. Սյունիք» հանդես, հ. 2, Ե., «Ջանգալ» հրատ., 2020, էջ 42-48:
 20. Մեսրոպյան Հ.Հ., Բուսանունները «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում», Հանրապետական գիտաժողովի նյութեր. Նվիրված Ա.Ա.Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին, Ե., Էդիթ Պրինտ, 2020, էջ 157-165:
 21. Մեսրոպյան Հ.Հ., Սյունիքի մարզի բարբառային ընդհանուր պատկերը, «Լեզու և լեզվաբանություն», 2(23), 2020, էջ 29-38:
 22. Վարդանյան Ա.Վ., Հյուսիսային Գողթնի միջբարբառը Նախիջևանի բարբառային համապատկերում, «Պատմաբանասիրական հանդես», հ. 3, 2020, էջ 156-167:
 23. Վարդանյան Ա.Վ., Վ.Կատվայանի «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. գիրք 1. Գեղարքունիքի մարզ» աշխատությունը (գրախոսություն), «Պատմաբանասիրական հանդես», հ. 1, Ե., 2020, էջ 249-251:
 24. Վարդանյան Ա.Վ., Ճահուկ-Վայքի միջբարբառի տարածման սահմանները, «Արդի հայերենագիտության խնդիրներ» գիտա-

կան հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 183-193:

25. Վարդանյան Ա.Վ., Հյուսիսային Գողթնի խոսվածքների ձևաբանական առանձնահատկությունները, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2020, էջ 126-135:
26. Վարդանյան Ա.Վ., «Զոկ» ցեղանվան ստուգաբանությունը, «Հայագիտությունը Մոնղոլիայում» միջազգային գիտաժողովի նյութեր, ՎԱՌՄ հրատարակչություն, 2020, էջ 157-168:
27. Վարդանյան Ա.Վ., Հայերենի բարբառների մանկական բառապաշարը, «Լեզու և խոսք-2» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 133-140:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Աբրահամյան Ա., Քասախ գետի ավազանում գտնվող մի քանի հնաբնակ գյուղերի ժողովրդագրական և բարբառային պատկերը (հոդված)

Հոդվածում տրվում են 17-րդ դարում արտագրված մի ձեռագրում նշված՝ Քասախ գետի ավազանի բնակատեղիների ժողովրդագրական և բարբառային նկարագրերը հին ժամանակներից մինչև Առաջին աշխարհամարտը: Հեղինակը տեղեկացնում է, որ ըստ ձեռագիրն արտագրած Սահակ գրիչի՝ 1641թ. Նիգ գավառն արդեն կոչվում էր Ապարան: Բերվում են Ապարան անվան ծագման վերաբերյալ տեսակետները: Հոդվածագրի համոզմամբ՝ Նիգ գավառի՝ Սահակ գրիչի նշած բոլոր բնակավայրերում մինչև շահաբասյան բռնազաղթը խոսել են Երևանի կամ Արարատյան բարբառի տեղական ենթախոսվածքներով: Այնուհետև առանձին-առանձին ներկայացվում են նշված բնակավայրերի ժողովրդագրական և բարբառային նկարագրերը շահաբասյան բռնազաղթին հաջորդող

շրջանում՝ մինչև Առաջին աշխարհամարտը: Անդրադարձներ են կատարվում Ապարան, Ծաղկաշեն, Քուչակ, Շենավան, Վարդենուտ, Երընջատափ, Ափնագյուղ, Ձորագլուխ, Եղիատարուշ և այլ բնակավայրերին, հանգամանորեն ներկայացվում են բնակավայրերի անուններին, բնակչությանը, հուշարձաններին ու եկեղեցիներին վերաբերող տեղեկությունները, ըստ բնակիչների ծագմանաբանության՝ ենթադրություններ են արվում բնակավայրերում գործառած բարբառային միավորների վերաբերյալ: Հոդվածագրի ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ տարածաշրջանում առավել տարածված է եղել Խոյ-Մարադայի բարբառը, մինչև Առաջին աշխարհամարտը գործածվել են նաև Վանի, Դիադինի, Բայագետի բարբառների խոսվածքներ:

Բառնասյան Ջ., Հովհ. Թումանյանի «Մուտասանը» հեքիաթի գրառումները հայերենի տարբեր բարբառներով (հոդված)

Ըստ հատուկ ծրագիր-հարցարանի՝ ժամանակին գրանցված և ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում պահվող 500 խոսվածքային միավորները բավարար քանակությամբ տեղեկություններ են ապահովում բազմաբնույթ քննություն կատարելու համար: Բարբառային տարբեր խոսվածքների հավաքչական աշխատանքներն իրականացնելիս բարբառախոսին հանձնարարվում է թարգմանել նաև Հովհ. Թումանյանի «Մուտասանը» հեքիաթը՝ որպես կատարված աշխատանքի յուրօրինակ ամփոփում: Խորապես ճանաչելով հարազատ ժողովրդի կյանքն ու կենցաղը, դարերի հոլովությամբ ձևավորված արժեքային համակարգը, հոգեբանությունը՝ Թումանյանն իր «Մուտասանը» կարճ, սրամիտ առարկություններով խոսքուզրույցի վրա կառուցված հեքիաթում ներկայացրել է ժողովրդի խոսքին հատուկ լեզվառճական հնարքներ, և դրանք շատ դեպքերում անթարգմանելի են՝ հատկաբանության (իդիոմ) արժեքով: Այդ հեքիաթը հայերենի որևէ բարբառով ներկայացնելիս ի հայտ են գալիս այդ տարածքի խոսվածքներում գործառող հետաքրքիր բառանվանումներ, բառի-

մաստային հետաքրքիր զուգաձևություններ: Հեքիաթի վերնագիրը բազմապիսի բառանվանումներով է ներկայանում՝ *սուղխասանը* (Կարնո բարբ.), *սուղըսան* (Մշո, Սասունի բարբ.), *սուտա սին* (Ղարաբաղ), *սողգորցուողը* (Քեասբ), *սութասանը* կամ *խափլանը* (Արարատյան բարբ. խոսվածքներ), *խափողէ* (Համշեն), իսկ Գանձակի միջբարբառով՝ *խըփըլկանը*: Առկա է բառիմաստը նկարագրորեն ներկայացնող բառաձև կամ բառակապակցություն, ինչպես, Համշենի բարբառի Խոփայի խոսվածքում գործառող *շի-դագ չասողէ* (ճիշտ չասողը) բառակապակցությունը:

Ժողովրդական հեքիաթներից հետաքրքիր տեղեկություններ կարելի է քաղել ժողովրդի զբաղմունքի և արհեստների մասին: Այս հեքիաթի հերոսները տարբեր խավերի մարդիկ են՝ *թագավոր, դերձակ, հովիվ, գյուղացի*: Օրինակ՝ *դերձակ* հասկացության՝ այս հեքիաթի գրառումներում վկայված բառանվանումների առիթով հոդվածում նշվում է, որ արևելյան խմբակցության բարբառներում գործառում են *դերցակ, դերցիկ*, իսկ արևմտյան խմբակցության բարբառներում՝ *դարզիկ, դարզի, թարզի* բառաձևերը: Արմատական բառարանում Հ. Աճառյանը *դերձակ* և *դերձիկ* բառերի *դերձ* արմատը համարում է բնիկհայերենյան և *դարզի* և *դարզիկ* բառաձևերը ներկայացնելիս կասկածելի է համարում Հյուբշմանի տեսակետը, որ դրանք անվերապահորեն պահլավական փոխառությունն պետք է համարել: Բառանվանողական տարբերություններ է դրսևորում նաև *հովիվ* հասկացությունը, որի դիմաց գրանցված են *հովիվ* և փոխառյալ *չօրան* բառանվանումները: Հեքիաթի գրառումներում բազմազանություն են հանդես բերում *անձրև, երկինք, կայծակ, աստղ, պարտք, գյուղացի* և հեքիաթում առկա այլ հասկացությունների բառանվանումները, որոնք վկայում են լեզվամտածողության տարբերությունների մասին: Բնականաբար, նմանատիպ քննությունը լեզվաբանական հետաքրքրությունից բացի ունի նաև մշակութային արժեք և կարող է օգտակար լինել նաև այլ գիտակարգերի համար:

**Բառնասյան Ջ., Մշո բարբառում գործառող դերանուններ
(իմաստագործառական քննություն) (հոդված)**

Հոդվածում ներկայացված են Մշո բարբառում գործառող անձնական դերանունները՝ մասնավորապես անդրադառնալով բարբառային ինքնատիպ ձևերին: Հայտնի է, որ մեծանուն լեզվաբան Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության երկրորդ հատորն ամբողջությամբ նվիրված է դերանուն խոսքի մասին: Հայերենի բարբառների անձնական դերանունները դերանվանական-անվանական խառը տիպի հոլովման են ենթարկվում, սակայն, ինչպես ցույց են տալիս փաստերը, խախտվում են դերանվանական և անվանական հոլովումների սահմանները՝ հոգուտ անվանական հոլովման տիպի ընդլայնման, որը կարելի է բացատրել հոլովման համակարգի միասնականացման և պարզեցման միտումով: Կարելի է համարել, որ անձնական դերանուններից առաջին քայլը դերանվանականից դեպի անվանական հոլովում կատարել է երրորդ դեմքի դերանունը: Բայց Մշո բարբառում կա նաև առաջին դեմքի համար *հ' իսնէ* ձևը՝ *ես*-ից:

Ցուցական դերանունները, որոնք մատնացույց են անում առարկան կամ նրա հատկությունը, թիվը, ինչպես նաև գործողության հատկանիշը՝ ձևը, չափն ու քանակը և այլն, հայերենի մի շարք բարբառներում հետաքրքիր մի առանձնահատկություն են դրսևորում. խախտվում է եռադիմայնությունը: Խոսելով *սա, դա, նա* ցուցական դերանունների մասին՝ հարկ է նշել, որ դրանք ունեն բացառապես գոյականական կիրառություն և նախադասության մեջ հանդես են գալիս ենթակայի և խնդրի պաշտոնով, իսկ *ես, էտ, էն* դերանուններն ունեն ածականական գործածություն և նախադասության մեջ կարող են հանդես գալ ոչ միայն ենթակայի և խնդրի, այլև որոշի պաշտոնով: Առաջիններն առավելապես անձ են մատնանշում, իսկ երկրորդ խումբը՝ իր:

Գրաբարյան *սա, դա, նա* ցուցական դերանունների եռաշար համակարգի փոխարեն Մշո բարբառում առկա է երկշար համակարգ, և *իդա* ցուցական դերանունը նշանակում է *և՛ սա, և՛ դա*:

Որոշյալ դերանուններն արտահայտում են առարկաների առկայացած ամբողջություն՝ միասնաբար կամ առանձին վերցրած: Արդի հայերենի որոշյալ դերանունների համապատասխանությունները բարբառներում նույնպես ունեն կիրառական որոշակի բաշխում, ասենք, *ամեն* և *ամենքը*, *բոլոր* և *բոլորը*: Որպես դերանվանական ինքնատիպ գործառույթ Մշո բարբառում կարելի է նշել մի դեպքում ածականական, ապա նաև գոյականական արժեք ունեցող ձևերի նույնացման իրողությունը: Բարբառում ամեն, ամենքը դերանունները նույնանում են՝ *հ'ըմէն մառտ, հ'ըմէն տէխ*, իսկ գոյականական կիրառությամբ՝ *հ'ըմէն զածին, հ'ըմէն մէռան*:

Հայերենի բարբառներում, այդ թվում նաև Մշո բարբառում հաճախադեպ է անորոշության ընդգծված երանգ ունեցող *մեզէլ* (մեկ+այլ կազմությամբ) դերանունը՝ *մյուս* ցուցական դերանվան արժեքով: Մշո բարբառին հատուկ *-դան, -դանք, -դոնք* հոգնակերտներով առկա են *մեզէլդան, մըզըլդանք, մըզըլդօք* ձևերը:

Ինքնատիպ և մյուսներից տարբերվող գործառույթ ունի *ն'վ* հարցական դերանունը: Այդ դերանվան արժեքով միայն Մշո և Բայազետի բարբառներում է առկա *վօ՞ր* (ո՞ր), ինչպես նաև դրան համարժեք *վօ՞ն* հարցական դերանունը: Մշո բարբառում հարաբերական *վօր* դերանվան հոգնակին չկա, սակայն այդ իմաստը խոսքում արտահայտվում է հոգնակի ստորոգյալով, ինչպես՝ *Վօ՞ր էր էզան* (ովքե՞ր եկան):

Բառնայան Ջ., Երկբարբառացումը որպես քերականական միջոց հայերենի որոշ բարբառներում (հոդված)

Հոդվածում նշվում է, որ հայերենի բարբառների գերակշիռ մասին բնորոշ չեն երկբարբառներն ու եռաբարբառները, սակայն բարբառների մի մասին (ընդ որում՝ ոչ սահմանակից) բնորոշ է շեշտակիր վանկում պարզ ձայնավորի դիմաց երկբարբառային արտասանություն, օրինակ՝ *ու* պարզ ձայնավորի դիմաց Ոզմի բարբառում՝ *օու*՝ *ջօուր*, Սուչավայի բարբառում՝ *ու* > *աու*, ինչպես՝

անաուն (անուն), Ուրմիայի բարբառում՝ *ու>ուէ՝ պուէն* և այլն: Հայտնի է, որ առհասարակ այն բարբառներն են առավել դժվար հասկացվում, որոնցում հնչյունափոխվել են ձայնավորները: Այդ իմաստով հատկանշական է Ագուլիսի բարբառը: Այսպես՝ *ա* պարզ ձայնավորի դիմաց Ագուլիսի բարբառում գործառում են այլ ձայնավորներ, ինչպես՝ *օ-մօրթ* (մարդ), *քօր* (քար), է -շէհ (շահ), ու-թուն(թան), տունձ (տանձ) և այլն: *Ա* ձայնավորը ներկայանում է նաև երկբարբառային արտասանությամբ՝ *էօ*, ինչպես՝ բէօրձ (բարձ), վէօրդ (վարդ): Ագուլիսի բարբառի յուրօրինակ ձայնավորական համակարգը միշտ հետաքրքրության առարկա է եղել: Բարբառի ուսումնասիրությանը նվիրված աշխատության մեջ Մարի Զաքարյանը ներկայացնում է այս յուրօրինակ ձայնավորական համակարգով բարբառին նվիրված աշխատանքները՝ հատկապես առանձնացնելով 1899թ. բանագետ Գ. Վանցյանի տեսակետն այն մասին, որ Ագուլիսի բարբառը գրաբարից ավելի հին է:

Վանի, Խոյի, Մարաղայի, Շատախի, Դիադինի և հարակից այլ վայրերի խոսվածքներում առկա ուժեղ երկբարբառցման կողքին համեմատաբար թույլ է այդ իրողությունը Արարատյան բարբառի շատ խոսվածքներում: Ասենք՝ Աշտարակի, Օշականի խոսվածքներում առկա է երկբարբառային հնչման ավելի թույլ աստիճան: Այլ խոսքով՝ առկա են երկբարբառայնացման տարբեր աստիճաններ:

Երկբարբառներով ու եռաբարբառներով հարուստ են հայերենի կենտրոնական, հարավարևմտյան և հարավարևելյան բարբառախմբերի խոսվածքները:

Անսոիոքի շրջանի բարբառներից Սվեդիայի բարբառը ամենահարուստն է երկբարբառներով: Հատկանշական է, որ երկբարբառների զարգացումը յուրօրինակ ընթացք է ունեցել այս տարածքում, ուր երկբարբառներ կան հինհայերենյան պարզ ձայնավորների և հին երկբարբառների դիմաց: Սվեդիայի բարբառը երկբարբառացումն օգտագործվում է նույնիսկ որպես քերականական միջոց՝ այդ կերպ արտահայտելով գոյականի որոշյալության հատկանիշը: Հետաքրքրական է, որ բառում ձայնավորի դիմաց երկ-

բարբառի դրսևորվելու պարագայում էլ սովորականից ավելի երկար արտաբերումով է արտահայտվում որոշյալության հատկանիշը: Այսպես՝ մարդ-մուրտ և մա ուրտ (մարդը): Քաբուսիեի բարբառում կան երկբարբառներ, եռաբարբառներ և մինչև անգամ՝ քառաբարբառներ: Այսպես՝ տաուռ (դուռ), նաուռ (նուռ), ամօուռ (ամառ), ուօշք (աչք) և այլն: Ընդ որում՝ տարբեր ձայնավորներ ձևաբանական նմանատիպ գործառնությամբ պայմանավորված՝ կարող են հերթագայվել միևնույն երկբարբառով: Հարցի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ որոշ բարբառներում երկբարբառացման գործընթացը քերականական ինքնատիպ միջոց է դարձել:

Գևորգյան Գ., Արաբկիր քաղաքի լեզվական յուրահատկությունների ընդհանուր բնութագիրը (հոդված)

Հոդվածում ներկայացվում է Արաբկիրի խոսվածքի լեզվական բնութագիրը համաժամանակյա քննությամբ՝ ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով գրանցված «Արաբկիր» աշխատանքի: Անդրադարձ է կատարվում Արաբկիրի խոսվածքի ձայնավոր և բաղաձայն հնչյունների, ինչպես նաև երկբարբառների արտաբերական հատկանիշներին: Ներկայացվում են նաև ձևաբանական հատկանիշները: Նշվում է, որ խոսվածքում գործառող *–եր (էր)* և *–ներ (նէր)* հոգնակերտների զուգորդելիությունը թվանիշ հիմքերին պայմանավորված է դրանց ձևաիմաստային առանձնահատկություններով: Արաբկիրի խոսվածքը հատկանշվում է հոլովանիշ վերջավորությունների և հերթագայությունների առկայությամբ, ինչպես նաև եզակի թվի հարացույցում *ի* հոլովանիշ թեքությի, իսկ հոգնակիում՝ *ու* հոլովանիշի ընդհանրական արժեքով: Բացառական հոլովը ձևավորվում է *–էն* հոլովանիշ թեքությի և հոլովանիշ հիմքի զուգորդելիությամբ, իսկ գործիական հոլովի իմաստը արտահայտվում է *–օք* հոլովանիշ վերջավորությամբ բաղադրված կազմություններով: Ներգոյական հոլովի իմաստը դրսևորվում է ուղղականաձև հայցականով (*էքին*,

հ'աշխարքը, հողը նն) կամ *մէչ* հետադրության և տրական հոլովածնի բաղադրությամբ (*էքիին մէչը, հ'աշխարքին մէչը, հողին մէչը* են): Ածականի գերադրական աստիճանը կազմվում է *քիթունէն* բառածնով, *յոթանասուն, ութսուն, իննսուն* թվականների փոխարեն գործածվում են *յէթմիշ, սաքսան, տօխսան* փոխառյալ ձևերը: *Ես, դու, մենք, դուք* անձնական դերանունների տրական հոլովածները կազմվում են գրաբարյան հոլովածների (ինձ, մեզ, քեզ, ձեզ) հնչյունական տարբերակների և *ի* հոլովանիշ թեքույթի զուգորդությամբ (*հ'ընձի, քըզի, մըզի, ձ'ըզի*): Հայցական հոլովը տրականաձև է (*գըսիրէ հ'ընձի, քըզի, մըզի, ձ'ըզի*): Անձնական դերանունների բացառական հոլովածը կազմվում է տրականի հիմքի և *-մէն* հոլովանիշ թեքույթի համադրմամբ (*հ'ըզմէն, քըզմէն, մըզմէն, ձ'ըզմէն, անօրմէն, հ'իրենցմէն*):

Հոդվածում անդրադարձ է կատարվել նաև եղանակային իմաստներին և կառուցատիպերին: Հեղինակը նշում է, որ եղանակային իմաստները արտահայտության պլանում դրսևորվում են 5 կառուցատիպերով. դրանց բովանդակության պլանում համապատասխանում է եղանակային 5 իմաստ՝ սահմանական, ենթադրական, հարկադրական, ըղձական և հրամայական: Ժխտական խոնարհման կառույցները հատկանշվում են նախամասնիկավորմամբ:

Քննվել են նաև Արաբկիրի խոսվածքի շարահյուսական առանձնահատկությունները՝ ներկայացնելով, որ հատկացուցիչի և հատկացյալի համաձայնությունը արտահայտվում է համանիշ կառույցների գործածությամբ՝ որոշյալ հատկացյալի հետ որոշյալ հատկացուցիչ և անորոշ հատկացյալի հետ՝ անորոշ հատկացուցիչ, ենթակայի և ուղիղ խնդրի շարադասությունը ազատ է, ուղիղ խնդիրը գործածվում է ստորոգյալին նախադաս դիրքով, անորոշ դերբայով արտահայտված նպատակի պարագան ուղղականաձև է, տեղի պարագայի իմաստը դրսևորվում է վերլուծական (*մէչ կապ+սեռական հոլովածն*) և համադրական (հայցական հոլովածն) կառույցներով:

Հոդվածագիրը եզրակացնում է, որ Արաբկիր քաղաքի խոսվածքը առանձնանում է լեզվական ինքնատիպ հատկանիշներով: Հոդվածը կարևորվում է արևմտահայ խմբակցության բարբառային միավորի՝ Արաբկիր քաղաքի խոսվածքի նորահայտ տվյալները գիտական շրջանառության մեջ դնելու և բարբառային նյութը անդառնալի կորստից փրկելու փաստով:

Խաչատրյան Հ., Դիտարկումներ բարբառային հայերենում տան օժանդակ որոշ կառույցների անվանումների շուրջ (հոդված)

Հեղինակը հոդվածում անդրադառնում է ավանդական հայկական տներին կից որոշ օժանդակ կառույցների (որոնք հիմնականում ծառայել են որպես կենցաղային իրերի, գյուղատնտեսական գործիքների պահպանման վայր) անվանումներին: *Տուն և տնտեսություն* իմաստային դաշտի հասկացությունների բարբառային դրսևորումներն ուսումնասիրելիս բարբառային հայերենի բառապաշարում առանձնացվել են տան օժանդակ որոշ կառույցների անվանումներ, որոնցից են հետևյալները՝ *ցրվիք, ամբրոց, մղակ, բակ, խորդանոց, ցախատուն, դրունքան*: Բնիկ հայերեն *ցիւ* արմատը՝ «ձեղուն, տան կտուր» իմաստով, *ցրվիք* (ցիւ+իք վերջածանց) բարբառային տարբերակով հայերենի բարբառներում, ըստ հոդվածագրի, գործածվում է ոչ միայն «տանիք, կտուր, քիվ, ջրհորդան», այլև այլ իմաստներով: Մասնավորապես, բառիմաստային հետաքրքիր զուգորդումների արդյունքում *ցրվիք*-ը Մարտունու Զուլաքար գյուղի խոսվածքում «գոմին կամ մառանին կից, ծածկ ունեցող, սակայն առանց պատերի մի շինություն» է, որտեղ խոտ, աթար, փայտ, բահ և գյուղական կենցաղում գործածվող այլ իրեր են պահվում: Նշվում է, որ որոշ վայրերում տանը կից՝ զանազան իրեր դնելու սենյակ է եղել, որը *խորթանոց* բառանվամբ է ներկայացվել հայերենի բարբառներում: Ըստ հոդվածագրի՝ *խորթանոց* բառանունը առնչակից է *խորթել, խորդել, հորդել*՝ «սրբել» իմաստով բառանվանը:

Մուշի, Ալաշկերտի, Կարինի, Ուրմիայի Վանի, Նոր Բայազետի խոսվածքներում մի ուշագրավ բառաձև է վկայակոչել հեղինակը՝ *ամբրոց*: Այն գմբեթաձև շարված աթարի բուրգն է: Շատերը բառանունը կապում են *ամբրոց* բառանվան հետ: Սակայն բարբառային *ամբրոց* բառանունը, ըստ հոդվածագրի, ամենայն հավանականությամբ, *ամբրոց* և *ամբարանոց* բառանունների՝ ժողովրդական յուրօրինակ լեզվամտածողությամբ բաղարկված բառանուն է:

Նշվում է, որ քարթվելական հնագույն փոխառություն համարվող *բակ* բառանունը, բացի «տան կողքին բաց տեղ՝ ցանկապատով կամ պարսպով պատած, և փարախ» իմաստներից, ունի հին ձևի տներում «նախասենյակ, տան առաջին աչք» նշանակությունները, ինչպես նաև բառիմաստային այլ գուգորդումներով հիշյալ բառանունը ձեռք է բերել *աղբանոց*, *աղբափոս*, *արտաքնոց* իմաստները: Հոդվածագիրը «*տան դրսի բակ*» հասկացության բառանուն է դիտարկել նաև *մղակ* բառը: Ըստ նրա՝ արաբերենից փոխառյալ *մղակ* բառը, որը «դռան փակ» իմաստն ունի, բառիմաստի ճյուղավորմամբ ձեռք է բերել ոչ միայն «շեմ» իմաստը, այլև աստիճանաբար դարձել է նաև «*բակ*» հասկացության նշանակելի:

Դիտարկվել են նաև բարբառային հայերենում գործածական բնիկ հայերեն *ցախ* արմատով բաղադրված *ցախանոց*, *ցախատուն* բառանունները:

Հոդվածագիրն անդրադարձել է նաև ուշագրավ *դրունքա* (*դրունգա*) բառանվանը, որի նշանակությունն է՝ «ձմեռը ձյան վրա անասունների (հատկապես ոչխարի) խոտ ուտելու տեղը»: Արարատյան բարբառի Արարատ գյուղի խոսվածքում ևս արձանագրվել է *դրունգա* բառանունը, որը այստեղ ձեռք է բերել «ոչխարների մնալու՝ տանը կից բացօթյա տեղ» իմաստը: Բառը ակնհայտորեն առնչակից է *դուռ* բառի գրաբարյան հոգնակի *դուրք*, *դրունք* բառաձևերին, որից էլ՝ *դրունքա*-ն:

Որոշ բարբառներում (Պոլիս, Տիվրիկ) «տան բակ» իմաստով հեղինակը փաստել է թուրքերենից փոխառյալ *ավլու*-ն (նաև *հավլու* հնչաձևով): Տիվրիկում բնակարանն ունեցել է իր բակը՝ *հավլ*-

լուն, իսկ նախագավիթի (օրթմե) առաջ՝ հովանոցը, որը կոչվել է *այագ*, որտեղ ամառվա տապին իրենց երեկոն էին անցկացնում ընտանիքի անդամները: Նախագավիթից բացվում էր բնակարանի դուռը, որտեղից անմիջապես մտնում էին միջանցք, որը տիվրիկ-ցիները *արալըխ* (արանք) էին կոչում: Որպես *տան բակ* հասկացության նշանակելի՝ հայերենի որոշ բարբառներում արձանագրվել է նաև թուրքերենից փոխառյալ *հայաթ* (hayat) բառաձևը: Նոր Նախիջևանում հիշատակված բառը «նախասենյակ» նշանակությամբ է փաստվել: Այն բնակելի չի եղել, այլ ծառայել է տնտեսական կարիքների համար:

**Խաչատրյան Հ., Ազգակցական հարաբերություններ
արտահայտող բառանունների բարբառային պատկերը
Արագածոտնի տարածաշրջանում (հոդված)**

Հոդվածագիրը ներկայացնում է Արագածոտնի մարզի Աշտարակի և Թալինի շրջաններում բնակվող սասունցիների խոսվածքներում գործառող՝ ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունները: Սասունի բարբառում *մայր* հասկացության դիմաց բնիկ հայերեն *մայր* բառի՝ *մէր* հնչաձևից բացի գործածական են նաև *մամ*, *դադէ*, *դայօ* բառանունները: Վկայված են *մամ* և *մամ*, ինչպես նաև՝ կոչական *մամօ*, *մամէ* ձևերը: Անդրադառնալով *դադօ* բառանվանը, վկայակոչում է Գ. Ջահուկյանին, որը այն համարում է բարբառային հնաբանություն՝ բխեցնելով հնդեվրոպական *dhe-dh(e) արմատից: Արագածոտնի մարզում բնակվող սասունցիների խոսվածքներում այն փաստված է *դադէ* հնչաձևով: Ըստ հոդվածագրի՝ *դադօ* բառի իմաստային դաշտում տեղաշարժեր են կատարվել «հայր» իմաստից «մայր» իմաստին, անգամ «մայր»-ից՝ «քույր» իմաստին, և կամ՝ հակառակը: Անդրադարձ է կատարվում նաև Սասունի բարբառում գործառող փոխառյալ *դայո* (մայր) բառանվանը: Իբրև *հայր* հասկացության բառանուն՝ սասունցիների բարբառում գործածվում են *բաբ*-ը, *բաբօ*-

ն: Բարբառային հայերենում *պապ* բառը գործառում է ն՝ *պապ* (*պապիկ*), ն՝ *հայր* իմաստներով: Ըստ հեղինակի՝ այս խոսվածքներում այն դրսևորված է «հայր» նշանակությամբ և բարբառին բնորոշ՝ բառասկզբի խուլերի ձայնեղացմամբ, իսկ կոչական ձևն է *բաբո*: Հեղինակն անդրադառնում է միջնորդավորված արյունակցական-ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանվանումների առաջին շղթան կազմող *պապ* և *տատ* հասկացություններին, որոնք դիտարկվող խոսվածքներում դրսևորված են *դադո*, *ճոճո* և *ճօփո* բառանուններով: Նշվում է, որ *ջօջ մամ*, *ջօջ աղե* բառակապակցություններից բառիմաստային բևեռացումով ձևավորվել է *ջօջո* բառը (*ճոճո*)՝ «տատ» իմաստով: *Դադո* հնդեվրոպական արմատը Սասունի խոսվածքներում գործառում է նաև «տատ» նշանակությամբ: Նկատվում է, որ հայերենի բարբառներում երբեմն հստակորեն տարբերակվում են մոր և հոր մայրերը, որն էլ պատճառ է դառնում *քեռմամա* նկարագրական կադապարի ձևավորման: Այդպես նաև՝ Սասունի բարբառում գործածվում է *տատ* հասկացության *խալմամ* բառանունը: Քրդերեն *խալօ* բառը «քեռի» է նշանակում, որից էլ՝ *խալմամ*՝ *քեռու մայր*: Քրդերենից է փոխառյալ նաև «պապ» հասկացության *ճօփո* բառանունը: Սասունի բարբառում *հորեղբայր* հասկացության բառային դրսևորումներից առանձնացվել է *հօխպէր*, *հօպիգ*, *հօպօ*, *ապօ* բառանունները: Արագածոտնի մարզում բնակվող սասունցիների խոսվածքներում գործածական են նաև *հորեղբայր* բառի համառոտված *հօպիգ*, *հօպօ* կոչականները: Հայերենի բարբառներում *ապօ* և *ափի* բառանունները, ըստ հեղինակի, դրսևորվում են որպես տարբեր հասկացությունների նշանակելիներ. *ապա*, *աբա*՝ որպես «մայր», *ապի*, *ափի*, *աբա*, *ապօ*, *ափօ*, *ափու*՝ «հայր»: Հոդվածագիրը կարծում է՝ Սասունի բարբառում *ապօ* բառանվան՝ «*հորեղբայր*» իմաստով գործածությունը իմաստային տեղաշարժի արդյունք է՝ *հայր* իմաստից՝ *հորեղբայր* իմաստին: Հայերենում խնամիական հարաբերություններ արտահայտող բառանվանումներից քննվել են *սկեսրայր-ը* և *սկեսուր-ը*, որոնք Սասունի բարբառում դրսևորվում են *գէսրէր*, *գէսուր* հնչաձևերով: Արագածոտնի մարզում բնակվող

սասունցիների խոսվածքներում արձանագրվել են նաև *բարըն-դադ*, *բարընմամ*, *բարընբար* բառանունները: Հիշյալ խոսվածքներում բնիկ հայերեն *հարս* բառի կողքին գործառում է նաև արաբերենից փոխառյալ *արուս* բառանունը: Քննվել է նաև *հարսնաքույր* հասկացության դիմաց վկայված *բ՞րբուդիկ* բառանունը: Դիտարկվել են նաև *կնքահայր* և *կնքամայր* բառանունները: *Կնքահայր-ը* դրսևորված է *կնունք+ավոր* կաղապարի *քրվոր* հնչյունափոխված տարբերակով: Հեղինակը նկատել է, որ որոշ խոսվածքներում առկա են նաև *կնքահայր* հասկացության *քաբար*, *քրբար* բառանունները՝ դարձյալ *կնունք* բառի մաշումով: *Կնքամայր-ը* դրսևորված է *քրվորգին*, *գընքամամ*, *քրմամ* բառանուններով: Փաստվում է, որ *քրմամ* և *քրբար* բառանունները կղզիացված են միայն Սասունի բարբառում: Հեղինակը փաստում է, որ դիտարկվող խոսվածքները հարազատորեն պահպանել են Սասունի բարբառի յուրահատուկ բառանունները (բնիկ հայերեն բառեր, բարբառային հնաբանություններ): Դրսևորված են նաև բառակազմական յուրօրինակ կաղապարներով բառանուններ:

Խաչատրյան Հ., Բառիմաստային յուրօրինակ զարգացումները Համշենի բարբառում (հոդված)

Համշենի բարբառը, ըստ հեղինակի, ներկայացնում է բարբառակիրների յուրօրինակ աշխարհընկալումն ու լեզվամտածողությունը, որոնցով էլ պայմանավորված՝ բարբառում բառերը հաճախ դրսևորվում են բառիմաստային տարբեր զարգացումներով ու ճյուղավորումներով: Հոդվածագիրը անդրադառնում է իրանական ծագում ունեցող *պէտ* (*պէտք*) բառին, որը «լավ» իմաստով գործածվում է միայն «ինչպե՞ս ես» հարցին ի պատասխան: Նշվում է, որ Համշենի բարբառում գործածվում է նաև *պէտք-ից* ձևավորված *բէտկընուշ* բայանունը՝ «առողջանալ, ապաքինվել» նշանակությամբ: *Պէտ* բառից է սերված նաև *բէդ ընուշ* հարադիր բայը՝ «սպասել» նշանակությամբ: Հոդվածագիրը դիտարկում է բարբա-

ռում *վայ* ձայնարկությամբ ձևավորած *վայուշ* բայանունը, որ բառիմաստային բևեռացումով գործածվում է «լաց լինել» իմաստով: Նշվում է, որ Համշենի բարբառում բառիմաստային ճյուղավորմամբ «այրել, վառել» իմաստով է գործառում *գոլ* արմատը: Հեղինակը նկատում է նաև, որ բարբառում *վառել*-ը (*վառուշ*) ունի «վերքի կսկծալ», «աչքի մրմռալ» նշանակությունները, որից էլ ձևավորվել է *վառեծուկ*-ը՝ «կծու» իմաստով: Գրաբարյան *Ժիր* արմատին ծագումնաբանորեն առնչակից է համարվում Խոտրջուրում և Համշենում արձանագրված *իժիր* բառանունը՝ «միշտ, հաճախ» իմաստով: Մատնանշվում է, որ Պոլսի բարբառում վկայված է «ամեն ի ժիր» արտահայտությունը՝ «միշտ, ամեն անգամ» իմաստով, դրանից բացի՝ դեռևս XII դ. Մ. Հերացին փաստել է «Երակն ի ժիր խաղայ» արտահայտությունը՝ «արագ-արագ» իմաստով, որից էլ եզրակացնում է, որ Համշենի բարբառում առկա *իժիր*-ը ի նախդրով և *Ժիր* արմատով բաղադրված բառանուն է:

Անդրադառնալով *պարապել* բային՝ հեղինակը նկատում է, որ Համշենի բարբառում *բարաբուշ* հնչաձևով այն «մի աման մի ուրիշ ամանի մեջ դատարկել» իմաստն է ստացել: Փաստվում է, որ բարբառում առկա է նաև *բարբուշ* տարբերակը, որը գործածվում է «վերջանալ, վերջացնել» նշանակությամբ: Ինքնատիպ օրինակ է *ուրիշուշ* (նաև *ուրուշուշ*) բառանունը, որը բաղադրված է *ուրիշ* անորոշ դերանունից և գործածվում է «հատիկեղենի միջից քարերը ընտրել, ձկան փորը մաքրել, կովոդներին իրարից անջատել» նշանակություններով: Փաստերը համադրելով՝ հոդվածագիրը եզրակացնում է, որ Համշենի բարբառում գործառող *ուրիշուշ* բառանունը պահպանել է գրաբարյան «զատել, իրարից անջատել, ջոկել» իմաստները: Համշենի բարբառում արձանագրվել են նաև բառիմաստային ճյուղավորմամբ բառեր: *Եղյալ* բառանունը՝ *էղիմ* և *աղիմ* հնչաձևերով, ձեռք է բերել «սառույց» նշանակությունը: Եղինջ-ը *էղիջ* հնչաձևով, դրսևորված է իր նախնական՝ «մի տեսակ փշաբույս» իմաստով: Առավել հետաքրքրական է, որ *էղինջը* Համշենի որոշ խոսվածքներում գործառում է նաև որպես բայարմատ՝ *էղիջուշ* (*էղիջը էղջեծ*): Ըստ հեղինակի՝ *թաթալ* բնիկ հայե-

րեն բառը՝ «ընկղմել, թաթաւել, մխրճել» նշանակությամբ, միջին հայերէնում փաստված է *«անձրև»* նշանակությամբ: Համշենի բարբառում ևս այն (*թատալ* հնչաձևով) *անձրև* հասկացության նշանակելին է: Նկատելի է, որ Համշենի բարբառում բառերի իմաստային յուրօրինակ դրսևորումները բավականին լայն ընդգրկում ունեն:

Խաչատրյան Հ., Տուն և տնտեսություն իմաստային դաշտն արտացոլող բառանունների բարբառային պատկերը Արագածոտնի տարածաշրջանում (հոդված)

Հոդվածում անդրադարձ է կատարվում Արագածոտնի մարզում գործածվող՝ «Տուն և տնտեսություն» իմաստային դաշտի *թոնի օղանցք, շեմ, որմնախորշ և առաստաղ* բառանուններին: Հեղինակը տարածաշրջանում իբրև *«թոնր օղանցք»* հասկացության բառանուններ է դիտարկում *ակ, ագուգա, սընդու, ձորձ* բառերը: *Ակ* բառանունը դրսևորված է *ագ, հ'ագ, ակ* հնչաձևերով, բառակապակցային *թունդրրի ագ, թօնրը ագ, թընդրրան ագ* տարբերակներով: Ապարանի շրջանի մի խոսվածքում «թոնրի օղանցք»-ը *ակուկա*՝ Վանի բարբառին բնորոշ բառանվամբ է վկայված: Հեղինակը կարծում է՝ այս բառանունը, որի նախնական նշանակությունն է եղել «ջրի կավե խողովակ», բառիմաստային ճյուղավորմամբ հիշյալ խոսվածքում ձեռք է բերել «թոնրի օղանցք» նշանակությունը: Արձանագրվել է, որ մարզի սասունցիաբնակ որոշ գյուղերում *ձորձ* բառանունը նույնպես իմաստային զուգորդումների շնորհիվ է ձեռք բերել «թոնրի օղանցք» նշանակությունը: Բարբառային հնաբանություն համարվող *սընդու* բառանունը փաստվել է Արագածոտնի մարզի Արարատյան բարբառի խոսվածքներում: Թոնրի օղանցքը կրակին սնունդ տալու միջոց է, և հեղինակը չի բացառում, որ *սընդու* կամ *սընտու* բառանունը կարող է ձևավորված լինել *ստնտու* կամ *սննդատու* բառանուններից՝ իբրև կրակին սնունդ տվող: Հոդվածագիրը նկատել է, որ *շեմ* հասկացու-

թյունը տարածաշրջանում արտացոլված է *շեմ, սեմ, շեմգալ, դը-րընդի* բառանուններով: Ապարանի շրջանում պահպանված է հնդեվրոպական *անդ* արմատով կազմված *դրանդի* բառաձևի *դը-րընդա* հնչատարբերակը, որն ունի միայն «դռան վերին շեմ» նշանակությունը: Մարզի խոսվածքներում *շեմ* հասկացության դիմաց առկա է *սեմ* բառանունը, որը դրսևորված է *և՛ սեմ, և՛ շեմ* տարբերակներով: *Միմ* հնչատարբերակ է արձանագրվել միայն Աշտարակի շրջանի Ավան գյուղում: *Շեմ* և *կալ* բաղադրիչներով ձևավորված *շեմակալ* բառանունը *սիմգալ, սեմգալ, սըմգըլ* հնչատարբերակներով է վկայված տարբեր խոսվածքներում: Հեղինակը հոդվածում քննել է նաև Արագածոտնի մարզում առկա «սենյակում պատի մեջ թողած՝ երեսը բաց պահարան» հասկացության *ակնատ, պարրրիան, պատուխան, դոլար, թ՞րեք* բառանունները: Ապարանի և Արագածի շրջանի որոշ գյուղերում որպես «որմնախորշ» հասկացության բառանուն վկայված են նաև *ակն* արմատից սերված *աճգունկ, աճկոճ* բառերը: Արագածոտնի մարզում հեղինակը «որմնախորշ» հասկացության բառանուններ է դիտարկել *պատրիան*-ը և *պատուհան*-ը: *Պատըրիան* տարբերակը գործառու է հիմնականում Արարատյան բարբառի խոսվածքներում: Ապարանի շրջանում ապրող ալաշկերտցիների և վանեցիների խոսվածքներում գործածվում է *պատուհան* բառի *պատուխան* հնչաձևը, Թալինի խոսվածքում՝ *պատուհան*: Հեղինակն արձանագրել է, որ Աշտարակի Լեռնարոտ գյուղում առկա է *բաղաչք* բառանունը՝ այսինքն՝ պատի աչք: Ըստ հոդվածագրի՝ *առաստաղ* հասկացության բառանուններից Արագածոտնի մարզում գործածական են *առիք-ը* և *օջորք-ը*: Թալինի, Ապարանի, Արագածի, մասամբ նաև Աշտարակի խոսվածքներում գործածվում է հիմնականում բնիկ հայերեն *առիք* բառանունը՝ *հառիք, հ առիք, հառիք, առիկ, հառինք, հ առիկ, առինկ(ք)* հնչատարբերակներով: Թալինի Ներքին Սասնաշեն գյուղի խոսվածքում, որպես *առաստաղ* հասկացության նշանակելի, արձանագրվել է *արկեղազ* յուրօրինակ բառանունը, որը, հեղինակի կարծիքով, *առիքի տակ* բառակապակցությունից բաղադրված բառանուն է: *Առաստաղ* հասկացու-

թյան՝ արաբական փոխառություն համարվող *օջորք* բառանունը Արագածոտնի մարզում վկայված է գերազանցապես Արարատյան խոսվածքներում:

**Կատվայյան Վ., Հայաստանի Հանրապետության բարբառային
համապատկեր, Գիրք 2. Կոտայքի մարզ (մենագրություն)**

«Հայաստանի բարբառային համապատկեր» շարքի 2-րդ գիրքը նվիրված է Կոտայքի մարզի լեզվական վիճակի նկարագրությանն ու վերլուծությանը: Մարզի համայնքները, ըստ հաղորդակցման լեզվի, հեղինակը բաժանում է երեք խմբի՝ ա) խոսակցական հայերեն հաղորդակցվող, բ) խառը տիպի խոսվածքով հաղորդակցվող, գ) որևէ բարբառի տարբերակով հաղորդակցվող համայնքներ: Մարզում հիմնականում հայերենի խոսակցական տարբերակով են հաղորդակցվում մեկուկես տասնյակ բնակավայրերում, որոնք բնութագրվում են բնակիչների՝ ըստ ծագման անհամասեռ կազմով: Սրանց մեծ մասը արդյունաբերական, գյուղատնտեսական կամ գիտաարտադրական նպատակներով հիմնադրվել է խորհրդային տարիներին՝ բնակեցվելով շրջակա բնակավայրերից ու հանրապետության տարբեր շրջաններից եկածներով: Երբեմն էլ տեղի է ունեցել որևէ բնակավայրի հիմքի վրա կամ մեկից ավելի բնակավայրերի միավորումով նոր, ավելի մեծ բնակավայրի ձևավորում: Կոտայքի մարզի երկու տասնյակ բնակավայրերում հաղորդակցվում են խառը խոսվածքներով, որոնք ձևավորվել են բարբառակիր տարբեր հանրությունների բավականին երկար ժամանակ համատեղ ապրելու պայմաններում: Դրանք զուգորդում են բարբառային տարբեր միավորների հատկանիշներ և այդ վիճակով չեն կարող անվերապահորեն վերագրվել բարբառային հայտնի այս կամ այն միավորին: Այդ կարգի բոլոր բնակավայրերի բնակիչների նախնիները տարբեր ժամանակներում (1828-1830թթ., 1870-ականներ, 1915-1920թթ.) ներգաղթել են Արևմտյան Հայաստանի գավառներից և Պարսկահայաստանից: Հեղինակը փաս-

տում է, որ խառը տիպի խոսվածքներում հիմնականում զուգորդվում են Արարատյան բարբառի և որևէ այլ բարբառի կամ բարբառների (առավելաբար՝ Մշո, ապա նաև Խոյ-Մարաղայի, Վանի, Բայազետի, Դիադինի բարբառների, նաև Թավրիզի խոսվածքի) հատկանիշներ: Մշո, Բայազետի, Խոյ-Մարաղայի, Վանի, Արարատյան բարբառների տարբեր խոսվածքներով, Մակուի, Արծափի խոսվածքներով հաղորդակցվում են Կոտայքի մարզի շուրջ երեք տասնյակ բնակավայրերում (ներառյալ քաղաքների թաղամասեր, խոշորացված համայնքների մեջ ներառված գյուղեր):

Հեղինակը նշում է, որ «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» ծրագրի շրջանակում 2016-2018 թթ. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցներ Հ. Խաչատրյանի, Ժ. Միքայելյանի և Գ. Մկրտչյանի հետ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ դաշտային աշխատանքներ են կատարվել Կոտայքի մարզի բնակավայրերում՝ տեսաձայնագրմամբ և հարցումներով գրանցելով բարբառային և բանահյուսական անհրաժեշտ նյութեր, որոնք այնուհետև մշակվել են ու գիտականորեն վերլուծվել: Ձեռք բերված տվյալների համադրումով ձևավորվել են Կոտայքի մարզի բնակավայրերի լեզվական բնութագրերը՝ համալրված բարբառային և բանահյուսական նյութերով, ժողովրդագրական տեղեկություններով, փաստական տվյալներով: Միաժամանակ ստացվել է մարզում գործածվող բարբառների և բարբառային հատկանիշների տարածման պատկերը, կատարվել են բարբառագիտական դիտարկումներ:

Կոտայքի մարզի բնակավայրերի լեզվավիճակը համակողմանիորեն ներկայացնելու նպատակով աշխատության առաջին մասում բերվում են ընդհանուր տեղեկություններ մարզում գործածվող Վանի, Խոյ-Մարաղայի բարբառների վերաբերյալ, ներկայացվում են տարածաշրջանում ինչպես այդ, այնպես էլ Մշո, Բայազետի, Արարատյան բարբառների և Մակուի ու Արծափի խոսվածքների դրսևորումների առանձնահատկությունները, ինչպես նաև բնութագրվում և վերլուծվում են խառը տիպի խոսվածքները:

Գրքի երկրորդ մասում այբբենական կարգով ներկայացվում են մարզի բնակավայրերը՝ բարբառային բնութագրերով: Սրանք հեղինակի ընտրած լեզվական հատկանիշների շրջանակում արտացոլում են դաշտային աշխատանքների ընթացքում դիտարկված իրողությունները, որոնք կարող են օգտագործվել բարբառագիտական հետազա ուսումնասիրություններում:

Գրքի երրորդ մասը ընդգրկում է գիտական տառադարձությամբ բերված բարբառային խոսքի նմուշներ: Աշխատությունը եզրափակվում է Կոտայքի մարզի խոսվածքներում արձանագրված բարբառային բառերի ցանկով:

Գիրքը կարող է կարևոր նյութ մատուցել հայերենագիտական հետազա ուսումնասիրություններին, նպաստել հայ բարբառագիտության, հայոց լեզվի պատմության շատ հարցեր պարզաբանելուն, Հայաստանի Հանրապետության լեզվական քարտեզ կազմելուն: Այն օգտակար կլինի նաև հայ բանահյուսության, ազգագրության մասնագետներին, ժողովրդագրության հարցերով զբաղվողներին: Առկա նյութը կարող է օգտագործվել հանրագիտարանային բնույթի աշխատանքներում, ուսումնական դասընթացներում:

Կատվալյան Վ., Գեղարվեստական խոսքը իբրև բարբառային լեզվի ուսումնասիրության կարևոր աղբյուր (հոդված)

Հոդվածում կարևորվում է այն իրողությունը, որ մեծ բանաստեղծը կամ գրողը ստեղծում է ոչ միայն բարձրարժեք գրականություն, այլև բերում է լեզվական նոր մշակույթ՝ այդպիսով նշելով լեզվի զարգացման ու հարստացման նոր ուղիներ և հեռանկարներ: Մեծ է Թումանյանի դերը այդ հարցում: Բանաստեղծը ժամանակին նշել է, որ ազնիվ ու գեղեցիկը կենդանի ժողովրդի կենդանի լեզուն է: Նա նկատել է, որ գրական լեզուն կկազմակերպվի միայն այն ժամանակ, երբ ժողովրդի լեզուն իր բոլոր դաշտերից, սարերից ու ձորերից կենդանի վտակներով կգա միանալու

սրա մեջ, և բոլոր բարբառները հանդես կբերեն իրենց գանձերը: Թումանյանը հորդորում է մեծ իրավունք տալ բարբառներին, նրանց բառերին, ոճերին ու ձևերին, և շնորհքի բան է, թե ով ինչքան ու ինչպես կօգտվի այդ կենդանի աղբյուրներից: Բանաստեղծը բարբառներից օգտվելը համարում է կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու բնական ճանապարհը:

Հեղինակը նշում է, որ բարբառները լեզվի բնական տարբերակային դրսևորումներն են, որ ներկայացնում են նույն այդ լեզվի ոգին ու էությունը, դարավոր զարգացման ընթացքը և հարստությունը, և առանց բարբառների դիտարկման անհնար է ամբողջացնել լեզվի ուսումնասիրությունը, մանավանդ լեզվի հնչյունաքերականական բոլոր իրողությունները, բառապաշարի հիմնական հատվածը ունեն բարբառային ծագում: Գնահատելի է համարվում, որ վերջին շրջանում ավելի մեծ ուշադրություն է դարձվում բարբառային լեզվի ուսումնասիրության խնդիրներին, բայց նաև նշվում է, որ համեմատաբար քիչ են տեսական հարցադրումներն ու առաջադրվող լուծումները, լեզվաբանական նոր հայեցակետերի կիրառումով հետազոտությունները: Մասնավորապես, գրեթե հաշվի չի առնվում այն, որ բարբառային լեզուն դրսևորվում է բանավոր եղանակով, ուստի այն կարիք ունի քննվելու ոչ միայն իբրև լեզվական համակարգ, այլև իբրև դրա իրացում, այսինքն՝ իբրև խոսք: Հեղինակն անհրաժեշտ է համարում բարբառները դիտարկել նաև իբրև խոսք, որը թույլ կտա խորացնել դրանց վերաբերյալ պատկերացումները, ավելի ամբողջականորեն մեկնաբանել բարբառագիտական այս կամ այն խնդիրը: Նշվում է, որ խոսքային մակարդակում բարբառների քննության դեպքում բարբառային բոլոր հատկանիշները միաժամանակ չեն կարող դիտարկվել, և բարբառը իր ողջ համակարգով ու կառուցվածքով հնարավոր չի լինի ընդգրկել, բայց նման քննությամբ հնարավոր կլինի առանձնացնել և տարբերակել առավել էական ու ցայտուն հատկանիշներ, վեր հանել մասնավոր կարգի հնչյունական, ձևաբանական, բառապաշարային յուրահատկություններ, շարահյուսական հատկանիշներ, խոսքը կառուցելու առանձնահատկու-

թյուններ: Որևէ բարբառ դիտարկելիս հետազոտությունն ավելի արդյունավետ կարող է լինել, եթե լեզվական քննությունը գույգորդվի խոսքայինով:

Նկատվում է, որ այս կարգի հետազոտության առարկա կարող են դառնալ բարբառային խոսքի կենդանի դրսևորումները, ճշգրիտ եղանակներով գրանցված բարբառային նմուշները, ավելի վաղ գրանցված բանահյուսական կամ ուղղակի խոսքային նմուշները, բարբառագիր հեղինակների գեղարվեստական երկերը: Այդպիսով՝ հնարավոր կլինի դիտարկել բարբառային խոսքում կատարված տեղաշարժերը, խոսքային յուրահատկությունները, գույցե նաև որպես գեղարվեստի միջոց գործառելու հանգամանքները:

Հոդվածում իբրև բարբառային խոսքի դրսևորում դիտարկվում է Թումանյանի «Արջատրսը» պատմվածքը, որը գրված է Արարատյան բարբառի Լոռու խոսվածքով: Հոդվածագիրը հաջորդաբար ներկայացնում և վերլուծում է խոսքի առավել էական առանձնահատկությունները՝ ժողովրդական լեզվամտածողությունը ներկայացնող արտահայտություններ, պատկերավորման միջոցներ, դարձվածքներ, բարբառային բառեր, ընդհանուր հայերենյան բառերի բարբառային տարբերակներ, բառիմաստային յուրահատկություններ, քերականական հատկանիշներ: Նշվում է նաև, որ դիտարկվող բարբառային խոսքը, իբրև գեղարվեստական երկի արտահայտություն, կրել է հեղինակային դրոշմը, բայց և բարբառային ցանկացած խոսք ունի իրադրական բնույթ՝ կրելով խոսողի անհատական մտածողության ու լեզվամշակույթի կնիքը: Արձանագրվում է, որ Լոռու խոսվածքի՝ պատմվածքում դրսևորված շատ հատկանիշներ բավականին հին են և կարող են նպաստել այդ բարբառային միավորի պատմական քննությանը, մյուս կողմից՝ գեղարվեստական գրականության մեջ բարբառային իրողությունների դիտարկումը կարևոր է նաև հայոց լեզվի արտահայտչամիջոցների վերաբերյալ պատկերացումներն ամբողջացնելու առումով:

Կատվալյան Վ., Մի քանի դիտարկում բարբառային հայերենի բառապաշարի մասին (հոդված)

Հեղինակը նշում է, որ ի տարբերություն գրական լեզվի բառապաշարի՝ բարբառային բառապաշարն ունի ձևավորման, գործածության, փոփոխության, համալրման՝ գիտակցական կարգավորման չենթարկվող յուրահատկություններ, որոնցով ներկայանում է իբրև բազմաշերտ ու բազմաձև, բազմիմաստ ու բազմերանգ իրողությունների անընդգրկելի մի բազմություն: Ցանկացած բարբառային միավոր ունի բառապաշարի զգալի յուրահատկություններ, որոնք ամեն մի դեպքում ձևավորում են բառապաշարի առանձին համակարգ: Մակայն բարբառային հայերենի բառապաշարը, հեղինակի կարծիքով, բարբառագիտական աշխատություններում պատշաճ ուշադրության չի արժանացել, չի ենթարկվել համակարգային ամբողջական քննության: Հոդվածում (մոտ չորս տասնյակ բարբառային միավորներից քաղված նյութի շրջանակում) ներկայացվում են բարբառային բառապաշարի որոշ առանձնահատկություններ՝ ըստ պատմական շերտերի, բառակազմական ու իմաստաբանական իրողությունների, առավելաբար ուշադրություն է դարձվում բարբառային բաղադրյալ կառույցներին: Հեղինակն անդրադառնում է բարբառային բաղադրություններում հինհայերենյան կամ ավելի վաղ շրջանի բառային միավորների դրսևորումներին, բարբառներում ինքնուրույն գործածություն ունեցող, բայց արդի գրական լեզվում չպահպանված գրաբարյան բառերին, գրաբարում չհանդիպող պարզ ձևերին, գրաբարյան նախդիրներ պարունակող բարբառային կազմություններին, բարբառներում գրաբարյան բառային իմաստների պահպանման յուրօրինակ դեպքերին, բարբառների բառակազմական յուրահատկություններին: Նշվում է, որ բարբառային լեզվում մեծ տարածում ունեն տարբեր խոսքի մասերից ձևավորված բայերը, և հատկապես շատ են գոյականներից ու ածականներից կազմվածները: Ուշագրավ են ածանցական յուրահատուկ ձևերը: Արձանագրվում է, որ բարբառախոս

միջավայրում նոր բառի արժեք կարող են ձեռք բերել կրճատված ձևեր, քերականական իրողություններ, հատուկ անուններ, ազգերի ու ցեղերի անուններ և այլն: Բարբառային բառապաշարը աչքի է ընկնում իմաստաբանական յուրահատկություններով: Նկատելի է իրողությունների նկարագրական բնութագիր ներկայացնող բաղադրությունների առատություն: Հաճախ բարբառային կազմությունները արտահայտում են խոսողների կողմից իրողության ընկալման հասկացական առանձնահատկությունները, փոխաբերական իմաստ ունեցող մեծաթիվ բաղադրություններ վկայում են բարբառակիր հանրության պատկերավոր մտածողության ու կենսավորձի մասին: Նշվում է, որ բարբառային բառապաշարի յուրահատկություններից է այս կամ այն տարածքում բառերի գործածությունը սովորականից տարբեր իմաստներով: Բացի դրանից՝ հաճախ բառային նույն միավորը տարբեր բարբառներում ունենում է տարբեր իմաստներ: Հոդվածում առանձին անդրադարձ է կատարվում տարբեր ոլորտների բառաշերտերի, իմաստային խմբերի: Նկատվում է նաև, որ բարբառային բառապաշարը որոշակի տարբերակվածություն է հանդես բերում ըստ տարածական ընդգրկումների, զգալի են արևմտյան և արեւելյան բարբառների բառային տարբերությունները: Նշվում է, որ բառապաշարային յուրահատկություններով կարող են առանձնանալ նաև ավելի փոքր տարածքներ, որոնք կներառեն բարբառախմբեր, հարևան բարբառային միավորներ և այլն: Ամեն մի բարբառային միավոր բնութագրվում է նաև միջավայրով պայմանավորված բառամթերքով, միայն իրեն հատուկ բառային միավորներով, որոնց դիտարկումը նույնպես էական նշանակություն ունի հայերենի բառապաշարի քննության առումով: Ինչպես առանձին բարբառային միավորի, այնպես էլ ընդհանրապես բարբառային լեզվի բառապաշարի համար բնութագրական են և հայոց լեզվի բառագանձն են կազմում դարձվածային միավորները, ձևաիմաստային խմբերը: Հեղինակը փաստում է, որ դիտարկված իրողությունները գրական հայերենի բառապաշարի հարստացման աղ-

բյուր են, բայց կարծում է՝ բարբառների բառագանձը միայն այդ առումով չէ, որ հետաքրքրական է: Բարբառային բառապաշարը նախ և առաջ հայոց լեզվի անքակտելի հարստությունն է, որի արժևորումն ու հիմնավոր հետազոտությունը կարևոր նշանակություն կարող են ունենալ ոչ միայն լեզվաբանության, այլ նաև ազգագրության, հայ ժողովրդի պատմության, մշակութաբանության և այլ գիտակարգերի համար:

Կատվայան Վ., Փարպիի խոսվածքը (հոդված)

Հեղինակը փաստում է Փարպիի խոսվածքի կարևորությունը հայ բարբառագիտության համար՝ հիշատակելով Ա. Ղարիբյանի այն դիտարկումը, որ Արարատյան բարբառով մաքուր խոսվածք կարելի է գտնել Փարպի գյուղում: Փարպիի խոսվածքով ընդարձակ նմուշ կա Ա. Ղարիբյանի «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ, այս խոսվածքին անդրադարձել են նաև Գ. Ղափանցյանը, Ռ. Մարկոսյանը, սակայն Փարպիի խոսվածքը առանձին ուսումնասիրության առարկա չի եղել: Խոսվածքի հատկանիշներն արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1977 թ. լրացված թիվ 9 տետրում, որում նշվում է, որ Փարպիի բնակիչները բնիկներ են, և բնակավայրը լեզվական տեսակետից համասեռ պատկեր է ներկայացնում, իսկ խոսվածքը ընդհանուր հայերենի զարգացման օրինաչափությունների շրջանակներում ձևավորվել է իր սեփական ներքին օրենքներով: Հեղինակը նշում է, որ մեր օրերում շուրջ 2400 բնակիչ ունեցող գյուղի լեզվական ընդհանուր բնութագիրը ճշտելու նպատակով բարբառագիտական հետազոտություն է անցկացվել բնակավայրում, կատարվել են անհրաժեշտ գրանցումներ և գրառումներ:

Փարպիի խոսվածքի համար հոդվածագիրը բնութագրական է համարում հնչյունական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են երկբարբառային հնչյունների բացակայությունը, համապատասխան ձայնավորներից առաջ միավանկ բառերի սկզբում *ւ/-ի* և *յ-ի*

հավելումները, բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի պահպանումը, որոշ դեպքերում դ-ից առաջ բառասկզբի ձայնավորի անկումը, *ոյ, իւ* երկբարբառների դիմաց *յ* պարզ ձայնավորի առկայությունը, բառասկզբում շնչեղ ձայնեղ բաղաձայնների գործածությունը, բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց շնչեղ խուլերի հանդես գալը, քմայնացած բաղաձայնների բացակայությունը, միավանկ բառերի սկզբում *ռ*-ից առաջ *ֆ*-ի առկայությունը, բառասկզբի *խ*-ի դիմաց տարնմանական *հ*-ի դրսևորումը, օտար բառերի սկզբում *ղ* շփականի գործածությունը և այլն: Նշվում է, որ Փարսիի խոսվածքում կայուն արտահայտությունն ունեն նաև Արարատյան բարբառի քերականական հիմնական հատկանիշները: Ընդհանուր *եք, նեք* հոգնակերտներից բացի՝ խոսվածքում արձանագրվել են նաև *ք, էք, անհք, անք, տինք* հոգնակերտները: Խոսվածքում Ո ներքին հոլովման ընդգրկումը ավելի լայն է, գուգահեռաբար դրսևորվում է նաև Ոջ հոլովում, հատուկ տեղանունները կարող են ենթարկվել նաև Ա արտաքին հոլովման, բացառական հոլովը ունի *ց*-ով վերջավորություն, որոշիչ հոդը ունի արտահայտության *ը* և *ն* ձևերը, որոշիչ հոդ ստանում են նաև բացառական, գործիական ու ներգոյական հոլովները: Բնութագրական է, որ անձնական դերանվան տրական հոլովի ձևերը *յ* հավելված չունեն, արձանագրվել են անձնական դերանունների բացառականի՝ *ց* չունեցող ձևեր և այլն: Խոսվածքում անորոշ դերբայը *ալ, էլ* վերջավորություններից բացի ունենում է նաև *իլ* վերջավորություն, բայի ներկա ժամանակաձևը կազմվում է *ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով, վաղակատար դերբայն ունի *էլ* վերջավորություն, հարակատար դերբայը՝ *ած*, խոսվածքն ունի ընթացակցական դերբայ՝ *էն* վերջավորությամբ: Էական բայի ներկայի ձևերն են՝ *եմ, էս, ա, էնք, էք, էն*, անցյալի ձևերը՝ *ի//էյի, իք//էյիք, էր, ինք//էյինք, իք//էյիք, ին//էյին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես ցոյական, այնպես էլ անցոյական հիմքերով: Այս ժամանակաձևում չկան ներգործած և կրավորած վերջավորություններ

նույն կազմության բայերի համար, բայց Ե խոնարհման պարզ բայերը եզակի հրամայականում ըստ սեռերի ունեն տարբեր վերջավորություններ: Արգելական հրամայականի կազմիչը եզակի թվում ունի *մի՛* ձևը, հոգնակի թվում՝ *մէ՛ք* ձևը: Պատճառական ածանցն է՝ *ցըն*: Պատճառական բայերի եզակի հրամայականն ունի *ա* վերջավորություն: Փարպիի խոսվածքում հեղինակը նկատում է հարադիր բայերի առատություն: Նշվում է, որ Փարպիի խոսվածքը այժմ էլ ներկայանում է իբրև Արարատյան բարբառի հիմնական հատկանիշները հարազատորեն պահպանած բարբառային միավոր, որը բնութագրվում է յուրահատկություններով, ինչպես նաև՝ բարբառի այլ խոսվածքների հետ ընդհանրություններով ու տարբերություններով:

Կատվայան Վ., Կոտայքի մարզի որոշ խոսվածքների առնչությունը Վանի բարբառին (հոդված)

Հոդվածում ընդհանուր տեղեկություններ են տրվում Վանի բարբառի մասին: Նշվում է, որ եղեռնը հայազրկեց Վանի բարբառի տարածման վայրերը, ջարդերից փրկված հայության որոշ զանգվածներ ապաստան գտան Արևելյան Հայաստանում, աշխարհի զանազան անկյուններում: Ճիշտ է, Վանի բարբառի՝ բնօրրանից դուրս գոյություն հայ բարբառագիտությունը չի արձանագրել, սակայն հոդվածագիրը փաստում է, որ վերջին շրջանի դիտարկումները ի հայտ են բերել Վանի բարբառի դրսևորումների առկայություն Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանում: Այդպիսիք նա համարում է Լեռնանիստ գյուղի և Հրազդան քաղաքի Վանատուր, Կաքավաձոր և Ջրառատ թաղամասերի խոսվածքները: Նշվում է, որ բոլոր այդ բնակավայրերի բնակիչների նախնիները գաղթել են Վանի տարածաշրջանից, շրջակա այլ բնակավայրերից, նաև Խոյից, Մակուից, Մալմաստից, Արծափից և այլն: Հիշյալ բնակավայրերի խոսվածքների հնչյունաքերականական հիմնական հատկանիշները դիտարկվում են Վանի բարբառի համեմատությամբ, և այդ խոսվածքները երևան են բերում բազմաթիվ

հատկանիշների՝ միայն այդ բարբառին հատուկ համադրություն: Հոդվածագիրը փաստում է, որ, բնականաբար, դիտարկվող խոսվածքները չունեն Վանի բարբառում անցյալ դարի կեսերին արձանագրված մի շարք հատկանիշներ, և դրանց որոշ մասի բացակայությունը կարող է բացատրվել ժամանակի գործոնով, իսկ մյուս մասն էլ՝ շրջակա բարբառների ազդեցությամբ: Մինչդեռ խոսվածքները ներկայացնում են շատ կարևոր հատկանիշների այնպիսի համակցություն, որով կարող է բնութագրվել միայն Վանի բարբառը: Մասնավորապես, հեղինակը նկատի ունի հնչյունաքերականական հետևյալ հատկանիշները՝ երկաստիճան ձայնեղագուրկ բաղաձայնական համակարգ, բառասկզբի խլացած բաղաձայններից հետո քմայնացած ձայնավորի առկայություն, քմայնացած հետնալեզվային հպականների գործածություն, բաղաձայնանախորդ դիրքերում հետնալեզվային հպականների, *նք*, *նգ* խմբերի վերածում *յ*-ի, հինհայերենյան *հ*-ի դիմաց բոլոր դիրքերում *խ*-ի առկայություն, բառասկզբում օտար բառերի *դ*-ի դիմաց *կ*-ի գործածություն, միայն *ն* որոշիչ հոդի գործածություն, անձնական դերանունների տրականի կրճատ ձևերի առկայություն, *Կը* ճյուղի պատկանելություն, հարակատարի *ուկ* և վաղակատարի *իք* (եր) վերջավորությունների առկայություն և այլն: Այսպիսով՝ չնայած դիտարկվող խոսվածքները որոշ դեպքերում հեռացել են Վանի բարբառից, սակայն դրանք հիմնական հատկանիշներով, այնուամենայնիվ, պետք է համարվեն Վանի բարբառի դրսևորումներ, մանավանդ դիտարկվող խոսվածքների՝ Վանի հատկանիշներից տարբերությունների քանակը երկու տասնյակի չի հասնում Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման 100 հատկանիշների շրջանակում: Հոդվածագիրը նկատում է, որ դիտարկվող միավորներից առանձնանում է Լեռնանիստի խոսվածքը, որն ավելի հարազատորեն է պահպանել Վանի բարբառի հատկանիշները, իսկ մյուսներն ունեն որոշ զանազանություններ՝ պայմանավորված տարբեր ազդեցություններով ու գործոններով: Բացի դրանից՝ եթե Լեռնանիստում բնակչության խոսվածքը հիմնականում

համասեռ է, ապա նկարագրված լեզվավիճակը մյուս բնակավայրերում բնակչության տարբեր շերտերին հավասարաչափ հարազատ չէ: Հեղինակը նաև նկատում է, որ Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանի որոշ գյուղերի խոսվածքներում, որոնց բնակիչների մեջ այս կամ այն չափով կան Վանի տարածաշրջանից գաղթածների սերունդներ, նույնպես արձանագրվել են Վանի բարբառին բնորոշ հատկանիշներ, սակայն դրանք այդ խոսվածքներում գերակշռող չեն, զուգորդվում են այլ բարբառների հատկանիշներով, շատ դեպքերում էլ արևմտյան բարբառներին բնորոշ ընդհանուր իրողություններ են:

Կասովայան Վ., Խառը տիպի խոսվածքները Կոտայքի մարզում (հոդված)

Հոդվածագիրը փաստում է, որ Կոտայքի մարզում խառը տիպի խոսվածքներ ունեցող բնակավայրերի թիվը հասնում է գրեթե երկու տասնյակի: Պայմանավորված բնակիչների ծագման յուրահատկություններով, զանազան ազդեցություններով՝ նման խոսվածքները զուգորդում են տարբեր բարբառների հատկանիշներ, և դժվար է անվերապահորեն դրանք վերագրել բարբառներից որևէ մեկին: Նշվում է, որ Կոտայքի մարզի խառը տիպի խոսվածքներում հիմնականում դրսևորվում են Արարատյան բարբառի և որևէ այլ բարբառի կամ բարբառների հատկանիշներ՝ պայմանավորված հիշյալ բնակավայրերի հիմնադրման հանգամանքներով, բնակիչների նախնիների լեզվական յուրահատկություններով: Հեղինակն արձանագրում է, որ հիշյալ բոլոր խոսվածքներն էլ ներկան կազմում են *ուս//ըս* վերջավորությամբ անկատար դերբայով, սակայն այդ հատկանիշը զուգորդվում է Ում ճյուղին ոչ բնորոշ բազմաթիվ հատկանիշներով, և այդ հանգամանքը թույլ չի տալիս այդ խոսվածքները համարել Արարատյան բարբառի տարբերակային դրսևորումներ: Մյուս կողմից՝ Ում ճյուղի հիմնական բնութագրիչ հիշյալ հատկանիշի առկայությունը թույլ չի տալիս Մշո, Վանի կամ Խոյ-Մարաղայի բարբառների ցայտուն հատկանիշներ

ունեցող խոսվածքները վերագրել այդ բարբառներին: Հոդվածագիրը կարծիքով՝ դիտարկվող խոսվածքները միջխոսվածք համարվել չեն կարող, որովհետև ներկայացնում են ոչ թե մի բարբառից մյուսին աստիճանական անցման բնական վիճակներ, այլ առաջացել են բարբառախոս տարբեր հանրությունների տեղաշարժերի, բարբառային միավորների կամայական խաչաձևումներով ու նոր միջավայրի ազդեցություններով: Հոդվածում խոսվածքները ներկայացվում են ըստ բարբառային տարբեր միավորների հատկանիշների գույգորդումների: Նկատվել է, որ ավելի հաճախ խոսվածքներում գույգորդվում են Արարատյան և Մշո բարբառների հատկանիշները: Առանձնացվում են մի շարք հատկանիշներ, որոնք ընդհանուր կամ գրեթե ընդհանուր են խառը տիպի բոլոր խոսվածքների համար: Այդ հատկանիշների շրջանակում հեղինակը ընդգծում է մի շարք իրողություններ. ա) իրենց կենսունակությունը շարունակում են պահպանել խոր հնություն ունեցող և որոշակի տարածաշրջանների բարբառային խոսքի բնութագրիչներ հանդիսացող, ինչպես նաև ընդհանուր բնույթ ունեցող հատկանիշները, բ) խառը տիպի խոսվածքներին հատուկ են գրեթե ողջ բարբառային լեզուն կամ դրա մի զգալի հատվածն ընդգրկած զարգացումներ, գ) մի շարք հատկանիշներ ընդհանրացել են արևելահայ լեզվական միջավայրի ազդեցությամբ, դ) հիմնականում արևմտյան բարբառներին վերաբերող հատկանիշների կենսունակ մի խումբ պահպանվել է նոր միջավայրում: Նշվում է, որ խառը տիպի խոսվածքներին բնորոշ են նաև ընդհանուր տարածում չունեցող հատկանիշներ: Տարբեր բարբառների՝ դիտարկվող խոսվածքներում ընդհանուր տարածում չունեցող հատկանիշների համամասնությունների հաշվառումով այդ խոսվածքները հոդվածագիրը բաժանում է երկու խմբի. ա) խոսվածքներ, որոնցում ակնհայտ է բարբառային որևէ միավորի հատկանիշների գերակայությունը, բ) խոսվածքներ, որոնցում բարբառային որևէ միավորի հատկանիշներ զգալի գերակշռություն չունեն: Մասնակի դրսևորում ունեցող որոշ հատկանիշների լայն ընդգրկումը հեղինակը

պայմանավորում է նրանով, որ դրանք բնորոշ են խառը խոսվածքների ձևավորած մեկից ավելի բարբառների: Այլ դեպքերում հատկանիշի տարածվածությունը կարող է պայմանավորված լինել այն կրող բարբառային միավորի տարածվածությամբ: Խառը տիպի խոսվածքներում բարբառային շատ հատկանիշներ պակաս կենսունակ են, որպես կանոն նոր միջավայրում՝ մարող: Այլ դեպքերում որևէ հատկանիշի սակավ դրսևորումը կարող է պայմանավորված լինել՝ ա) այն կրող բարբառային միավորի՝ տարածաշրջանում թույլ ներկայությամբ, բ) հատկանիշի՝ լեզվական քիչ միավորներ ընդգրկմամբ և այլն: Նկատվում է, որ հատկանիշները պահպանելու կամ մարելու խնդրում կարևոր դեր կարող են ունենալ նաև լեզվական և հոգեբանական գործոնները: Հեղինակը եզրակացնում է, որ խառը տիպի խոսվածքների ձևավորման պատճառ կարող են դառնալ բարբառախոս հանրույթի ծագումնաբանական անհամասեռությունը, բարբառային տարբեր միավորների տարատեսակ խաչաձևումները, լեզվական հատկանիշների, տարբերակային ձևերի տարբեր փոխհարաբերություններն ու գոյատևման հանգամանքները, լեզվի զարգացման պայմաններն ու միտումները և այլն: Կոտայքի մարզի խառը տիպի խոսվածքների ձևավորման գործում հեղինակը հարկ է համարում ընդգծել արևելյան լեզվական միջավայրի էական դերը:

Կատվայյան Վ., Հինհայերենյան իրողություններ Սասունի բարբառում (հոդված)

Հոդվածագրի վկայությամբ՝ Սասունի բարբառը հայերենի քիչ ուսումնասիրված բարբառային միավորներից է: Հիշատակելով բարբառին վերաբերող կարծիքները և գիտական տեղեկությունները՝ նա փաստում է, որ Սասունի բարբառը պատկանում է հայ բարբառների Կը ճյուղին, ունի միջին հայերենին համապատասխան բաղաձայնական համակարգ, որում հինհայերենյան խուլերի դիմաց գործածվում են ձայնեղներ, ձայնեղների դիմաց՝ խուլեր: Բարբառում անորոշ հոդն ունի հետադաս կիրառություն,

առկա է երկակի թվի դրսևորում, հայցական հոլովը նման է ուղղականին և որոշյալ առման դեպքում ստանում է *q* նախդիր, բայն ունի *h* և *Ա լծորդություններ*, վաղակատար դերբայը՝ *hy*, իսկ հարակատարը՝ *niq* վերջավորություն, եզակի առաջին դեմքի դիմաց հաճախ գործածական է հոգնակիի ձև և այլն: Նշվում է, որ Սասունի բարբառը ևս պահպանում և պարունակում է մեր լեզվի զարգացման տարբեր շրջանների բնորոշ շերտեր և իրողություններ, որոնց յուրահատուկ զուգորդումները բարբառային միավորները տարբերակող նշանակություն ունեն: Այդ առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Սասունի բարբառը բնութագրող հինհայերենյան իրողությունները: Հեղինակի կարծիքով՝ քննության ենթակա են նման երկու կարգի իրողություններ՝ ա) հինհայերենյան շրջանից եկող բարբառային հատկանիշներ, բ) գրաբարյան համակարգի արձագանքներ, որոնք արդի լեզվաըմբռնողությամբ բարբառային հատկանիշներ են: Բերվում են Սասունի բարբառի մի շարք իրողություններ, որոնք բավականին հին են և, ըստ հեղինակի, թերևս գալիս են հինհայերենյան կամ ավելի վաղ շրջանից: Նման հատկանիշներից են. ա) բառակզբի ձայնեղ հպականների և հպաշփականների խլություն, բ) ոչ բառակզբի խուլ հպականների և հպաշփականների ձայնեղ արտասանություն, գ) ձայնավորների քմայնացման առկայություն, դ) *nih*-ով հոգնակի, ե) *ih*-ով հավաքական հոգնակի, զ) *anh*-ով հավաքական հոգնակի, է) *nr/t/aj/p*-ով հավաքական հոգնակի, ը) *niq*-ով դերբայ և այլն: Հետաքրքրական են հինհայերենյան համակարգի արձագանք-հատկանիշները, որոնցից են. ա) բազմավանկ բառերի սկզբում *h*, *n* պարզ ձայնավորների նախնական վիճակի պահպանում, բ) հոգնակի թվով հոլովման ժամանակ *p-g/δ* հերթագայության դրսևորում, գ) բառավերջի *u*, *o* ձայնավորներից հետո սեռական հոլովի ցուցիչի բացակայություն (սա կարող է առնչվել գրաբարյան Ա վերջադրական հոլովման ենթարկվող որոշ օտար հատուկ անունների սեռականի կազմությանը, որն արտահայտվում էր հետագայում համր դարձած *j*-ի հավե-

լումով), դ) հայցական հոլովում գրաբարյան *զ* նախդրի գործածություն (հետաքրքրական է, որ արտացոլվում է նաև նախդրի կիրառության այն օրինաչափությունը, ըստ որի՝ նախադաս լրացման առկայության դեպքում նախդիրն անցնում է լրացմանը), ե) անորոշ հոդի հետադաս կիրառություն, զ) Ի նախդրի դրսևորում ներգոյականի իմաստի արտահայտության համար, է) բացառական հոլովի *է* վերջավորության առկայություն, ը) ներգոյական հոլովի իմաստի արտահայտություն ոչ հոլովական ձևերով, թ) անձնական դերանվան գրաբարատիպ ձևերի առկայություն, ժ) անցյալ կատարյալի հոգնակի առաջին դեմքում գրաբարատիպ (*ն*-ի բացակայությամբ) վերջավորության առկայություն, ժա) բայական նախահավելվածի դրսևորում և այլն: Բարբառում պահպանված հինհայերենյան հնչյունաքերականական տարրերի հետ առկա են նաև այդ կարգի բազմաթիվ բառապաշարային իրողություններ: Մասնավորապես, բարբառում գործածական են գրաբարյան շերտի բառեր (որոնք չկան կամ սովորական չեն գրական հայերենում), բարբառի բառապաշարում պահպանվել են նաև գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներ և այլն: Հեղինակը եզրակացնում է, որ Մասունի բարբառում հինհայերենյան իրողությունները զգալի շերտ են ներկայացնում՝ վկայելով ինչպես բարբառի անցած երկարատև ուղու, հարստության, այնպես էլ հայոց լեզվի տարածաժամանակային ամբողջականության մասին: Ինչպես Մասունի, այնպես էլ այլ բարբառների՝ լեզվի զարգացման նախորդ փուլերից եկող շերտերի համակարգված հետազոտությունը, ըստ հոդվածագրի, էական նպաստ կարող է բերել հայոց լեզվի պատմական ուսումնասիրությանը:

Կատվայան Վ., Մակուի խոսվածքը Կոտայքի մարզում
(հոդված)

Բարբառային հայերենի՝ դեռևս ամբողջապես չուսումնասիրված դրսևորումներից է Մակուի խոսվածքը, որի բնօրրանը Պարսկահայաստանի Մակու գավառն է: Ռուս-պարսկական պա-

տերազմից հետո՝ 1829-1830թթ. ընդհանուր գաղթի ժամանակ, քաղաքի և գավառի հայ բնակչությունը ապաստանել է Արևելյան Հայաստանում: Հիմնականում Սևանի տարածաշրջանի՝ մոտ մեկ տասնյակ գյուղերում բնակություն հաստատած մակվեցիների սերունդները մինչև օրս էլ պահպանել են իրենց մայրենի խոսվածքը: Մակուի խոսվածքը դրսևորումներ ունի նաև Կոտայքի մարզում:

Հոդվածագիրը փաստում է, որ Կոտայքի մարզում Մակուի խոսվածքը գործածվում է Հրազդանի տարածաշրջանի Ալափարս, Արզական, Քաղսի գյուղերում և Աբովյանի տարածաշրջանի Գառնի գյուղում: Բոլոր չորս տարբերակները, ըստ հեղինակի, նախ և առաջ բնութագրվում են Մակուի խոսվածքին բնորոշ ընդհանուր հատկանիշներով, ինչպիսիք են երկբարբառային հնչյունների առկայությունը, բառասկզբում հինհայերենյան *է,ռ* միավորների դիմաց այլ ձևերի առկայությունը, բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը, շնչեղ ձայնեղների առկայությունը, հետնալեզվայինների քմայնացումը, բաղաձայնանախորդ դիրքերում հպաշփականների վերածումը շփականների, բառասկզբում ձայնավորից առաջ հազագի հավելումը, օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց *կ*-ի գործածությունը, վերջնականկային շեշտի առկայությունը, բացառականի ձևավորումը *ց*-ով, ներգոյականի իմաստի արտահայտությունը հայցականով կամ սեռականով և *մեջ* կապով, որոշիչ հոդի դրսևորումը *ը* և *ն* տարբերակներով, անձնական դերանունների տրական հոլովում *ի* հավելվածի առկայությունը, *ուս//ըմ* վերջավորությամբ անկատար դերբայի, անցյալ կատարյալի ներգործածն և կրավորածն վերջավորությունների առկայությունը, բայական *չ* ածանցի բացակայությունը, պատճառական *ցըն* ածանցի դրսևորումը և այլն: Խոսվածքին այս կամ այն չափով բնորոշ մի շարք հատկանիշներ էլ (հոդվածագիրը նկատի ունի այնպիսի հատկանիշներ, որոնք դրսևորվում են նաև Մակուի խոսվածքի՝ Սևանի տարածաշրջանի տարբերակներում) դիտարկվող բնակավայրերում մասնակիորեն կամ տարբերակային ձևե-

րով են արձանագրվել: Այդպիսիք են, օրինակ, *ա* ձայնավորի որոշ չափով շրթնայնացած արտասանությունը, հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ*-ի, միավանկ բառերի սկզբում *հո*-ի դիմաց *ֆո*-ի առկայությունը, քմայնացած հետնալեզվայինների դրսևորման յուրահատկությունները, Ա վերջադրական հոլովման դրսևորումը, *ով* դերանվան դիմաց *վով*-ի գործածությունը, *զնալ*, *մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերը, ներգոյականի իմաստի արտահայտությունը տրական հոլովով, որոշիչ հոդի դրսևորման որոշ յուրահատկություններ, անձնական դերանունների տրականում *իկ* հավելվածի դրսևորումը և այլն: Հետաքրքրական է, որ Մակուի խոսվածքի՝ Կոտայքի մարզի դրսևորումներում արձանագրվել են ընդամենը երկու հատկանիշներ, որոնք չեն դիտվել նույն խոսվածքի՝ Գեղարքունիքի մարզի դրսևորումներում: Խոսքը վերաբերում է օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի ե/է ձևին Քաղսիի խոսվածքում և բայի անցյալի ձևերի առաջին դեմքում *ւ* հավելվածի առկայությանը, որ դիտվել է Ալափարսի, Քաղսիի և Գառնու խոսվածքներում: Նկատելի է, որ դիտարկվող խոսվածքները էական զանազանություններ չունեն, տարբերակված հարաբերություններ երևան չեն բերում: Որոշ առումով առանձնանում են Քաղսիի և Գառնու խոսվածքները. առաջինը՝ օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի յուրահատուկ ձևով, հպականի՝ քմայնացմամբ հպաշփականի վերածվելով, երկրորդը՝ *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությամբ և հարակատարի *ուկ* վերջավորությամբ:

Մեսրոպյան Հ., Բուսանունները «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում»

(հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ ինչպես գրական լեզվի, այնպես էլ բարբառների բառագիտության կարևոր խնդիրներից է բառապաշարի իմաստային խմբերի քննությունը: Հայերենի բարբառների բուսանունների և հարակից բառաշերտի առանձնացումը և

ուսումնասիրությունը կարևոր է հայերենի ընդհանուր բառագիտության զարգացման համար:

Հայերենի բարբառները շատ հարուստ են բուսանուններով և հարակից իմաստ արտահայտող բառերով: Դրանք առանձնացվում են մի քանի եղանակով՝ որպես հիմք ունենալով երեք կարևորագույն աղբյուրներ. 1) «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» տեսական և գործնական դրույթներ, 2) բարբառային գրավոր նյութեր (տպագիր և ձեռագիր), 3) հարցումներ բարբառակիրներից և գրույցներ նրանց հետ:

Հոդվածում ներկայացված են «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» ընձեռած լայն հնարավորությունները բուսանունները առանձնացնելու և դասակարգելու առումով:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գրանցված խոսվածքային միավորներում առկա բուսանուն իմաստային խմբին պատկանող բառերն ու դրանց առնչակից լեզվական միավորները, բարբառային օրինակները:

«Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում» բավականին ընդարձակ տեղ գրավող բուսանուններին և հարակից բառապաշարին առնչվող նյութը կարելի է բաժանել երկու հիմնական մասի. ա) բառային զուգաբանությունների միջոցով ուղղակիորեն ներկայացված բուսանուններ, բ) քերականական և հնչյունական զուգաբանություններով՝ անուղղակի ներկայացված բառեր:

ա) «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» առաջին՝ «Բառային զուգաբանություններ» բաժնում առանձին կետերով տրված բուսանուն և հարակից բառապաշար նշող լեզվական միավորները 44-ն են:

Որպես օրինակ բերված են *ձնծաղիկ* և *երեքնուկ* ծաղկանունների բարբառային համարժեքներից մի քանիսը: Ի տարբերություն գործուն բառապաշարի մաս կազմող *վարդ*, *մանուշակ*, *մեխակ*, *կակաչ* և այլ ծաղկանունների՝ *ձնծաղիկ* և *երեքնուկ*

բաղադրյալ կազմություններն աչքի են ընկնում բարբառային բազմաթիվ հոմանիշներով և հնչյունական զուգաձևություններով: Երբեմն միևնույն բառաձևը բարբառներից մեկում արտահայտում է ձնծաղիկի, մյուսում՝ երեքնուկի իմաստ:

«Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» «Հասկացական–բառանվանողական զուգաբանություններ» բաժնում բուսանուններին վերաբերող ամեն մի բառահոդված ևս ընդգրկված է համապատասխան նախադասության մեջ, որը, անշուշտ, որոշ դեպքերում կարևոր է բառապաշարի՝ դիտարկվող շերտն ամբողջացնելու համար: Նախադասությունները ոչ միայն կոնկրետացնում են բուսանուն հասկացության իմաստը, այլև հնարավորություն են տալիս պարզելու տվյալ հասկացության համար օգտագործվող բառի կիրառության ոլորտները:

Քերականական և հնչյունական զուգաբանությունների բաժնում նույնպես, անուղղակիորեն տեղ են գտել բուսանուն նշող բառեր:

Ծրագրի ամեն մի հոդված բարբառային համապատասխան հատկանիշի ուսումնասիրության բնագավառում կատարված աշխատանքների՝ գիտական բարձր մակարդակով կատարված համառոտությունն է: Բայց և չնայած խիստ համառոտությանը՝ զուգաբանությունների սկզբունքի հետևողական գործադրումը բնականաբար երբեմն հանգեցրել է լրացվող օրինակների կրկնության:

Բուսանուն նշող բառերը հնչյունական տարբերակներից բացի աչքի են ընկնում հայերեն և փոխառյալ բազմաթիվ հոմանիշներով: Սահմանային գոտիներում, ուր առավել ուժեղ է այլալեզու հարևանների հետ շփումը, բառապաշարում նկատելի է այդ լեզուներից կատարած փոխառությունների գերակշռություն:

Մի շարք բուսանուններ ծրագրում ներկայացված չեն: Այնուամենայնիվ, բարբառագիտության զարգացման արդի մակարդակով ստեղծված ծրագիրը, որում հաշվի է առնված ուրիշ լեզուների համանման հարցարանների փորձը, հետագա բոլոր բարբառագի-

տական աշխատանքների հիմքն է: Այն մեծապես օժանդակում է բուսանուն նշող բառաշերտի ամբողջացմանը:

Մեսրոպյան Հ., Սյունիքի մարզի բարբառային ընդհանուր պատկերը (հոդված)

Հոդվածում նշվում է, որ Հայր Ղևոնդ Ալիշանը Սյունյաց աշխարհը բնութագրելիս արժևորում է սյունեցիների անգիր ավանդը, նաև բանավոր հաղորդակցության լեզուն՝ Սյունիքի տարածաշրջանին բնորոշ բարբառներն ու խոսվածքները: Ուշագրավ են անվանի լեզվաբանների տեսական եզրահանգումները Սյունիքի մարզի տարածքում գործածվող բարբառային խոսքի մասին: Վկայաբերված են Ստեփանոս Սյունեցու, Ա. Ղարիբյանի, Ա. Գրիգորյանի, Ն. Վարդապետյանի, Ա. Մարգարյանի, Գ. Ջահուկյանի տեսակետները *Սյունիքի // Սյունյաց բարբառ, Ղարաբաղի բարբառի Ջանգեզուրի ենթաբարբառ, Գորիսի ենթաբարբառ* կամ *Գորիսի խոսվածք* բարբառագիտական եզրերի, նաև բարբառային առանձնահատկությունների մասին: Ըստ այդմ՝ Սյունիքի և Ղարաբաղի բարբառները սերում են մի միասնական մայր բարբառից և նրա երկու առանձին ճյուղերն են, որոնք իրենց պատմական զարգացման ընթացքում ձեռք են բերել տարբեր առանձնահատկություններ և ինքնորոշվել իբրև ինքնուրույն ու անկախ բարբառներ:

Հոդվածագիրը նկատում է, որ ի տարբերություն ՀՀ մյուս մարզերի, որտեղ հանդիպում են և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցության բարբառներ, Սյունիքի մարզը լեզվական առումով համասեռ է և հաղորդակցվում է միայն արևելյան ճյուղի բարբառներով: Բացառապես արևմտահայերով բնակեցված գյուղեր չկան, ուստի չկան և արևմտյան բարբառներ: Միսիանի Տոլորս ներգաղթած մշեցիները, Ախլաթյանի վանեցիները, Գորիսի Խոտ գյուղը հիմնադրած խութեցիները և այլ արևմտահայեր ժամանակի ընթացքում կորցրել են մայրենի բարբառները:

Սյունիքի մարզում գործածվող բարբառներն ու խոսվածքները դասակարգված են ըստ տարածագործառականության և բարբառային հիմնական հատկանիշների: Առկա է 4 հիմնական խումբ. ա) *Ղարաբաղի բարբառի խոսվածքներ*, բ) *բարբառային տարրերով հարուստ ժողովրդախոսացական հայերեն*, գ) *պարսկահայ խոսվածքներ* և դ) *գործածության նեղ շրջանակ ունեցող բարբառային կղզյակներ*: Մարզում տարածագործառական առումով գերակայում է Ղարաբաղի բարբառը՝ Սիսիանի, Գորիսի, Կապանի խոսվածքներով:

Սիսիանում, բացի բնիկներից, կան Ղարաբաղից, Նախիջևանից, Պարսկահայքից եկածներ, 20-րդ դարավերջին՝ Ադրբեջանից տեղահանված հայեր, որոնց խոսվածքներն իրենց ուրույն կնիքն են դրել շրջանի հարափոփոխ լեզվի վրա: «Ազգագրական հանդեսի», նաև մարզի բարբառակիրների հաղորդած տվյալների հիման վրա հողվածագիրը եզրակացնում է, որ Սյունիքի տարածքի բնակիչների գերակշիռ մասը բնիկ է. կան նաև Պարսկահայքից և Հայաստանի այլ վայրերից եկածներ: Սյունիքի տարածքային լեզվական հիմնական տարբերակը պատկանում է բարբառների արևելյան խմբակցությանը: Այն ներառում է Ղարաբաղի, Հաղրութի, Կարճևանի, Կաքավաբերդի, Ագուլիս-Մեղրիի, Խոյ-Մարաղայի բարբառների տարբեր խոսվածքներ: Որոշ վայրերում հաղորդակցության լեզուն նաև Արարատյան և Ղարաբաղի բարբառների լեզվական հատկանիշներ պարունակող խոսակցական հայերենն է:

Մեսրոպյան Հ., Հայերենի բարբառները Ակսել Բակունցի ստեղծագործություններում (հոդված)

Ակսել Բակունցի լեզուն գեղարվեստական խոսքի բարձրարվեստ դրսևորում է: Նրանում հմտորեն միաձուլված են գրական հայերենը և մեր լեզվի արևելյան և արևմտյան տարածքային տարբերակներից մի քանիսի լեզվական իրողություններ: Բակունցը կարծում է, որ լեզվաշինարարության խնդիրներում առար-

կաներ անվանելիս դժվարությունների ենք հանդիպում, և այսպիսի դեպքերում պետք է ելակետ ունենալ ժողովրդական բարբառը: Որպես Սյունյաց աշխարհի բարբառակիր զավակ՝ Բակունցի մայրենի լեզուն Ղարաբաղի բարբառի Գորիսի խոսվածքն էր, որը լեզվամտածողական ողջ համակարգով և կառուցվածքով ընկած է նրա արձակի հիմքում: Բարբառային իրողությունների և գրական հայերենի հմուտ միաձուլմամբ ստեղծված է բարձրամակարդակ մի խոսքարվեստ, որը բնորոշվում է *Բակունցի լեզու* տերմինով:

Բակունցի բոլոր ստեղծագործություններում գործածված են Գորիսի խոսվածքին բնորոշ լեզվական կառույցներ, բառապաշարային միավորներ, երբեմն նաև հնչյունական իրողություններ:

Բակունցյան բարբառաբանությունները հողվածում ներկայացված են մի քանի խմբով. ա) բարբառային հնչյունական իրողություններ, բ) բարբառային քերականական իրողություններ, գ) բառապաշարային իրողություններ, գ) օտարաբանություններ դ) բարբառային դարձվածքներ, շրջասություններ, հարադիր այլ կազմություններ:

Բարբառային հնչյունաբանությանը Բակունցը մոտենում է զգուշորեն: Նա հիմնականում շրջանցում է բարբառային հնչյունափոխական օրենքները, քանի որ կտուժեր գեղարվեստական խոսքը: Այդ իսկ պատճառով մեծանուն արձակագիրը հնչյունափոխված սակավաթիվ օրինակներ է միայն բերում:

Բարբառային քերականական իրողություններից նշված են գոյականի հոլովման, հոգնակիակազմության, բայի ժխտական խոնարհման ետադաս և բայական այլ ձևերը:

Բակունցի ստեղծագործություններում մեծ թիվ են կազմում ժողովրդախոսակցական բառաշերտին բնորոշ հայերեն բառերը: Հետաքրքրական են նաև գրական հայերենին բնորոշ բառերի հնչատարբերակները և տվյալ տարածքին բնորոշ իմաստափոփոխակները:

Բակունցի ստեղծագործություններում կան արևելյան լեզուներից փոխառություններ, որոնցում որոշակի թիվ են կազմում հատկապես թուրքերենի միջոցով անցածները: Օտար բառերը հաճախ ածանցվում կամ բառաբարդվում են հայերենի բառակազմական օրենքների համաձայն: Կան նաև թուրքերենի բառակազմական առանձնահատկություններով կերտված բառեր: Պայմանավորված ժամանակի մեծապետական պահանջներով՝ Բակունցը խոսքը ոճավորելու նպատակով անհրաժեշտաբար գործածում է նաև ռուսերեն և ռուսերենի միջոցով անցած նորագույն փոխառություններ: Կան ռուսերեն նախադասություններ, որոնց հայերեն համարժեքները ասելիքը կդարձնեին արհեստական և անհաղորդ: Նման խոսքային միավորները թերևս մեկ այլ գրողի գրչի տակ դիտարկվեին որպես անհարկի ներամուծություններ, սակայն Բակունցի ստեղծագործություններում դրանք պատճառաբանված են և անթերի կերպով միաձուլված են խոսքին:

Բարբառային դարձվածքները, շրջասությունները, հարադիր այլ կազմությունները հղկելով՝ Բակունցը նոր շունչ է հաղորդում բարբառային խոսքին բնորոշ հուզաարտահայտչական միջոցներին: Բակունցի ստեղծագործություններում գեղարվեստական խոսքի բարձրակարգ հմտությամբ հրաշալիորեն միաձուլված են գրական հայերենն ու բարբառը: Տաղանդաշատ գրողի բարձրարվեստ գրչի ներքո բարբառային հնչերանգ են ձեռք բերում անգամ գրաբարյան մի շարք բառակապակցություններ:

Նշված բարբառաբանություններից բացի՝ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ամփոփման ենթարկված անձնանուններն ու մականունները, որոնք յուրահատուկ են Գորիսի տարածաշրջանին: Նման հատկանունները հիմնականում բաղադրյալ կառույցներ են, որոնց բաղադրիչներից մեկը հաճախ փոխառություն է կամ բարբառաբային լեզվական միավոր: Առկա են նաև տեղանունների բարբառային ձևեր և հնչյունական տարբերակներ: Հնչյունական և բառապաշարային լեզվական իրողություններից բացի՝ ուշագրավ են իմաստային անցումներն ու բարբառային խոսքին հատուկ փոխաբերացումները: Բակունցի ստեղ-

ծագործություններում ըստ տեղվույն գործածված են նաև ժողովրդական խոսքի մաս կազմող առած-ասացվածքներ, օրինության և անեծքի բանաձևեր, դարձվածային միավորներ և բարբառային նկարագրական արտահայտություններ, որոնք ոճավորում և պատկերավորում են գրողի լեզուն: Ակսել Բակունցի ստեղծագործություններում հանդիպում են բազմաթիվ բարբառաբանություններ արևելյան խմբակցության Ղարաբաղի բարբառի Գորիսի ենթաբարբառից, Արարատյան բարբառի Քանաքեռի և Լոռու, Ղարաբաղի բարբառի Գանձակի ենթաբարբառի Ղազախի խոսվածքներից և արևմտյան խմբակցության Կարնո, Մասունի, Վանի, Արաբկիրի, Խարբերդ-Երզնկայի, Մուշի բարբառներից:

Մեսրոպյան Հ., «Խունկ» հասկացության բարբառային համարժեքները (հոդված, հրապարակվել է անգլերեն)

Հոդվածում ներկայացվում են *խունկ* հասկացության անվանումները, հայերենի տարածքային տարբերակներում առկա հընչյունական, բառակազմական, հոմանշային և լեզվաարտահայտչական այլ համարժեքներ: Որպես ծիսական արարողության կարևոր բաղադրիչ նշող լեզվական միավոր՝ *խունկ*-ը հատկանշում է կրոն և հավատք և քրիստոնյա հանրության գործուն բառապաշարի մաս կազմում: Հայերենի բարբառներում այն՝ որպես գրական փոխառություն, հիմնականում առկա է հնչյունական տարբերակներով: Նկատվում են նաև հոմանիշներ, նկարագրական արտահայտություններ, դարձվածային կազմություններ: *Խունկ* բառը երբեմն *մոմ* ձևափոխությամբ միավորի հետ կազմում է բարդություններ, բառակապակցություններ, առած-ասացվածքներ և ժողովրդախոսակցական այլ բանաձևումներ:

Վարդանյան Ա., Հյուսիսային Գողթնի միջբարբառը Նախիջևանի բարբառային համապատկերում (հոդված)

Հոդվածում կարևորվում է Նախիջևանի տարածքի բարբառների ամբողջական ուսումնասիրությունը, քանի որ, ընդգրկելով պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի Գողթն և Նախճավան, Այրարատ աշխարհի՝ Շարուր, Սյունիք աշխարհի՝ Ճահուկ և Երնջակ գավառները, լինելով տարբեր ազգագրական շրջանների խաչմերուկ, բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային տեղաշարժերի, տարածքն առանձնացել է բարբառային խիստ բազմազանությամբ:

Հոդվածում ներկայացվում են Նախիջևանի բարբառները ըստ հայ բարբառների ավանդական միահատկանիշ դասակարգման՝ Նախիջևանում առկա էին հայերենի բարբառների «ուս» և «լիս» ճյուղերի բարբառներ, ըստ որում՝ «լիս» ճյուղին պատկանում էին Խոյի և Մարաղայի բարբառները, իսկ տեղաբնիկ բարբառները պատկանում էին «ուս» ճյուղին: Տարածքում առկա էին ինչպես երկաստիճան ձայնեղագուրկ, այնպես էլ եռաստիճան և քառաստիճան բաղաձայնական համակարգերով բարբառներ, ըստ որում՝ քառաստիճան համակարգ ուներ միայն Ջուղայի բարբառը, որում կային ձայնեղներ, խուլեր, շնչեղ խուլեր և շնչեղ ձայնեղներ, եռաստիճան՝ Արարատյան և Ագուլիսի բարբառները (ձայնեղներ, խուլեր և շնչեղ խուլեր), թեև Ագուլիսի բարբառ համարվող Ցոնայի ենթաբարբառը վերոհիշյալ մյուս բարբառների (Արցախ-Սյունիքի, Ճահուկ-Վալքի, Հյուսիսային Գողթնի, Խոյի և Մարաղայի) նման ուներ բաղաձայնների երկաստիճան ձայնեղագուրկ համակարգ (խուլեր և շնչեղ խուլեր):

Նշվում է նաև, որ ըստ Գ. Ջահուկյանի՝ հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման՝ տարածքի բարբառները պատկանում էին հայերենի բարբառների արևելյան խմբակցության արևելյան կամ Ագուլիս-Մեղրու (Ագուլիսի, Հյուսիսային Գողթնի), հարավ-արևելյան կամ Խոյ-Մարաղայի (Խոյի, Մարաղայի), հյուսիս-արևելյան կամ Արարատյան (Արարատյան) և ծայր

հյուսիս-արևելյան կամ Արցախ-Շամախու (Սյունիք-Արցախի) բարբառախմբերին:

Հեղինակը ներկայացնում է Նախիջևանի տարածքի վերջին չուսումնասիրված բարբառային միավորը՝ պատմական Գողթն գավառի Ռամիս, Փառակա, Բիստ, Մեսրոպավան, Ողոհի (նախկինում՝ նաև Խուրստ) գյուղերի՝ լեզվական բավական սերտ առնչություն ներկայացնող խոսվածքախումբը, որը հեղինակը քննել է վերջին տարիների իր ուսումնասիրություններում՝ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման սկզբունքի կիրառմամբ: Հատկանիշների տարբերությունների ցածր մակարդակը (ընդամենը 5,5-9,5 միավորի) վկայում է, որ Հյուսիսային Գողթնի հինգ խոսվածքները կարող են դիտվել միևնույն բարբառի կամ միջբարբառի խոսվածքներ. սա համապատասխանում է Գ. Ջահուկյանի սահմանած 0,5-22 միավորի տարբերություններով միջակայքին:

Այնուհետև բազմահատկանիշ դասակարգման նույն սկզբունքներից ելնելով՝ Հյուսիսային Գողթնի խոսվածքախմբի՝ հարակից բարբառների նկատմամբ դիրքը ճշտելու նպատակով այս խոսվածքների ընդհանրացված-միջին բարբառային հատկանիշները (գուգարանությունները) համեմատվում են հարակից բարբառների հատկանիշների հետ: 100 հայտնի բարբառային հատկանիշների համեմատության արդյունքները վկայում են, որ Հյուսիսային Գողթնի խոսվածքախումբն ամենամերձավոր առնչություն ունի ինչպես Արցախ-Սյունիքի բարբառի (տարբերությունները կազմում են 21,5 միավոր, որը գրեթե խոսվածքից բարբառի անցման սահմանն է), այնպես էլ Մեղրու բարբառի (տարբերությունները կազմում են 23 միավոր) և Ագուլիսի բարբառի (տարբերությունները՝ 25 միավոր) հետ:

Հատկանիշների նմանօրինակ մերձավորությունները հեղինակին թույլ են տալիս եզրահանգելու, որ Հյուսիսային Գողթնի խոսվածքը միջբարբառ է հայ բարբառների արևելյան խմբակցության Արցախ-Շամախու կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառ-

ռախմբի Արցախ-Սյունիքի բարբառի և Ագուլիս-Մեղրու կամ արևելյան բարբառախմբի Մեղրու և Ագուլիսի բարբառների միջև:

**Վարդանյան Ա., Հյուսիսային Գողթնի խոսվածքների
ձևաբանական առանձնահատկությունները (հոդված)**

Հոդվածում առաջին անգամ քննվում են պատմական Գողթն գավառի հյուսիսային մասն ընդգրկող Բիստ, Մեսրոպական, Ողոհի, Ռամիս, Փառակա գյուղերի խոսվածքները, որոնք հատկանիշներով առանձնանում են շրջակա բարբառներից և լեզվական բավական սերտ առնչություն են ներկայացնում:

Հեղինակը նշում է, որ նախորդ ուսումնասիրություններում քննվել են նշված խոսվածքների հնչյունական առանձնահատկությունները, և պարզվել է, որ ըստ Գ. Զահուկյանի բազմահատկանիշ դասակարգման սկզբունքների աղյուսակի առաջին 50՝ հնչյունական հատկանիշների՝ հիշյալ խոսվածքները միմյանցից տարբերվում են նվազագույնը՝ 3 և առավելագույնը՝ 6,5 միավորով: Հատկանիշների նման մերձավորությունը վկայում է, որ հնչյունաբանորեն Հյուսիսային Գողթնի հիշյալ խոսվածքները կարող են դիտվել միևնույն բարբառի կամ միջբարբառի խոսվածքներ:

Նպատակ ունենալով ճշտել Հյուսիսային Գողթնի հիշյալ հինգ գյուղերի խոսվածքների մերձավորությունը նաև ձևաբանական հատկանիշների առումով՝ հեղինակը կատարել է ոչ միայն խոսվածքների ձևաբանական հատկանիշների համեմատական քննություն, այլև կրկին կիրառել է Գ. Զահուկյանի բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը՝ ըստ ձևաբանական հատկանիշների:

Հոդվածում անդրադարձ է կատարվում խոսվածքների մի շարք ձևաբանական ընդհանրությունների և առանձնահատկությունների՝ գոյականի հոգնակի թվի կազմություն, անվանական և դերանվանական հոլովման համակարգեր, խոնարհման համակարգ:

Ներկայացվում են խոսվածքների ձևաբանական հատկանիշները՝ ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման աղյուսակի երկրորդ 50 կետերի. ձևաբանական հատկանիշների համեմատությամբ խոսվածքների հատկանիշները միմյանցից տարբերվում են նվազագույնը՝ 1 և առավելագույնը՝ 4,5 միավորով:

Հեղինակը եզրակացնում է, որ և՛ հնչյունաբանական, և՛ ձևաբանական առումներով դրսևորած նման մերձավորությամբ այս խոսվածքախումբը կարելի է անվանել Հյուսիսային Գողթնի բարբառի կամ միջբարբառի խոսվածքներ:

Վարդանյան Ա., Ճահուկ-Վայքի միջբարբառի տարածման պատմական սահմանները (հոդված)

Հոդվածը նվիրված է հայ բարբառների արևելյան խմբակցության հյուսիսարևելյան բարբառախմբի Արարատյան, Ջուղայի և Արցախ-Սյունիքի բարբառների միջև միջակա դիրք գրավող Վայոց ձորի կամ Ճահուկ-Վայքի միջբարբառի տարածման պատմական սահմաններին:

Նշվում է, որ արդի վիճակով միջբարբառն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի, Աղավնաձոր, Արփի, Գնդեվազ, Գնիշիկ, Խաչիկ, Կեչուտ, Հորս, Չիվա, Ռինդ, Վերին Ագնաբերդ գյուղերը, մասնակիորեն՝ նաև նույն մարզի Ջերմուկ քաղաքը և Եղեգիս գյուղը, այսինքն՝ մարզի բնակչության մոտ 20 տոկոսը: Մինչև 1988 թ. միջբարբառի տարածման սահմաններում էր նաև Նախիջևանի միակ խոշոր հայաբնակ բնակավայրը՝ պատմական Նախճավան գավառի Ագնաբերդ գյուղը, իսկ մինչև 1970-ականները՝ նաև պատմական Ճահուկ գավառի Օծոփ գյուղը: Խոսվածքի և մերձակա բարբառների միջև աշխարհագրական և լեզվական մերձավորությունների համընկնման փաստը հաստատում է միջբարբառի տեղաբնիկ լինելու իրողությունը:

Հեղինակը հողվածում մեջբերում է միջբարբառի տեղաբնիկությունը հաստատող՝ Վայոց ձորի և հարակից տարածքների միջնադարյան վիմագիր արձանագրություններում և ձեռագրերի հիշատակարաններում արտացոլված բարբառային խոսքի որոշ օրինակներ, նշում, որ XIV-XV դդ. այդ հիշատակություններում բազմաթիվ բառեր ու բառակապակցություններ ակնհայտ աղերսներ ունեն ներկա խոսվածքի համապատասխան բառերին ու բառակապակցություններին, ներառյալ տարածքի տեղանունները, անձնանունները և այլն: Նշվում է, որ նախքան շահաբբասյան բռնագաղթը Վայոց ձորի միջբարբառը տարածման առավել ընդգրկուն սահմաններ է ունեցել, որի ապացույցներից են Երևանի մերձակայքում գտնվող Չոլմակչի գյուղում 1679 թ. երկրաշարժից հետո ճահուկ գավառի Նորս գյուղից վերաբնակված և բնակավայրը Նորք վերանվանած հայերի խոսվածքի՝ հնչյունական, բառապաշարային և ձևաբանական հատկանիշների բազմաթիվ ընդհանրություններ Հյուսիսային Նախիջևանի և Ճահուկ գավառի տեղաբնիկ բնակավայրերի (Ազնաբերդ, Օծոփ) խոսվածքների հետ:

Հեղինակը համանման եզրակացության է հանգել նաև ծանոթանալով նույն տարածքի Ղարաղուշ գյուղից և Ճահուկ ավանից XVIII դ. Թուրքիայի Բոլու քաղաք տեղափոխված կաթոլիկ հայերի խոսվածքներին, որոնք կրկին բազմաթիվ հնչյունական, բառապաշարային և ձևաբանական հատկանիշների ընդհանրություններ են դրսևորել Նախճավան և Ճահուկ գավառների տեղաբնիկ խոսվածքների հետ:

Ընդհանրացնելով այս փաստերը՝ հեղինակը եզրակացնում է, որ անցյալում Վայոց ձորի միջբարբառը ընդգրկել է ոչ միայն Վայոց ձոր և Ճահուկ գավառները, այլև Նախճավան և Շարուր գավառների հյուսիսային հատվածները. ենթադրությունն ունի նաև պատմական հիմք՝ XII-XV դդ. հզորացած Օրբելյանների Սյունյաց իշխանության գոյությունը և նրա կենտրոնական գավառ Վայոց ձորի շուրջ մերձակա գավառների բնակչության լեզվական, մշակութային և տնտեսական համախմբման հանգամանքը: Այս նկատառումով էլ հեղինակը նպատակահարմար է համարում նախկին-

նում *Վայոց ձորի միջբարբառ* անվանված եզրույթը վերանվանել *Ճահուկ-Վայքի միջբարբառ*:

Վարդանյան Ա., «Զոկ» ցեղանվան ստուգաբանությունը (հոդված)

Հոդվածը նվիրված է հայերենի ամենաառանձնահատուկ բարբառներից մեկի՝ Ագուլիսի բարբառը կամ զոկերենը կրող *զոկ* ցեղանվան ստուգաբանությանը: Բարբառն ընդգրկում էր պատմական Գողթն գավառի հարավային մասի բնակավայրերը՝ Վերին Ագուլիս ավանը, Ներքին Ագուլիս, Տանակերտ, Ցոնա, Քաղաքիկ, Դիսար, Հանդամեջ գյուղերը: Բարբառի վերջին մի քանի տասնյակ կրողները 1989 թ. բռնագաղթեցին զոկերի արդեն միակ բնակավայրը դարձած Ցոնա գյուղից: Հեղինակը ներկայացնում է *զոկ* ցեղանվան ծագման և ստուգաբանության վերաբերյալ ուսումնասիրողների կարծիքները:

Ա. Ղարիբյանը այս ցեղանունը բխեցրել է սկյութների *սակ* ցեղանունից՝ հիմք ընդունելով Նիկողայոս Մառի կարծիքը, ըստ որի՝ զոկերի և սկյութների ցեղանունները կապ ունեն միմյանց հետ:

Ք. Պատկանյանը, սակայն, այն տեսակետն է հայտնել, որ *զոկ* ցեղանունը ընդամենը մականուն է՝ առաջացած բարբառում կիրառվող *հոկ* (*ոկ*), *դոկ*, *նոկ* (այս, այդ, այն) դերանունների՝ *զ* նախդրով *զհոկ* (*զոկ*), *զդոկ*, *զնոկ* ձևերից: Այս տեսակետը պաշտպանել են նաև Ս. Սարգսյանցը, Ա. Այվազյանը:

Վերջին վարկածի կապակցությամբ հոդվածագիրը նկատում է, որ *զոկ* անվանումը իրականում ոչ թե այլոց կողմից Ագուլիսի բարբառը կրողներին տրված մականուն է եղել (ինչպես *ախսպարը* կամ *հոսհոսը*՝ արևմտահայերին), այլ ցեղանուն, որով առաջին հերթին հենց իրենք՝ բարբառը կրողներն են ինքնանվանվել: Վերջինիս վկայությունն են, օրինակ, այն փաստերը, որ Թիֆլիսում անցյալ դարասկզբին լույս տեսնող զոկական պարբերականը կրել

է «*Ձօկի ճրօյգը*» խորագիրը, Ագուլիսի բարբառով պահպանված բանահյուսական նմուշներում և գրական ստեղծագործություններում գողթնեցիները բացառապես *գոկէր* են անվանվել, իսկ իրենց բնօրրանը՝ *Ձոկստուն*:

Հեղինակը ներկայացնում է գոկերի ինքնանվանման ծագման վերաբերյալ Մ. Աբեղյանի առաջարկած վարկածը, ըստ որի՝ *գոկ* ցեղանունն առաջացել է մարաց առասպելական թագավոր Ածղա-հակի անվան *Ձոհակ* ձևից: Այս վարկածը պաշտպանել են Լեոն, ինչպես նաև Ս. Ումառյանը:

Հաշվի առնելով այն, որ իրանական լեզուների շարքին դասվող մարերենից չի պահպանվել գրավոր որևէ հիշատակություն (հայտնի են միայն սակավաթիվ բառեր), իսկ իրանական լեզուները ներկայացնում են լեզվական սերտ առնչություն, հեղինակը փորձել է համեմատել Ագուլիսի բարբառի և մարերենին ցեղակից լեզուների որոշ հատկանիշներ: Ագուլիսի բարբառում չկա *ա* > *ու* հնչյունափոխություն, այն առկա է, սակայն, *ն*, ինչպես նաև *ւ* որն-գայիներին նախորդող դիրքերում (*ան* > *ուն*, *ամ* > *ում*): Այս երեւոյթը բնորոշ է, օրինակ, պարսկերենի Թեհրանի բարբառին: Ագուլիսի բարբառին բնորոշ են նաև հին հայերենի *ու*-ի դիմաց միավանկ բառերում *օ*-ի առկայություն (*ու* > *օ*), *ու*-ի դիմաց *օ*-ի առկայություն (*օ* > *ու*): Այս երևույթները, խիստ բնորոշ են նաև իրանական լեզուներին՝ դարիին, տաջիկերենին: Ագուլիսի բարբառին բնորոշ է նաև *ա* > *օ* հնչյունափոխությունը: Սա համեմատելի է դասական պարսկերենի *ա*-ի դիմաց ժամանակակից պարսկերենում և դարիում՝ շրթնային *ա*-ի, իսկ տաջիկերենում և օսերենում՝ *օ*-ի առկայության երևույթի հետ: Բառավերջում՝ ձայնավորից և *ն* ձայնորդից հետո *գ*, *կ*, *ք* բաղաձայնները վերածվում են իրենց քմային տարբերակներին (*գ*, *կ*, *ք* > *գ'*, *կ'*, *ք'*): Այս երևույթը, թեև բնորոշ է նաև Վանի, Շատախի, Խոյի և հարակից այլ բարբառներին, այնուամենայնիվ, խիստ բնորոշ է պարսկերենին: Հեղինակը նշում է, որ Ագուլիսի բարբառին բնորոշ է նաև հին հայերենի պարզ ձայնավորների երկբարբառայնացման երևույթներ, մասնավորապես՝ *հ* և *է* ձայնավորի դիմաց առկա է *այ* երկբարբառը: Իրա-

նական լեզուներում նույնպես տեղի են ունեցել հնչյունափոխության համանման երևույթներ: Այս և այլ հատկանիշների համեմատությամբ, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ բարբառում *Ձահակ* (*Ձոհակ*) հատուկ անունը զոկերենում կարող էր դառնալ *Ջրհոկ*, ինչպես հազար > *հրզզնր*, դժուար > *դրժնր*, դողալ > *դղղղոլ*, երևալ > *ըրվնլ*, կրակ > *կ'ըրոկ*//*գ'ըրոկ* և այլն, համեմատելով առկա բոլոր ենթադրություններն ու վարկածները, հիմք ընդունելով հատկապես պատմահայր Մովսես Խորենացու վկայությունն ու անվանի հայագետ Մ. Աբեղյանի կարծիքը, ուսումնասիրելով բարբառի ընձեռած նյութը, իրանական լեզուների հետ ակնհայտ հնագույն առնչությունները, հեղինակը առավել հավանական է համարում զոկերի ցեղանվան (ինքնանվանման)՝ Աժդահակ-Ձոհակի անունից բխելու վարկածը՝ նշելով, որ այն, անշուշտ, ընդամենը խոսում է հինավուրց հայկական այս ցեղում որոշակի մարական շերտի ներթափանցման պատմական հիշողության մասին:

Վարդանյան Ա., Հայերենի բարբառների մանկական բառապաշարը (հոդված)

Հոդվածում կարևորվում է մանկական խոսքի, մանկական բառապաշարի հետազոտումը, որը լեզվաբանության, մասնավորապես հոգելեզվաբանության յուրահատուկ խնդիրներից է: Նշվում է, որ լեզվաբանական գրականության մեջ թեև կան հայերենի մանկական խոսքի ուսումնասիրությանը նվիրված առանձին աշխատանքներ, այնուամենայնիվ, թե՛ դասական բարբառագիտական ուսումնասիրություններում, թե՛ ժամանակակից հեղինակների աշխատանքներում բարբառների մանկական բառապաշարի ուսումնասիրությանը հատուկ ուշադրություն չի դարձվել. սոսկ սահմանափակվել են բառացանկում կամ շարադրանքում բառանմուշների արձանագրմամբ կամ հպանցիկ անդրադարձով: Բացառություն են անցյալում և մեր օրերում հրապարակված սակավաթիվ հոդվածներ:

Նշվում է, որ մանկական լեզուն, բնականաբար, չունի քերականություն, դրան բնորոշ չեն նաև հոդառությունը, հոլովումն ու խոնարհումը: Աճառյանը մանկական լեզվի բառապաշարը բաժանում է գոյականների, ածականների և բայերի: Հոդվածագիրն ավելացնում է նաև ձայնարկությունները, քանի որ ձայնարկությունների հիմքով ստեղծված մանկական բառերը շարունակում են կիրառվել նաև որպես սոսկ ձայնարկություններ: Նշվում է նաև, որ երեխայի խոսքի մեջ ձևաբանական, ինչպես նաև շարահյուսական իրողությունների հստակ սահմանազատումներ չկան, միևնույն բառը կարող է կիրառվել ոչ միայն որպես գոյական կամ ածական, այլև որպես բայ:

Հեղինակը կարևորում է նաև մանկական լեզվի բառերի առաջացման ձևերի հստակեցումը և խմբավորում հայերենի բարբառների մանկաբառերի առաջացման հիմքերը: Ուսումնասիրելով հայերենի տարբեր բարբառների մանկական բառապաշարը՝ առանձնացնում է հետևյալ խմբերը՝ ըստ դրանց առաջացման հիմքերի՝ ձայնարկություններից և բնաձայնություններից առաջացած բառեր, բարբառային բառերի կրճատված-պարզեցված տարբերակներ՝ դրանք բաժանելով ենթախմբերի (մեծերի ստեղծած, մանուկների՝ ոչ լիարժեք արտասանության հետևանքով ստեղծված բառերի ենթաշերտ) և առանձին ուսումնասիրության արժանի, ըստ երևույթին՝ հայերենի բառապաշարի ավելի հին շերտերի բառեր:

Վերջին խմբին հեղինակը դասում է հնդեվրոպական արմատական բառերից բխող, ինչպես նաև հայերենին ցեղակից լեզուների (խեթերեն, պարսկերեն, ռուսերեն և այլն) համապատասխան բառարմատների հետ համեմատելի մի շարք բառեր:

Հոդվածագիրը եզրակացնում է, որ բարբառների մանկաբառերն ամփոփում են լեզվական հետաքրքիր իրողություններ, ուստի բարբառագիտական աշխատանքներում անհրաժեշտ է հնարավորինս մանրամասնորեն անդրադառնալ նաև առանձին ուսումնասիրության արժանի այս միավորներին:

Դ. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

2020 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Գրիգորյան Ս. Ս., Հականիշ բառերի ոճական կիրառությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզության» Ամառան հատորում, «Ջահուկյանական ընթերցումներ», միջազգային գիտաժողովի նյութեր Ե., 2020, էջ 160-067:
2. Թադևոսյան Հ. Ս., «Կենդանիների անվանումներով ախտանունները «Բժշկարան ձիոյ» երկում (XIIIդ.)», «Արդի հայերենագիտության խնդիրներ», գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 81-95:
3. Խաչատրյան Վ. Ս., Գոյականի հոգնակիակազմության որոշ հարցեր արդի հայերենում, ՀԱՊՀ «Լրաբեր», մաս III, «Ճարտարագետ», Ե., էջ 822-829:
4. Խաչատրյան Վ. Ս., Հունաբանության դրսևորումներ Ղ. Փարպեցու երկերում, «Արդի հայերենագիտության խնդիրներ» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 108-11:
5. Հովհաննիսյան Լ. Շ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի բառակազմական հնաբանությունները, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2020, էջ 17-25:
6. Հովհաննիսյան Լ. Շ., Իրանական փոխառությունները Գ. Ջահուկյանի աշխատություններում, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2020, էջ 160-167:
7. Հովհաննիսյան Ն.Գ., Հարադիր բայեր նույնանիշների ձեռագիր բառարաններում, «Էջմիածին», Զ, էջ 69-89:

8. Հովհաննիսյան Ն. Գ., Բառակապակցություններ և արտահայտություններ նույնանիշների ձեռագիր բառարաններում, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2020, էջ 107-117:
9. Մխիթարյան Գ. Ս., Հայերեն-ուրարտերեն լեզվական առնչությունների հարցի շուրջ, «Արդի հայերենագիտության խնդիրներ» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 169-183:
10. Мхитарян Г. М., Древние музыкальные инструменты в армянском переводе библии, «Լեզու և խոսք-2» գիտական հոդվածների էլեկտրոնային ժողովածու, Ե., 2020, էջ 106-113:
11. Սիրունյան Ս. Ղ., Մանուկյան Ս. Գ., «Սահման քերականութեան». առաջին հունալատինատիպ քերականությունը (ԺԷ.Դ.), «Բանբեր Մատենադարանի», 29, Ե., 2020, էջ 81-110:
12. Սիրունյան Ս. Ղ., Մանուկյան Ս. Գ., «Ուշ շրջանի մի քանի քերականական զրուցարաններ (ԺԸ-ԺԹ, դ.). դրանց բնույթը և աղբյուրները», «Պատմաբանասիրական հանդես», 2, Ե., 2020, էջ 147-155:

Հրատարակվել է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» երկի բնագրի փոխադրությունը. Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց» (բնագրից փոխադրությունը՝ Ս. Գրիգորյանի), Ե., 2020, 1010 էջ:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

Գ. Տաթևացի, «Գիրք հարցմանց»

(բնագրից փոխադրությունը՝ Ս. Գրիգորյանի)

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» երկի բնագրից փոխադրությունը կատարվել է՝ նկատի ունենալով երկի հանրագիտական բնույթը, փիլիսոփայական, կրոնական, աստվածաբանական,

մանկավարժական, սոցիալ-տնտեսական և այլ տարաբնույթ հարցերի խորիմաստ արծարծումները:

**Գրիգորյան Ս., Հականիշ բառերի ոճական կիրառությունները
Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզության» Ամառան հատորում
(հոդված)**

Հոդվածում ուսումնասիրվել են ոչ միայն «Գիրք քարոզութեան» Ամառան հատորը, այլև այդ հատորի վերջում գետեղված Հովհան Ռրոտնեցու հիշատակին գրված ներբողյանը («Նորին Գրիգորի Ներբողեան ողբերգաբար սգեալ ի թաղումն տիեզերալոյս վարդապետին իւրոյ Յօհաննու Ռրոտնեցոյ»), որն ի թիվս ոճական հնարքների բազմազանության, աչքի է ընկնում հականիշների բացառիկ գործածությամբ:

Հոդվածագիրը նշում է, որ Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորի վերջում գետեղված Հովհան Ռրոտնեցու հիշատակին գրված ներբողյանում հականիշ բառերի կիրառությունները կօգնեն ուսումնասիրողներին ընկալելու դրանց ընդհանրություններն ու տարբերությունները արդի կիրառությունների համեմատությամբ, նկատելու նաև փոփոխություններն ու զարգացումները: Գ. Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորում նույնպես հականիշների կիրառությունը անհատական և ինքնատիպ է: Հականիշների առատությունը Ներբողյանում պայմանավորված է այն հանգամանքով, որ Տաթևացին Ներբողյանը շարադրել է հակադրություններ կառուցելու ճանապարհով (սպասելին-անսպասելին, լինել-չլինելը, փնտրել-չգտնելը, արժանիքները-դրանց հանկարծահաս չգոյությունը և այլն):

**Թադևոսյան Հ., Կենդանիների անվանումներով ախտանունները
«Բժշկարան ձիոյ» երկում (XIII դ.) (հոդված)**

Հոդվածում ներկայացվում և քննվում են XIII դ. *ստեղծված «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»* ձեռագրական ձեռնարկում կիրառված այն ախտանունները, որոնք բաղադրված են կենդանիների անվանումներով և մատնանշում են կենդանիների (այդ թվում և մարդուն), մասնավորապես ձիուն, վերաբերող մի շարք հիվանդություններ: Նշվում է, որ միջին հայերեն գրված տվյալ բժշկարանը Սմբատ Գ-ի հրամանով (1296-1268) կազմել է ասորի բժիշկ Ֆարաջը, որին ձեռագիրը գրելիս օգնել է Թորոս քահանան:

Ըստ հեղինակի՝ նշված երկում արձանագրված են առաջին անգամ կամ եզակի վկայությամբ գործածված բազմաթիվ բառեր, որոնց մի ստվար մասը կազմում են բժշկական բառանունները՝ ախտանուններ, բուսանուններ, դեղանուններ:

Հոդվածում քննվում է տարբեր կենդանիների անվանումներով կազմված տասնմեկ նոր ախտանունները, որոնք չեն հանդիպում գրաբարյան մատենագրության մեջ և գործուն կիրառությամբ աչքի են ընկնում հենց *«Բժշկարան ձիոյ»*-ում (քննվող ախտանուններից վեցը կիրառվել են նաև այլ բժշկարաններում): Վերջիններս արժևորվում են իբրև փոխառյալ տերմինների հայերենաստեղծ համարժեքներ, որոնք ստեղծվել են մեր լեզվի բառակազմական եղանակներով, բայց հիմնականում կրում են կա՛մ փոխատու լեզվի, կա՛մ մեր ժողովրդական մտածողության կնիքը: Ախտանունները ներկայացվում են երեք խմբով՝ *խմաստային փոխառություններ, կաղապարային փոխառություններ և ժողովրդահոսակցական փոխառություններ*:

Առաջին խմբում քննվում են այն կենդանանունները, որոնք այլ լեզուների հետևողությամբ կիրառվել են նաև իբրև հիվանդության տեսակ՝ ստանալով համապատասխանաբար նոր իմաստներ: Երկրորդ խմբում ընդգրկվել են արաբերենից բառացի թարգմանված *կենդանանուն + ցավ* («հիվանդություն» նշանակությամբ)

կադապարով պատճենված ախտանունները: Երրորդ խմբում ներկայացվում են փոխառյալ տերմինների հայերեն համարժեք կազմությունները, որոնք ծագմամբ ժողովրդախոսակցական են և հիմնականում արտահայտելով ժողովրդական մտածողությունը՝ առավելապես բնորոշ են բարբառներին:

Հոդվածագրի հավաստմամբ՝ «Բժշկարան ձիոյ» երկում կիրառվել են կենդանիների անվանումներով բաղադրված տասնմեկ ախտանուններ, որոնցից մի քանիսը գործածվել են միայն տվյալ բժշկարանում, իսկ մնացյալը գործուն կիրառությամբ հանդիպում են նաև միջնադարյան մյուս բժշկարաններում: Նշվում է, որ վերջիններս բոլորն էլ միջնադարում ունեցել են բժշկական տերմինի արժեք, պահպանվել և որոշակի տարբերակներով իբրև բժշկական տերմին արձանագրվել են նաև ժամանակակից հայերենի բացառական բառարաններում:

Խաչատրյան Վ., Գոյականի հոգնակիակազմության որոշ հարցեր արդի հայերենում (հոդված)

Հոդվածում նշվում է, որ արդի գրական արևելահայերենում թեև գործում են գոյականի հոգնակիակազմության որոշ կանոններ, բայց և շատ բառերի դեպքում հոգնակիակազմիչները դեռևս հստակ և կանոնակարգված չեն: Դրանով պայմանավորված՝ համապատասխան բառարաններում և աշխատություններում որոշ գոյականների համար տրված են բոլորովին տարբեր հոգնակերտներ: Այսպիսով՝ հատկապես քննվել են գոյականի հոգնակիակազմության այն դրսևորումները, որոնք շեղվում են ընդհանուր օրինաչափությունից: Զուգաձևության առկայության պարագայում առաջարկվել են ընդունելի ձևերը: Նաև նկատի է առնվել, որ որոշ դրսևորումներ ուղենշում են բնականոն փոփոխությունների ընթացքը:

Նշվում է նաև, որ *m* և *h* ձայնավորներ ունեցող միավանկ բառերի հոգնակի թվի կազմության ժամանակ հաճախ տվյալ ձայ-

նավորը պահպանելու կամ փոխելու խնդիր է առաջանում: Այդպիսի բառերում կա՛մ պահպանվում է նշված ձայնավորը, կա՛մ շեշտափոխության հետևանքով վերածվում է *ը*-ի: Շատ են նաև այն դեպքերը, երբ նման բառերի հոգնակին զուգահեռաբար դրսևորվում է *և՛* արմատի ձայնավորի պահպանմամբ, *և՛* փոփոխությամբ: Հաճախ դժվար է լինում որոշել՝ որն ընդունելի համարել՝ հնչյունի պահպանումով, թե՞ փոփոխությամբ դրսևորումը: Հետևաբար այդպիսի հարցերը հստակեցման կարիք ունեն, ուստի հոդվածագիրն առաջարկում է իր մոտեցումները՝ նշելով, որ պետք է որոշել ճիշտ տարբերակները և բացառել զուգաձևությունների առկայությունը գրական լեզվում:

Հեղինակը նկատում է, որ մի շարք դեպքերում թեև անհոդակապ երկվանկ բաղադրությունների երկրորդ գոյականական բաղադրիչը բառի կազմում պահպանել է իր հիմնական իմաստը, սակայն հոգնակին կազմվում է միայն *-ներ*-ով կամ նաև վերջինով կազմվելու միտում է նկատվում, ինչպես՝ *նախերգներ, մարգպետներ, մոզպետներ, դերբայներ, չվերթներ, շքերթներ*: Հոդվածագիրը նշված իրողությունը բացատրում է նրանով, որ բաղադրիչներն առավել սերտորեն են կապված: Օրինակ, եթե հոդակապով բարդություններում սովորաբար գիտակցվում է հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը, ինչպես՝ *ածխահոր, հանքահոր*, ապա անհոդակապ բարդություններում չի գիտակցվում, ուստի վերջիններս դիտվում են որպես սովորական բազմականկ բառեր՝ ստանալով *-ներ* հոգնակերտը: Այս իրողությունը ընդունելի չի համարվում և առաջարկվում է նման բառերի հոգնակին կազմել *-եր*-ով, քանի որ գոյականական միավանկ բաղադրիչը պահպանել է իր իմաստային ինքնուրույնությունը:

Անդրադառնալով նաև մի շարք այլ բառերի հոգնակիակազմությանը՝ հոդվածագիրը եզրակացնում է, որ հոգնակի թիվը կազմելիս պետք է հաշվի առնել միավանկ գոյականական վերջնաբաղադրիչների իմաստի պահպանումը կամ չպահպանումը, բաղադրիչի ինքնուրույն գործածվելու կամ չգործածվելու հանգամանքը, բաշխականության դրսևորումը և այլն:

Խաչատրյան Վ., Հունաբանության դրսևորումներ Ղազար Փարպեցու երկերում (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ Ղ. Փարպեցին ստեղծագործել է V դարի վերջերին՝ ճիշտ այն շրջանում, երբ հունարենը սկսել էր զգալի ազդեցություն գործել հայերենի վրա: Վկայակոչելով այն փաստը, որ հունաբան դպրոցի ամենալուրջ և կարևորագույն քայլը հունարենի հետևողությամբ հայերենի բառակազմական հնարավորությունների ընդլայնումն է, հոդվածագիրը նախ անդրադառնում է հայերենի բառարմատների՝ հունարենի նախամասնիկներին համարժեք գործածությանը և դրանց դրսևորմանը Փարպեցու երկերում: Նկատվում է, որ ուսումնասիրողները առանձնացնում են տարբեր հունաբան նախածանցներ:

Հունաբանության դրսևորում է բարդ բառերի բաղադրիչների՝ հայերենին ոչ հատուկ այնպիսի շարադասությունը, որ վերջին բաղադրիչն է ստորադաս նախորդին և ոչ թե հակառակը, որը բխում է հայերենի բառակազմական ընդհանուր օրինաչափությունից: Այսպիսով՝ հունաբան կազմություններ են բառարանային տվյալներով միայն Փարպեցու վկայությամբ *ջնջագիր* և *սարահարթ* բառերը: Հունարեն բնագրերի և հայերեն թարգմանությունների անմիջական համեմատությունը Գ. Մուրադյանին թույլ է տրվել արձանագրել հունաբանության տարաբնույթ դրսևորումներ: Դրանցից որոշ իրողություններ արտացոլված են նաև Փարպեցու գործերում, ինչպես՝ ժխտական *ան-* մասնիկով սկսվող՝ ապառնի-*ելի-*ով դերբայները որպես հունարեն բայածականների համարժեք՝ *անապականելի, անկարծելի, անմեղադրելի, անհատատալի*:

Հունաբանություն են նաև ածականներից զանգվածաբար կերտված մակբայները հունարեն *-ος*-ին համարժեք *-բար* կամ *-պես* վերջածանցներով: Այդպիսի բազում օրինակներ կան նաև Փարպեցու գործերում: Չենք կարող ժխտել, որ գրաբարյան տեքստերում տվյալ ածանցներով մակբայների կիրառությունը սովորական տպավորություն կարող է գործել այսօրվա ուսումնասիր-

րողի վրա, քանի որ երևույթը փոխանցվել է ժամանակակից գրական հայերենին: Մինչդեռ ածականական-որոշային գործածությունը միանգամայն արհեստականության և օտարության երանգ է հաղորդում: Իսկ Փարպեցու երկերում բավական շատ են նման կիրառությունները և հատկապես *-պէս* վերջածանցով օրինակները: Հունաբանության դրսևորումներ են անորոշ դերբայով և *-ութիւն* ածանցով կազմությունները:

Անշուշտ, հայերենը գրավոր ավանդույթի սկզբից ի վեր ազդվել է հունարենից, ուստի և շատ բառեր ու բառաձևեր են կազմվել հունարենի հետևողությամբ: Դրանցից որոշ իրողություններ մինչև օրս պահպանվել են, իսկ շատերը ժամանակի ընթացքում մերժվել են:

Հովհաննիսյան Լ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի բառակազմական հնաբանությունները (հոդված)

Բարբառի բառակազմական հնաբանությունների բացահայտումը, բնականաբար, պահանջում է գրաբար-բարբառ համապատասխան իրողությունների զուգադրական քննություն: Նպատակահարմար չհամարելով անդրադառնալ գրաբար-բարբառ բոլոր զուգադրիպումներին, որոնք կարող է ամբողջ մենագրության նյութ լինել, հոդվածագիրն առանձնացնում է էական մի քանի զուգահեռներ. ա. նախդրավոր կազմություններ (գ, ընդ, ի նախդիրներով բառեր), բ. կալ, հաք արմատներով կազմված բառեր:

Հոդվածում նշվում է, որ հիշյալ արմատներով կազմությունները բնորոշ են եղել և են հայերենին: Գրաբարյան զուգահեռի առկայությունը բնավ չի ենթադրում, որ բարբառային համապատասխանակը գրաբարի միջոցով է տարածվել. նման կարգի բառերը բարբառում գործածվել են նախագրային շրջանից, բարբառում ստեղծվել են նոր բառեր, որոնց համապատասխանակները գրաբարում չկան կամ վկայված չեն:

Հեղինակն առանձնացնում է նաև հնաբանության այլ դրսևորումներ: Հետազոտությունը փաստում է, որ բարբառում մի

քանի բառեր (արմատներ) գրաբարի համեմատությամբ դրսևորում են որոշակի իմաստային, բառակազմական առանձնահատկություններ, որ դարձյալ հիմք է տալիս դրանք հնաբանություն համարելուն: Օր. գրաբարի այգ «առավոտ» բառը բարբառում պահպանվել է *ինքնահող / ինքնվրդ* բաղադրության մեջ՝ «թաղման հաջորդ օրը ննջեցյալի գերեզմանին այցի գնալ»: *Թերթ* (բույսի մաս, տերև, թերթ) բարբառում առանց *թ* -ի է. պուխկաթեր «բողկի տերևը», սկաթեր «ճակնդեղի տերևը»: Բարբառային *թեր* -ը ավելի հին է (հ.-ե. *pter):

Հեղինակը եզրակացնում է, որ բարբառի բառակազմական հնաբանությունները նախագրային շրջանի իրողություններ են, և մանրագնին քննության դեպքում հնարավոր է բացահայտել բառակազմական այլ հնաբանություններ:

Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունների քննությունը Գ. Ջահուկյանի աշխատություններում (հոդված)

Հոդվածում նշվում է, որ հայ-իրանական լեզվական աղերսները հազարամյակների պատմություն ունեն: Առաջին գրավոր վկայությունները հայերենում արձանագրված են արդեն V դ. հայ մատենագրության մեջ: Իրանական ծագում ունեցող բառերի առաջին քննություն-մեկնություններն էլ կատարել են V դ. մատենագիրները: Հայերենի իրանական բառաշերտի գիտական քննություն կատարվել է համեմատական լեզվաբանության կազմավորման (XIX դ. սկիզբ) և զարգացման ամբողջ գործընթացում:

Հեղինակը նշում է, որ իրանական փոխառությունները ուսումնասիրության սկզբնական շրջանում մեծ դեր են խաղացել եվրոպական համեմատաբան-հայագետները: Նպատակահարմար չհամարելով անդրադառնալ ու գնահատել բոլոր գիտնականների ներդրումը՝ հեղինակն անդրադառնում է հատկապես Հ. Հյուբշմանին, որը գիտականորեն հիմնավորել է հայերենի իրանական լեզու չլինելը՝ միաժամանակ ներկայացնելով փոխառությունների

ավելի մեծ ցանկ: Հայերենի իրանական փոխառություններ հասկացությունը շրջանառության մեջ է մտել դարձյալ Հյուբշմանի կողմից:

Նշվում է, որ հայերենի իրանական փոխառությունների, լեզվաքերականական աղերսների հարցը տարբեր տեսանկյուններից, տարբեր մոտեցումներով ու սկզբունքներով շարունակում է մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այդ բնագավառի բազմակողմանի, համակարգային քննություն կատարել են մեծագույն գիտնականներ Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը:

Գ. Ջահուկյանը քննել է հայերենի իրանական փոխառություններին վերաբերող տարաբնույթ հարցեր, կատարել նոր ստուգաբանություններ, պարզել փոխառության բուն աղբյուրը:

Համեմատական լեզվաբանության, իրանագիտության նորագույն տվյալներով և հայերենի պատմական զարգացման առանձնահատկությունների նաև իր առաջարկած մեթոդներով հիմնավորել և առաջադրել է հնագույն և վաղնջական շրջաններում կատարված փոփոխությունները: Ընդունելի համարելով գիտնականի այս դիտարկումը՝ հեղինակը կարծում է՝ պատմահամեմատական լեզվաբանության նոր տվյալներով կարող են և հաստատվել իրանական փոխառություններ համարվող որոշ բառերի բնիկ հայերեն լինելը:

Հովհաննիսյան Ն., Հարադիր բայեր նույնանիշների ձեռագիր բառարաններում (հոդված)

Հոդվածը վերաբերում է XVIII դ. ավանդված ձեռագրերում ամփոփված՝ նույնանիշ բառերի բառարաններում առկա հարադիր բայերին:

Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններից հոմանիշների ձեռագիր բառարաններին առնչված լեզվաբանների հավաստմամբ՝ դրանց «... հնությունը հասնում է XII դարը, բայց վերաբերում է ավելի վաղ շրջանի»: Հետևաբար են-

թաղրելի է, որ XVIII դ. ավանդված՝ նույնանիշ բառերի ձեռագիր բառարանները նույնպես կարող են վերաբերել «ավելի վաղ շրջանի», այսինքն՝ մինչ գրաբարի բառարանները կազմելը կամ, թերևս, դրանց զուգահեռ: Քննությունից պարզորոշ է դառնում, որ հարադիր բայերը քաղվել են հայ թարգմանական և ինքնուրույն մատենագրությունից. հայ մատենագրության գիտակ բառարանագիրները դրանք ձեռագիր բառարանների մեջ են ներառել հավանաբար նաև ուսուցողական նպատակով:

Նշվածը փաստարկելու համար նույնանիշների ձեռագիր բառարաններում առկա հարադիր բայերը ներկայացվում են՝ ըստ ամենավաղ վկայության, հետևյալ դասակարգումներով՝

Աստվածաշնչում վկայված հարադիր բայեր.

բնագրային օրինակներում վկայված հարադիր բայեր.

հարադիր բայեր՝ վկայված տարբեր բառարաններում (XVIII դ. և XVIII դ. հետո հրատարակված). առանձնացվում են նաև վկայվածների նմանությամբ բաղադրվածները:

Արձանագրվում է, որ հարադիր բայերից շատերը փոխաբերական իմաստավորումներով ձեռք են բերել դարձվածային արժեք՝ վերածվելով դարձվածային միավորների:

Հովհաննիսյան Ն., Բառակապակցություններ և արտահայտություններ նույնանիշների ձեռագիր բառարաններում (հոդված)

Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններից «Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանի բառաշարքը քննող հետազոտողների կարծիքով՝ «.....երբեմն հոմանիշությունը արտահայտվում է ոչ թե մի առանձին բառով (հոմանիշով), այլ ամբողջական բառակապակցության միջոցով, նկարագրական եղանակով.....»:

Հոդվածում նշվում է, որ արձանագրված երևույթը նկատելի է նաև XVIII դ. ավանդված նույնանիշների ձեռագիր բառարաններ-

րում, որոնցում որոշակիորեն առանձնացող բացատրական երանգով բառակապակցություններն ու արտահայտությունները հիմնականում եզրափակում են նույնանիշ բառերի բառաշարքերը՝ ասես ամփոփելով դրանք:

Նշվում է նաև, որ բառարանագիրները կամ գրիչներն այդ բառակապակցություններն ու արտահայտությունները քաղել են հայ թարգմանական և ինքնուրույն մատենագրությունից և ձեռագիր բառարանների մեջ ներառել ամենայն հավանականությամբ նաև ուսուցողական նպատակով:

Նույնանիշ բառերի՝ XVIII դ. ձեռագիր բառարանների՝ «ավելի վաղ շրջանից» ավանդված լինելը փաստարկելու համար բառակապակցությունները և արտահայտությունները ներկայացվում են՝ ըստ ամենավաղ վկայության, հետևյալ դասակարգումներով՝ *Աստվածաշնչում վկայված բառակապակցություններ և արտահայտություններ.*

բնագրային օրինակներում վկայված բառակապակցություններ և արտահայտություններ.

բառակապակցություններ և արտահայտություններ՝ վկայված տարբեր բառարաններում (XVIII դ. հրատարակված և XVIII դ. հետո հրատարակված):

Արձանագրվում է, որ տվյալները քաղելու հնարավորություն է ընձեռել «Գրահավաք» կայքի «Հայերեն բնագրերի առցանց շտեմարան»-ի հայերեն բառեր որոնելու հարթակը:

Մխիթարյան Գ., Հայերեն-ուրարտերեն լեզվական առնչությունների հարցի շուրջ (հոդված)

Հոդվածում քննվում են Գ. Ջահուկյանի հայերենագիտական ժառանգության մեջ ուրույն տեղ զբաղեցնող հայերենի համեմատական ուսումնասիրության և հնդեվրոպաբանությանն առնչվող բազմաթիվ հարցեր: Դրանց հիմքում հնդեվրոպական, խուռա-ուրարտական և կովկասյան լեզուների փոխհարաբերության քնն-

նությունն է, նաև՝ այդ լեզվաընտանիքների միջև գոյություն ունեցող հեռավոր ցեղակցության կապերի բացահայտումը: Հայերենի տարածքային դիրքի ճշգրտմանը զուգընթաց՝ Գ. Ջահուկյանը հանգամանալից քննության է ենթարկում հայերենի և Առաջավոր Ասիայի հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուների առնչությունները՝ հստակ տարբերակելով դրանց միջև եղած ծագումնաբանական ընդհանրությունները փոխառություններից և այլ կարգի ազդեցություններից: Այս տեսանկյունից առանձնանում են հայերենի և ուրարտերենի, հայերենի և հայասերենի, հայերենի և այլ հնագույն լեզուների ծագումնաբանական ընդհանրություններին նվիրված հետազոտությունները՝ ընդգծելով այն խորը ազդեցությունը և ցեղակցական ու ժառանգորդական կապը, որ ունեցել են հայասերենը և ուրարտերենը հայերենի բառապաշարի վրա: Հեղինակը նշում է, որ այդ լեզուներով վկայված բառերի հետազոտությունը և հայերենի հետ հնարավոր ընդհանրությունների բացահայտումը բացառիկ կարևոր նշանակություն ունի հայերենի կազմավորման ընթացքի, այդ լեզուները կրող ժողովուրդների մշակութային տարբեր շերտերի վերականգնման համար: Հոդվածագիրը նշում է, որ ամենևին սահմանափակ չեն ուրարտագիտությանը մատուցած՝ Գ. Ջահուկյանի ծառայությունները, և մեկ հոդվածի շրջանակներում, բնականաբար, անհնարին է անդրադառնել ականավոր գիտնականի՝ ուրարտագիտությանը վերաբերող աշխատանքներում արժարժված բոլոր հարցերին: Այդ պատճառով հեղինակը սահմանափակվել է սոսկ այն կարևորագույն նորույթներով, որոնք նպաստել են ուրարտագիտության առաջընթացին: Նշվում է, որ Գ. Ջահուկյանը ուրարտերենի աղբյուրներին անդրադառնում է հայերենի և խեթա-լուվական լեզուների բառային զուգադիպումները քննելիս, հայերենի և փյոյուգերենի մերձավոր ցեղակցության հարցերին անդրադառնալիս, իսկ «Ուրարտերենը և հնդեվրոպական լեզուները» հետազոտության մեջ, բացահայտելով ուրարտերենի բառապաշարում և քերականական կառուցվածքում առկա հնդեվրոպական տարրերը, եզրա-

կացնում, որ ուրարտերենը ակնհայտ ցեղակցական կապերի մեջ է եղել հնդեվրոպական լեզուների հետ: Գ. Ջահուկյանը գրում է, որ ուրարտացիների դարավոր համակեցությունը հայերի հետ, նրանց ձուլվելը որոշակի հիմքեր էին նախ՝ փոխառությունների, ապա՝ առշերտային, այնուհետև՝ ենթաշերտային ազդեցության համար:

Հայերենի և ուրարտերենի լեզվական առնչություններում առանձնացվում է ուրարտերենից փոխառյալ բառերի շերտ, որոնք վերաբերում են ռազմական արշավանքներին, ջրանցքների կառուցման աշխատանքներին, կրոնական ծեսերին, զոհաբերություններին: Ուրարտերենը կարևոր դեր է կատարել հայերենի հատուկ անունների կազմավորման գործընթացում: Ըստ Գ. Ջահուկյանի՝ Հայաստանի շատ տեղանունների հիմքում ուրարտական հասարակ անուններն են: Ի դեպ, հիշյալ ընդհանրությունները արգասիք են պատմական այն հանրահայտ իրողության, որ հնդեվրոպալեզու հայերը վաղուց ապրել են Ուրարտուի տարածքում և շրջակա երկրներում: Ուստի ամեննին պատահական չէ ուրարտերեն բառերի առկայությունը հայերենում և հակառակը՝ հայերեն բառաշերտը ուրարտերենում: Ինչպես նշում է հեղինակը, միշտ չէ, որ տեղանունների ընդհանրությունը կամ հարատևությունը վկայում է լեզուների ազգակցական կապի մասին, բայց ուրարտա-հայկական առնչությունները այդ տեսանկյունից բավական խոսուն են: Հայերենագիտության համար կարևոր նշանակություն ունի տեղանունների ուրարտերեն տառադարձության և դրանց հայերեն համարժեքների համեմատությունը, որը որոշակի օրինաչափություններ է բացահայտում հայերեն-ուրարտերեն լեզվական առնչությունների քննության հարցում: Խոսքը վերաբերում է հատկապես հատուկ և հասարակ անունների ուրարտա-հայկական հնչյունական համապատասխանություններին:

Չի բացառվում նաև, որ ուրարտական արձանագրություններում այսօր էլ լինեն բառեր ու բառաձևեր, որոնք ժամանակի ընթացքում տեղիք տան մասնագետների կողմից տարբեր մեկնաբանությունների: Հեղինակը եզրակացնում է, որ հայերեն-ուրար-

տերեն լեզվական առնչություններն ավելին են, քան փոխազդեցությունը: Ժամանակագրական, տարածքային, տեղանվանական, մշակութային և լեզվական անառարկելի փաստերը վկայում են հոգուտ Ուրարտուի հայկականության:

Մխիթարյան Գ., Հնագույն նվագարանները հայերեն Աստվածաշնչում (հոդված, հրատարակվել է ռուսերեն)

Հոդվածում քննվում են Աստվածաշնչում հիշատակված հնագույն նվագարանների անվանումները, նաև մի քանի երաժշտական տերմին ու տերմինային անվանում: Դրանք գործածված են մեծ մասամբ Հին Կտակարանում, երկրորդականոն գրքերում, մասամբ էլ՝ Նոր Կտակարանում: Տարբեր լեզուներով Աստվածաշունչները եբրայերեն բնագրի հետ համեմատելով ու համադրելով՝ հեղինակը նշում է, որ արտաքուստ թեև անվանումները միատարր են և այնքան էլ շատ չեն, բայց բազմազան են ու տարաբնույթ ինչպես քանակական առումով, այնպես էլ իմաստով և կիրառությամբ: Դրանք որոշակի պատկերացում են տալիս հեռավորարևելյան երաժշտարվեստի մասին, նպաստում օտար բառերի որակական դերը, իրական այն հարաբերությունները բացահայտելուն, որոնք առկա են օտար և մայրենի բառապաշարներում: Օտար բառերի դիմաց հայերեն նոր բառերի և իմաստների կիրառությունները ինքնին տալիս են ներլեզվական շատ հարցերի պատասխաններ՝ բացահայտելով երաժշտական ոլորտի բառապաշարի զարգացման ակունքներն ու զարգացման միտումները:

Որոշ դիտարկումներով հեղինակն անդրադարձել է Ս. Գըրքում արձանագրված մի քանի նվագարանների անվանումների՝ համեմատելով այլ լեզուներով կատարված թարգմանությունները:

Նկատվում է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության հեղինակները բնօրինակում գործածվող տարբեր նվագարանների անվանումների դիմաց կիրառել են իրենց և շրջապատին լավ ծանոթ հայերեն անուններ: Մի շարք անվանումների իմաստների վե-

րաբերյալ տրվում են տարբեր, երբեմն էլ իրար լրացնող բացատրություններ: Անվանումների բազմիմաստությունն ու հոմանշությունը վկայում են, որ թարգմանիչների ստեղծած անվանումներից շատերը իրենց ժամանակին որոշակի տարբերակված իմաստ չեն ունեցել և միևնույն հասկացությունն արտահայտելու համար հաճախ կազմել են մի քանի հոմանիշներ:

Հեղինակը չի բացառում նաև այն դեպքերը, երբ հայ հեղինակները Ս. Գիրքը հունարենից թարգմանելիս նկատի են ունեցել փոխառությունների հաճախականությունը և տարածվածությունը, իմաստային առանձնահատկությունները, հոմանիշներ ունենալը կամ չունենալը, հունարեն բառերի՝ սեմական, իրանական լեզուներում տարածված լիները, այսինքն՝ մշակութային ընդհանուր արժեք ունենալը: Աստվածաշնչում արտացոլված նվագաբանների անվանումները ևս արտահայտում են մշակութային, տվյալ դեպքում՝ երաժշտությանը վերաբերող տարաբնույթ հասկացություններ: Վերջիններիս իմաստի և նշանակության վերհանումը կարող է պարզաբանել նաև տվյալ ժողովուրդների պատմական և մշակութային հարաբերությունների շատ կողմեր:

Միրունյան Տ., Մանուկյան Տ., «Սահման քերականութեան» առաջին հունալատինաստիպ մանր քերականությունը (ԺԷ դար) (հոդված)

Հոդվածում նշվում է, որ հեղինակները ուսումնասիրել են «Սահման քերականութեան» աշխատության 24 ձեռագիր օրինակները՝ թվագրված ԺԷ, ապա՝ ԺԸ-ԺԹ դդ. (աշխատության հեղինակը հայտնի չէ): Բնագրի ուսումնասիրության համար հիմք ձեռագիր է ընտրվել ամենավաղ օրինակը՝ ՄՄ 2018, որ գրվել է 1621 թ.: Քերականական նյութը ամբողջացնելու նպատակով ուսումնասիրվել են նաև մյուս 23 ձեռագրերում եղած հավելումները: Նկատի առնելով որոշ տարբերություններ, հատկապես շաղկապների դասակարգման մեջ, ձեռագրերը պայմանականորեն բաժանվել են երկու խմբի:

Նկատի առնելով քերականության տիպը և կառուցվածքը՝ նշվել է, որ «Սահման քերականութեան»-ը հունալատինաստիպ երկ է, քերականության ավանդական պատկերացումները, որոնց հիմքում Դիոնիսիոս Թրակացու քերականությունն է՝ ներառյալ արհեստական կազմությունները, լրացված են լատինաբան նորույթներով, որոնք հիմնականում հայերենին պարտադրված ձևեր են: Քերականության առարկան կամ ըստ վերնագրի՝ «սահման»-ը, հստակորեն տարբերակված է, գլխավոր նյութը զուտ քերականական է, որը ներկայացված է տառից բան աստիճանավորմամբ, այն է՝ հաջորդական՝ մեկը մյուսից սերող մակարդակներով: Աշխատության վերջում՝ իբրև օժանդակ նյութ, «Խրատք ի քերականութիւնն» վերնագրի ներքո տրված են կետադրական տեղեկություններ և մի քանի դիտողություն ուղղագրության վերաբերյալ:

Մանրամասնորեն ուսումնասիրվել են հիշյալ քերականության մեջ նկարագրված բոլոր բաժինները՝ հնչյունաբանությունը, խոսքի մասերը, կետադրությունը և ուղղագրությունը: Այս տեղեկությունները համեմատվել են հունաբան և լատինաբան քերականների աշխատությունների հետ, ըստ այդմ՝ ի հայտ բերելով ընդհանրություններ և տարբերություններ՝ որոշվել են քննարկվող նյութի առանձնահատկությունները՝ ինչպես հասկացական, այնպես էլ տերմինային բնույթի:

Հիմք ընդունելով այս քերականության բնույթը, հունաստիպ և լատինաստիպ ընդօրինակությունները, նոր եզրերի և ըմբռնումների առկայությունը, ինչպես նաև՝ պահպանված գրչագրերի ժամանակը՝ հեղինակները եզրակացրել են, որ «Սահման քերականութեան» երկը XVII դ. նոր շրջանի քերականության առաջնային աղբյուրն է, և այս երկով են սկիզբ առել հունալատինաստիպ քերականությունները:

**Միրունյան Տ., Մանուկյան Տ., Ուշ շրջանի մի քանի ձեռագիր
քերականական գրուցարաններ. դրանց բնույթը և աղբյուրները
(հոդված)**

ԺԸ-ԺԹ դդ. հարցարան-քերականությունների (կատեխեզիս) առանձնահատկությունները որոշելու նպատակով հեղինակներն ուսումնասիրել են Մատենադարանում պահվող ուշ շրջանի՝ այդ ժանրի մի քանի քերականություններ՝ ավանդված ՄՄ 4335, 9616, 9770, 11101 ձեռագրերով:

Ձեռագրերի մանրամասն քննությամբ և բովանդակային բազմաթիվ համընկնումների հիմքով հեղինակները եզրակացրել են, որ ԺԸ-ԺԹ դդ. քերականական հարց ու պատասխանները ընդօրինակված են Մխիթար Սեբաստացու և Միքայել Չամչյանի քերականություններից կամ նշանակալի չափով հենվում են նրանց վրա՝ երբեմն գուգորդելով տեղեկություններ այլ քերականներից:

Հեղինակները, նկատի առնելով, որ հարցարան-քերականություններում ինքնուրույն մեկնաբանությունները, դատողությունները սակավադեպ են և էական չեն, արձանագրել են, որ այս գործերը, ընդամենը սեղմ ձևով վերարտադրելով հայտնի քերականությունները, ստեղծվել են սոսկ սպասարկելու իրենց ժանրային ձևի պահանջները, այսինքն՝ եղած նյութը կաղապարի մեջ դնելու և մատչելի ներկայացնելու համար, ըստ այդմ՝ քերականությունը սխեմավորելու և խրատի պես ավանդելու այս ոճը առհասարակ պետք է դիտել նման երկերի գլխավոր կամ գուցե նույնիսկ միակ արժանիք: